

ԱՐԻ-ԱՐՄԵՅ

ՆՈՐ ԱՆՐՈՒՆԴԻՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՏԱՐԵՑՈՅՑԸ

1916

Ա. ՏՐԲ

059

Ա-87

ՊՈՍԹՈՆ, ՏՊԱՐԱՆ «ԱԶԳ»Ի



06 JUN 2009



# ՅՈՐ ԱՆՔՈՒՆԴԻՆ ՏԱՐԵՑՈՅԵՑ





4-87

ԱՐԻ—ԱՐԱՆՅ

# ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴԻՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

## ՏԱՐԵՑՈՅՑԸ

63033-67



ՍԳԱԻՈՐ ՄԵՐՈՒՆԴԻՆ

ՎՐԷԺԻ ԿԱՐՄԻՐ ՅՈՒՇԱՐԶԱՆԸ

# 1916

ԵՌԱԶԻՆ ՏԱՐԻ



ՊՈՍԹՈՆ

ՏՊԱՐԱՆ «Ա.ԶԳ.»Ի



Ա. ՏԱՐԻ

1916

Ա. ՄԱՍ

Ո՛ տայր ինձ գծուխ ծխանի  
Եւ գԱռաւօտն նաւասարդի,  
գվագելն եղանց եւ գվագելն եղջերուաց,  
Մեք փող հարէաք և գք-մբկի հարկանէաք:  
ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ



ՆՈՐ ԱԵՐՈՒՆԴԻՆ ՏԱՐԵՑՈՂԵՑԸ



ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. (ՍՈՒՐԷՆԵԱՆՑ)  
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





Մ  
Ե  
Ր  
Մ  
Ե  
Ր  
Մ  
Ե  
Ր

## ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Գրեց՝ ՅՐԹ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ,  
(ԱՐԻ ԱՐԱՆՑ)

Իրիկուն է... հեռո՞ւն անգոյն  
Վերջապալը կը մարմերի,  
Հեւաշով իր հոգեւարքի  
Կեանքը առկայծ մոռի մ' հանգոյն.

Աղէր ըրի նա ունի գոյն  
Կարիւնոսին վիս բարձունքներ,  
Բաժանումի ընտ աւրումներ..  
Վերջին իրիկունն է ա՛ղ սարւոյն:

Առուակին ա՛ջ պարզ ու շատկ,  
Հոսակն հանդարտ այլ միշտ անխոնջ,  
Թառաւ ծաղիկ մը դէտ բողբոջ  
Կը բաւալի վար շարունակ:

Հոսակին հետ արագապիս,  
Մերք սուգերով խորն ալեակին  
Տասաներով միշտ շաշաղին՝  
Կ'զգամ որ կեանքս կ'անցնի այսպիս...:

Հոսակն այդ խօշ ու դիւային  
Գընացին հետ իր մըրըրկոտ,  
Իմ երագներս, յոյսերս աղօտ  
Կը սակի արդ սարւոյն հետ հին..

Ու խօշ վագինն այդ հոսակին  
Ժամանակը շուն երկունքով,  
Նոր սարի մը մեզի փութով  
Կը նուիրի ա՛րդ խնդաղին.. :

Արշալոյսիդ, ա՛րդ, Նոր Տարի,  
Շողերն աղուոր՝ յոյսն արփաւեհ  
Զուարթ կեանքիդ արեւին հետ  
Սիրքս սեւեւ միշտ փափաքի..



## ՓՈՒԱՆ ՅԱՌԱԶԱԲԱՆԻ

Ձեռնարկս ու Համակրողներէս Ոմանք

ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄՍ Յ. ՓԱՓԱԶԵԱՆ. — Իսկապէս օգտակար ու աննախընթաց գործի մը ձեռնարկած էք՝ հրատարակելով ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՏԱՐԵՅՈՅՅԸ :

Ամերիկահայը իր ՏԱՐԵՅՈՅՅՆ ունեցած է, բայց ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ իրենը չունի :

Դո՛ւք գայն պիտի նւիրէք անոր, պարագաներու այնպիսի գուգադիպութեամբ մը, որուն մէկ մասը ոչնչացած է, մէկ մասը հերոսական գալարումներու մէջ՝ դէպի Ագատութիւն տանող արեան նամբուն վրայ է, միւս մասը՝ ԵՐԿՈՒՆԲԻՆ, հսկողի դիրքով :

Ձեր տարեցոյցն ուրեմն, երբորդութեան հայելին պիտի ըլլայ կը կարծենք :

Ձեմ գիտեր թէ ովքեր պիտի աջակցին Ձեզի, բայց վստահ եմ թէ բոլորն ալ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ կը պատկանին ու բոլորին նետած ծաղկեփունջերը 1916ի սեմէն ներս, արժանի պիտի ըլլան շարուելու խորանին վրայ այն ՆՈՐԱԳՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅՆ որուն կը պատկանի ապագան . . . :

Ընդունեցէք իմ խնդակցութիւններս

ԼԵՒՈՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՍԻՐԵԼԻ ԱՐԻ-ԱՐԱՆՅ. — Ուրախ եմ որ ձեռնարկած էք օգտակար՝ բայց դժուարին գործի մը, ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ, տարեցոյցը հրատարակելով :

Ամերիկահայ իրականութեան մէջ, ան իր որոշ ազդեցութիւնը պիտի ունենայ տարագիր երիտասարդութեան մէջ, մասնաւորապէս ապագայ նոր սերունդին համար, արթնցնելով իրենց մէջ՝ դէպի հայ գեղարուեստի խտէլ հոգին :

Գրականութեամբ զբաղիլը սիրուն գործ մը նկատեցէք, որքան այդ դժուար ըլլայ ան ու յոգնեցուցիչ :

Քաղաքական ու կուսակցական բանակիւններով տարուած մամուլ մը ունինք, գոնէ Ձեր տարեցոյցը՝ տարին անգամ մը այդ պակասը լրացնող հանգրուանը ըլլայ, իր մէջ պարունակելով գրականութեան պատկանող ամէն նիւթերով աշխատասիրուած ստոք գործեր :

ԼՈՒԹԵՐ ԿՈՐԿՈՏԵԱՆ

## ԱԶՆԻԻ ԲԱՐԵԿԱՄՍ Յ. ՓԱՓԱԶԵԱՆ. —

Շնորհակալութեամբ ստացած եմ Ձեր հրաւեր-նամակը :

Այդ քրտնաջան աշխատութիւնը, որ ինքնաբերաբար յանձն առեր էք, և որ կը յուսամ թէ պիտի յաջողիք իր անուն համապատասխան գործ մը արտադրել շնորհիւ Ձեր երիտասարդ կորովին, խանդին ու յարատև աշխատութեան ոգիին, — ինչ որ հագուագիւտ է, — ինքնին շա՛տ մեծ, վսեմ և գնահատութեան արժանի է :

Այսօր անուրանալի է, որ արիւնի ու արհաւիրքի մղձաւանջին մէջ աչքերը բացած Նոր Սերունդը, վաղուան հայութեան սիւնը, իր իտէլայարազ երազներուն անձնատուր, յագուրդ տալու տենչանքով երբ կը քաշուի տարագրի այս Հօմին մէջ, յանախ ենթակայ բաղդի քնահան ալիքներուն և սուկ ափ մը «առանձնաւորեալ» մարդաց վայելքն ու տիրապետութիւնը յաւերժացնող օրէնքներու, մեծ կարիքն ունի այս ազատ շրջանակին մէջ ազատօրէն հիւսուած գրական, գեղարուեստական, վիպական անգերագանցելի հատորի մը, որուն մէջ կարենայ իր տանջւած, խռոված հոգւոյն ծալքներուն թելերը ներդաւանակել :

«Նոր Սերունդին Տարեցոյցը» ահա՛ պիտի գայ այս պակասը լրացնելու Ամերիկահայ կեանքի մէջ :

«Նոր Սերունդին Տարեցոյցը» Ամերիկահայ Նոր Սերունդին գրական հանոյալի ժամադրավայրը ըլլալով հանդերձ՝ պէտք է ըլլայ նոյնպէս իր հողէն, իր քանդուած օնախէն լեզուապատառ փախստական, օտար այս հանգրուանը շունչ քաշող բանորին, տառապող մեակին մորմոհող ցաւերուն սերմերը փերող, գայրոյթի ակուններուն տակ կուլ տող գործիքը : Անիկա պէտք է ըլլայ նաեակի հրաշալիք մը, գոյնգոյն կերտած մը, ուր ընդելուզուած ըլլան գրականը քաղաքականին, ժպիտը արցունքին, բանաստեղծականը վիպականին, որպէսզի երբ քրտնաքոր աշխատաւորը, մտաւորականը, յեղափոխականը յանձնեն իրենց աչքերուն և մտքին, հաճոյքն ունենան ըմբռնելու այլազան իմաստաբարոյալից բովանդակութիւնը : Վերջապէս «Նոր Սերունդին Տարեցոյցը» պէտք է ըլլայ ամենանրբատաշ և գեղաբանակ տապանաբար դրած Ամերիկահայ լնացած գրականութեան հողաքումբին վրայ, նոր թւականը հիմնաւորելու առողջ գրականութեան մը :

Եւ երբ Նոր Սերունդին մատուցանելիք Ձեր ծառայութեան հետ կը կապուի, կը շղթայաւորուի նաև օժանդակութիւնը տառապող ցեղիս ազատագրութիւնը սողմնաւորող ռազմիկներուն, չեմ կարող հիացմանս հետ չպատաստել նոյնպէս համակրանքս դէպի «Նոր Սերունդին Տարեցոյցը», Ամերիկահայ երիտասարդ սերունդին խոսքն մըտքերը արգասաւորող այդ հոյակապ գործը : Մաղթա՛ւք ներքով՝

1915 Օգոստոս 30 Փրավիտէնս

ՍԻՐՎԱՐԴ



ՍԻՐԵԼԻ ՊՐՆ. ՅՐԹ. ՓԱՓԱԶԵԱՆ

Մեծապէս գնահատելի է ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՏԱՐԵՅՈՅՅԸ հը-  
րատարակելու ձեր ձեռնարկը և ամէն ֆաջալերութեան արժանի :  
Ամերիկահայ ստուար գաղթականութիւնը պէտք ունի և կրնայ պա-  
հել ու յարատեւութիւն տալ այդպիսի ձեռնարկի մը, եթէ սակայն  
տարեցոյցը կարենայ գոհացում տալ անոր փափաքներուն, ըղձակ-  
ներուն և ձգտումներուն :

Վստահ եղէք թէ ձեր ձեռնարկը յաջողութեամբ պիտի պսակուի և  
ձեր վարձատրութիւնը մեծ պիտի ըլլայ, պայմանաւ որ սակայն Տա-  
րեցոյցին էջերուն մէջ տեղ տաք այնպիսի գրութիւններու, որոնք  
պիտի կրնան Հայ գաղթականութեան բարոյականը բարձրացնել ու  
ազնուացնել, անոր սրտին մէջ հայրենասիրութեան կայծը արծար-  
ծել, անոր ընտանեկան կեանքը սրբացնել, և վերջին ահաւոր հարբս-  
տահարութիւններուն հետեւանալով անոր սրտին մէջ ծայր տուած  
անյուսութեան տեղ, ապագայ հայրենիքի մը վստահ ստեղծման ան-  
խորտակելի հաւատքը ներշնչել :

Երբ ձեր Տարեցոյցը սիրուի, անոր հրատարակութիւնը ապա-  
հովուած կ'ըլլայ ուրիշ տարիներու համար ալ և ժողովուրդին սրտին  
մօտիկ նիւթերն են որ սիրելի պիտի դարձնեն գայն :

Յաջողութեան բարեմաղթութիւններով,

Յ. ԾՈՎԻԿԵԱՆ



ՅԱՐԳԵԼԻ ՊՐՆ. ՅՐԹ. ՓԱՓԱԶԵԱՆ. — ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՏԱ-  
ՐԵՅՈՅՅԸ հրատարակելու Ձեր ձեռնարկը խիստ գովելի է, միանգա-  
մայն շնորհաւորելի :

Հայաջինջ այս եղեռնաբեր օրերուն՝ հայրենի օնախէն շատ հեռու,  
օտար հանգրւաններու գրկին մէջ, անյուսութեան վագոյ նժդեհ  
հոգիներուն համար, միտիւրարութիւն առքող նշոյլի մը պէս պիտի  
ըլլայ կարծես տարեցոյցիդ երեւումը : Դէպի փրկարար նամբաներ  
առաջնորդող հսկայ փարոս մը, մասնաւորապէս նուիրուած Նոր-Սե-  
րունդին :

Հայ զանգուածին ցաւերն ու վշտերը մարմնացնելու կոչուած այդ  
հոյակապ գործը, պէտք է շուտով ցոլացնէ իր արդիւնաբեր էջերուն  
մէջ, մեր յոյզերն ու երազները :

Մարդկային վսեմ հոգիներու բարոյական աջակցութեամբը կեր-  
տուած ու գոհողութեան սեղանին վրայ դրուած՝ ձեռնային այդ  
ծաղկեփունջը, ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՏԱՐԵՅՈՅՅԸ, հպարտ իր կոչումի  
արժանիքով, ի յայտ կ'ուզայ մեծ խանդավառութեամբ մը, հիմնա-  
ւորելու համար՝ յառաջդիմութեան նոր քուսակն մը, Նոր Սերունդի  
հոգիներուն մէջ, որը կը յուսամ թէ պիտի գիտնայ ֆաջալերել, ա-  
պահովելով անոր յաջորդ տարիներու հրատարակումը :

Հիացումիս հետ ընդունեցէք մաղթանքներս

ՕՐ. Ս. ՊՐԱԶԻԿԵԱՆ







1916 ՅՈՒՆՈՒՐ 1916

ԲՇ.	ԳՇ.	ԳՇ.	ԵՇ.	ՈՒՐ	ՇՐ.	ԿԻՐ
..	..	..	..	..	1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24	25	26	27	28	29	30
31	..	..	..	..	..	..




1916 ՓԵՏՐՈՒՐ 1916

ԲՇ.	ԳՇ.	ԳՇ.	ԵՇ.	ՈՒՐ	ՇՐ.	ԿԻՐ
..	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	..	..	..	..	..



1916 ՄԱՐՏ 1916

ԲՇ.	ԳՇ.	ԳՇ.	ԵՇ.	ՈՒՐ	ՇՐ.	ԿԻՐ
..	..	1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30	31	..	..



ՋԱՆՈՒ





1916 ԱՊՐԻԼ 1916

ԲՇ.	ԳՇ.	ԳՇ.	ԿՇ.	ՈՒՐ	ՇԲ.	ԿԻՐ
..	..	..	..	..	1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24	25	26	27	28	29	30



1916 ՄԱՅԻՍ 1916

ԲՇ.	ԳՇ.	ԳՇ.	ԿՇ.	ՈՒՐ	ՇԲ.	ԿԻՐ
1	2	3	4	5	6	7
8	9	10	11	12	13	14
15	16	17	18	19	20	21
22	23	24	25	26	27	28
29	30	31	..	..	..	..



1916 ՅՈՒՆԻՍ 1916

ԲՇ.	ԳՇ.	ԳՇ.	ԿՇ.	ՈՒՐ	ՇԲ.	ԿԻՐ
..	..	..	1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	..	..



ԳԱՐՈՒՆ





1916 ՅՈՒԼԻՍ 1916

ԲՇ.	ԳՇ.	ԳՇ.	ԵՇ.	ՄԻԲ	ՇԲ.	ԿԻԲ
..	..	..	..	..	1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24	25	26	27	28	29	30
31	..	..	..	..	..	..




1916 ՕԳՈՍՏՈՍ 1916

ԲՇ.	ԳՇ.	ԳՇ.	ԵՇ.	ՄԻԲ	ՇԲ.	ԿԻԲ
..	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30	31	..	..	..



1916 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1916

ԲՇ.	ԳՇ.	ԳՇ.	ԵՇ.	ՄԻԲ	ՇԲ.	ԿԻԲ
..	..	..	..	..	1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24	25	26	27	28	29	30
31	..	..	..	..	..	..









ՀԱՅԿԱԿԱՆ ՏՕՆԵՐ

Նոր Տարի  
 Օր Ծննդեան  
 Առաջաւորաց Բարեկենդան  
 Բուն Բարեկենդան  
 Չաաիկ  
 Երեման Խաչ  
 Համբարձունք  
 Հոգեգալուստ  
 Վարդալատ  
 Աստուածածին  
 Սուրբ Խաչ  
 Մբ. Գէորգաց Բարեկենդան  
 Գիւտ Խաչի  
 Յիսնակաց Բարեկենդան  
 Ս. Յակոբաց Բարեկենդան

Յունվար 14  
 Յունվար 19  
 Փետր. 13  
 Մարտ 5  
 Ապրիլ 24  
 Մայիս 22  
 Յունիս 2  
 Յուլիս 12  
 Յուլիս 31  
 Օգոստ. 28  
 Սեպտ. 25  
 Հոկտ. 2  
 Նոյ. 6  
 Դեկտ. 4  
 Դեկտ. 25

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՕՆԵՐ

Սևանորթ դերիներու Ազատագրութիւնը  
 Ծնունդ Բենեամին Ֆրանքլինի  
 Ծնունդ Աբրահամ Լինքոլնի  
 Ծնունդ ձորճ Ուոշինգթոնի  
 Հայրենասէրներու Օր (Բէքրիքս Տէյ)  
 Մեռելոց Օր (Տէֆըրէյքըն կամ Մէմօրիըլ Տէյ)  
 Ամերիկեան Ազատութեան Օրը (Փօրթի ալ շուրայ)  
 Աշխատանքի Օր (Լէյպըր Տէյ)  
 Ք. Քոլոմպոս Ամերիկեան կը գտնէ (Քլամպչու Տէյ)  
 Ծնորհակալութեան Օր (Թեֆնգսիվիմկ Տէյ)  
 Մահ ճ. Ուոշինգթոնի

Յունվար 1 1863  
 Յունվար 17, 1706  
 Փետր. 12, 1809  
 Փետր 23, 1732  
 Ապրիլ 19, 1775  
 Մայիս 30  
 Յուլիս 4, 1776  
 Սեպտ. 6  
 Հոկտ. 12, 1492  
 Նոյ. 27  
 Դեկտ. 14, 1799

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՏՕՆ

Մայիս 1 Միակ տօնը բանւորներու :


ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐ

1815 Յունվ. 1 — Աբրահամ Լինքոլն Գերիներու Ազատագրութիւնը կը լայտարարէ :  
 1815 Յունվ. 8 — Նիւ Օրլէանի Պատերազմը :  
 1706 Յունվ. 17 — Պ. Ֆրանքլինի ծնունդը :  
 1809 Փետր. 12 — Աբր. Լինքոլնի ծնունդը :  
 1732 Փետր. 22 — ճ. Ուոշինգթոնի ծնունդը :  
 1770 Մարտ 5 — Պոսթոնի Չարդը :  
 1909 Ապրիլ 6 — Հիւս. Բեւեռ կը հասնի Ռ. Փիլըի :  
 1865 Ապրիլ 9 — Լի անձնատուր կը լլայ :  
 1865 Ապրիլ 14 — Աբր. Լինքոլն կ'սպաննուի :  
 1906 Ապրիլ 18 — Սան Ֆրանչիսքօյի Երկրաշարժը և մեծ հրդեհը :  
 Ապրիլ 19 «Բրիմօզ Տէյ» Անգլիոյ մէջ :  
 1564 Ապրիլ 23 — Ուիլիլմ Շէքսպիլըի ծնունդը :  
 1789 Ապրիլ 30 — ճ. Ուոշինգթոնն Նախագահ կը հռչակուի Միացեալ Նահանգաց :  
 1889 Մայիս 1 — Բանտրական հսկայ շարժում Լօս Անձէլոսի մէջ :  
 1898 Մայիս 1 — Տուէյ կը ջախջախէ Սպանական Նաւատորմիը Մանիլայի առջև :  
 1607 Մայիս 13 — Անգլիական առաջին դաղթականութիւնը կը հաստատուի Ամերիկա :  
 1869 Մայիս 18 — Չար Նիքօլայի ծնունդը :  
 1865 Յունիս 3 — Գէորգ Ե. Թագաւորին ծնունդը :  
 Յունիս 14 — «Ճլէկ Տէյ» Ամերիկայի մէջ :  
 1775 Յունիս 17 — Պընքըր Հիլի Պատերազմը :  
 1815 Յունիս 18 — Ուաթերլօի Պատերազմը :  
 Յուլիս 1 — Քանադայի Իշխանութեան Օրը :  
 Յուլիս 4 — Անկախութեան օր Ամերիկայի :  
 1789 Յուլիս 14 — Պասթիլը կը կործանուի :  
 1898 Օգոստ. 13 — Մանիլա անձնատուր կը լլայ Ամերիկայի :  
 1910 Օգոստ. 28 — Մօնթէնէկոյ թագաւորութիւն կը լլայ :  
 1901 Սեպտ. 6 — Նախագահ Մէքլինլի կ'սպաննուի :  
 1870 Սեպտ. 20 — Իտալացիներ կը գրաւեն Հոովմը :  
 1871 Հոկտ. 8-11 — Շիքակօյի մեծ հրդեհը :  
 1492 Հոկտ. 12 — Քրիստօֆօրոս կը գտնէ Ամերիկան :  
 1872 Նոյ. 9 — Պոսթոնի մեծ հրդեհը :  
 1783 Նոյ. 25 — Անգլիացիներ կը լանձնեն Նիւ Եորք :  
 1805 Դեկտ. 2 — Օսթերլիցի Պատերազմը :  
 1911 Դեկտ. 14 — Ամընտըն Հարաւային Բևեռ կը հասնի :  
 1773 Դեկտ. 16 — «Պոսթոն Թի Բարթի»ն կը կազմուի :  
 1856 Դեկտ. 28 — Ուարո Ուիլսոնի ծնունդը :





ՅԱՐՈՒԹԻՒՆ Դ. ԲԱՓՈՋԻԱՆ (ԱՐԻ-ՅՐԱՆՅ)  
ԷՆՂԻՆԱԿ  
«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ՏԱՐԵՑՈՅՑ»ԻՆ



Ա. ՏԱՐԻ

Գ. ՄԱՍ

1916

ԿՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ



ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՄԲ  
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ, ԳԵՐԹՈՒԱԾՆԵՐ  
ՎԻՊԱԿԱՆ, ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ  
ԳԻՏԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱԲԱՆԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ  
ԵՒ  
ՇԱՀԵԿԱՆ ԱՐՏԱՏՊՈՒՄՆԵՐ  
ԹՐԳԱՀԱՅ  
ԿՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ



ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ




## ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՛վ կուշայ այսպէս խշտակիս շեմին:  
— Բո՛ր դարիպն է, բաց . . . . .  
Կ՛մայփնէ՛ր կանցնին զուրսէն շաշազին,  
— Սո՛վն է դուռնոյ բաց . . . . . :  
Տապա՛րն է ջախջախ դրանս կուրծփին:  
— Զարդն է, դուռնոյ բաց . . . . . :

Շիրակ

Ռ. ՍԵՒԱԿ



ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ԱՂՕԹԻԸ

Ո՛վ դու Վահագն, Ասուածը մեր հայրերուն,  
Մենք անհասակ հին ցեղի մը նոր սերունդ,  
Բեզ կ'աղօթեմք խոր հաւաստով մ'անկուռն  
Ուժի մրիկ Արեգական շոյս ծրնունդ:  
Շող մ'արձակէ մեր մեփերուն մեջ սնկօր,  
Որպէսզի մունջ Հայութիւնն այս փսխանէսդ  
Այս մահագի՛ն . . . պայսարներէն վերջ հրօր,  
Մենք ստեղծենք Լոյս Յարութիւնն իր օրհնեսդ:  
Ահա՛ ցեղին արիւնն Գիւնի հրրափառ,  
Ահա Մարմինն ողջակիզուած այսփան դար,  
Մենք անոնցմով հաղորդըւածք՝ Բեզ կուզակ:  
Նըզովի՛ մեզ . . . եթէ մոռնակ վրէժն արդար  
Հատուցանեք, վրէժն ահարկու, մահապա՛ր . . .  
Զա՛րկ կայծակովդ, բող յարիսեան փնանակ:

ԼՈՒԹԵՐԷ՛ԿՈՐԿՈՏԵԱՆ



**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ**

Գրեց՝ ԱՐՍԵՆ ԵՐԿԱԹ

Օ՛ր, միշտ կըրիւ, քափահարում, միշտ պայքա՛ր,  
Միշտ դէպի վե՛ր, դէպի բարձրը ու վսեմ,  
Գէպի առա՛ջ, դէպի լոյսը սիրավառ,  
Գէպի կըրիւ, դէպի կեանքը վեհօրէն:

Մքուքիւնը քո՛ղ հալածուի ձեզանից,  
Նրա ետին դեռ ինչե՛ր կան քազնըւած,  
Ի՛նչ գարուններ, արշալոյսներ յուսալից,  
Ի՛նչ շեփորներ, յաղթուքիւններ պաշտուած:

Կամքը ձեզի քո՛ղ չի լըֆէ, ընկերներ,  
Կամքը մարդն է, յաղթանակը պայքարին,  
Նոր Աշխարհն է, նա նոր կեանքն է լուսաներ,  
Հորիզոնն է արշալուսւած լուսածին:

Ու ձեր քրքները քո՛ղ լինին շեփորներ,  
Միշտ կատաղի, միշտ յուսացող, յաղթական:  
Ուրեմն առա՛ջ, առա՛ջ, առա՛ջ, դէպի վե՛ր,  
Գէպի վսեմն, դէպի նոր Մարդը Վաղուան . . . :

Գէպի վա՛ղը, դէպի առա՛ջ, ապագան,  
Տեսէ՛ք կարմիր արշալոյսը, ընկերներ,  
Տեսէ՛ք Մարդը, Մարդն եմ ասում, բայց, Վաղուան,  
Մարդը յաղթող, Մարդը՝ լոյսը անվեհեր:

Օ՛ր, միշտ կըրիւ, քափահարում, միշտ պայքա՛ր,  
Դուք չէ՞ք լըսում շեփորները կատաղի,  
Գէպի առաջ, դէպի լոյսը ոսկեվառ,  
Ես լաւ գիտեմ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ» կը յաղթի:



**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԾՈՎԿԻՆԵԱՆ**

Իր սկսածը 1885 Նոյմբ. 25ին: Իր նախնական կրթ-  
ութիւնը ստացած է Եփրատ Գօլէմի  
նախակրթարաններուն մէջ: 1900ին իր  
ծնողաց հետ գաղթած է Ամերիկա:  
Երկու տարի գործել է վերջ, սկսած է  
շարունակել իր ուսումը: 1906ին փու-  
քաֆէթի Բարձրագոյն վարժարանը  
[high school] աւարտելով, մտած է  
Brown University ուր հետեւած  
է Բիւխարանական և Կենսաբանական  
ֆիւզիոն, ինչպէս նաև Բաղախական  
գիտութեանց, Միջազգային Օրէնքի և  
Ընկերաբանական դասընթացներուն:  
1909ին համալսարանի չորս տարուան  
ըջանը երեք տարիէն աւարտելով ըս-  
տացած է (Ph. B.) պատկաւոր փիլի-  
սոփայութեան տիտղոսը: Տարի մը ևս  
շարունակելով ստացած է (A. M.)  
Մագիստրոս Արուեստից տիտղոսը:  
Երկու տարի նոյն համալսարանին մէջ  
պատշաճաբար է Assistant of Che-  
mistry (Օգնական Բիւխարանու-  
թեան պատշաճով: 1913ին սկսած է յամախել *Հարվըր* Համալսարանի Բժշկական  
Գպրոցը, ուրկէ իր ըրջանը պիտի աւարտէ 1917ի գարունը, իբր բժիշկ և վիրաբոյժ:  
1913 Յունվարէն մինչեւ 1915 Ապրիլ վարած է ՊԱՀԱԿ Երբքի խմբագրութիւնը:

**ԱՐՀԱԿԻՐՔԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ**

Գրեց՝ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԾՈՎԿԻՆԵԱՆ

*Նոր Տարի . . . . .*  
Ու գեղեցիկն սահմուկեցուցիչ փոթորիկներով արեկոծուած  
սա վերջացող տարուան աչտաչարող սարսափներէն ահաբեկած մեր  
արիւնոտ աչքերը, սիրտիանքի ու հանգստեան չուսուէտ լոյս մը տես-  
նելու տենչանքէն ձղուած՝ կը փորձեն պահ մը նորեկ տարուան հա-  
զիւ թէ բացուող անորոշ ու մութ արշալոյսին սեւեռիլ չանկարծ:  
Նոր տարին մարդկութեան զանգուածին համար Նոր Յուլի և  
Նոր Հուսարի ներշնչարանը եղած է, նոր փոփոխութիւններու և  
նոր լեզաչըջումներու սկզբնաչըջանը: Ամանորը, ժողովուրդներու  
համար, երջանկութեան և բարօրութեան ի խնդիր ձօնուած ջեր-  
մեանդ բիւրաւոր մաղթանքներու Մեծ Տօնն է:  
Նոր Տարին, մանաւանդ Հալուն Նոր Տարին՝ մասնաւոր և  
նուիրական նշանակութիւն մը ունի դարերու Մարտիրոս և չաէրթ



տառապող Հայ ժողովուրդին համար: Հայուն Ամանորը սրբա-  
գործուած Տօն մ'է, Հայ օճախի սրբութեան, ընտանեկան երջան-  
կութեան, ցեղային աւանդութիւններու չափեթացման, հաւաքական  
խրախճանքի ու անդորրութեան Օրը, կազդուրման եւ ուժաւորման  
Հանգստատօնը:

Հայութեան դարաւոր պատմութեան երկար շրջանին չաճախ  
մեր ազգային հանգիստը վրդովող սարսափահար ու ահաւոր երե-  
ւոյթներ եկած ու պատուհասած են արի այս ժողովուրդը, և անկիա  
փոխանակ ցնծութեան՝ Սուգի, փոխանակ անդորրութեան՝ արիւնի  
Նոր Տարին ապրիլ բռնադատուած է: Սակայն հազիւ փոթորիկը  
վերջացած՝ Հայութիւնը իր չաղթանակի եւ բաղդատական խաղա-  
ղութեան օրերուն՝ անցեալի ապրած իր տառապանքին ահագնու-  
թիւնը տարած թաղած է ԿԱՂԱՆԴԻ՝ իր Ազգային Տօնին, խրախ-  
ճանքներուն մէջ:

Կեանքի պաշարէն վատտակարեկ Հայ աշխատաւորը, Հայ  
հողը արգասաւորելու իր մարտնչուններէն սրարտասած Հայ շինա-  
կանը, Հայ Ընտանիքին գոյութեան համար քրտնաթոր Հայ տղա-  
մարդը, Հայ Օճախին սրբութիւնը չափեթացնող եւ անոր տեւակա-  
նութեան սիւն կանգնող Հայ կինը, Հայուն ապագան սաղմնաւորող  
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԵ, միշտ Նոր Տարուան Տօնին չառած են իրենց աչ-  
քերը, Հայուն այդ Մեծ Օրուան՝ Կազանդի, տօնախմբութիւններուն  
մէջ իրենց չոգնութիւնները, լուծերն ու տանջանքները մոռնալու,  
ընտանեկան սուրբ սիրոյ եւ անխարդախ նուիրումի վսեմ ոգիին հո-  
գեպարար եւ անուշ մթնոլորտին մէջ:

Սակայն մեր Հայրենի հողին հոգեւին կառչող եւ անոր չա-  
ւերթացման համար պաշարելու ուխտած Հայութեան համար այնքան  
դժոխայինօրէն ճակատադրուած անագորոջն սոսկուծներէն մթազ-  
նած մեր աչքերը ի դուր կը դառնան Նոր տարուան տարած ու մութ  
հորիզոններուն:

Հայուն համար Նոր Տարի չկա՛յ այլեւս:

Քանդումի, սրածութեան, արիւնարբութեան եւ դադանու-  
թեան գեհնածին հրէշներ, կոչը ու խենթ ազգայնամոլութեան մը  
կիրքերէն մոլեգնած, ամբողջ ցեղի մը հոչակապ ու թանկադին ար-  
եան մէջ թաթխեցին իրենց պիղծ ձեռքերը ու հսկայական գերեզ-  
մանատան մը վերածեցին Հայուն դարաւոր եւ դրախտանման Հայ-  
րենիքը:

Հայաստան համայնական անապատի մը վերածուած է, տը-  
խուր ու ահաւոր Սգաստանի մը: Երէկուան չէն դիւղերն ու մար-  
դաչատ քաղաքները, իրենց հարազատ բնակիչներէն զրկուած, ա-  
ւազակ-դաղաններու որջերու վերածուած են: Հայուն դաշտերը որ-

բացած են իրենց սեպհական աէրերէն: Հայ լեռները սուգով պատած  
են, Հայ դեռերը հարազատներու դիակներով լեցուած ու անոնց ա-  
րիւնով ներկուած: Հայուն նուիրական օճախները սրբապղծուած ու  
բուերու եւ ազոաններու բոյներ դարձած են: Հայուն եկեղեցիները  
մզկիթներու վերածուած եւ դպրոցները ազոատ զօրանոցներու փոխ-  
ուած են:

Հայութեան կենսունակութիւնը ներկայացնող երիտասար-  
դութիւնը, անոր հանճարին ծաղիկը եզող մտաւորականութիւնը եւ  
անոր զիմաղրականութեան ջիղը կազմող կտրիճներու հոչակապ շար-  
քերը անգթօրէն ու վաչրագօրէն սրածուած են: Հայ դեռատի ու  
անմեղունակ աղջիկները խէնէշ թուրքին չալիքը կիրքերուն մատնը-  
ւած, եւ վաղուան ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԵ ամբողջաւորող Հայ մանուկները  
թուրք մեծցուելու համար քուած տարուած են:

Ու այնքան դադանօրէն բզբտուած Հայութեան մնացած բե-  
կորները, ողորմելի ծերունիներէ, անհայր անմայր սրբերէ, անամու-  
սին կիներէ եւ որդեկորոյս հայրերէ եւ մայրերէ բաղկացած թըշ-  
ւառներու կարավաններ, իրենց Հայրենիքէն աքսորուած՝ անօթի  
և անապատապար կը քաշկուտուին հեռու անապատներու մէջէն, դէպի  
ստոյգ եւ ահաւոր մահուան մը ճիրանները:

Հայուն պատիւը փրկելու եւ անոր անսահման վրէժը լուծելու  
համար լեռ բարձրացող մեր առիւծները, երկար ու դժուարին դի-  
մադրութիւններէ վերջ, պաշարի եւ գնդակի պակասէն կատրած՝  
իրենց հրացաններուն փաթթուեցան եւ անոնց փողերը պինդ մը խա-  
ծած ինքզինքնին ժայտերէն վար գլորեցին թշնամիին ձեռքը շինալու-  
համար:

Ահա Արհաւիրքի Նոր Տարին, Արիւնոտ Ամանորը, Սարսափի  
Տարեմուտը:

Հայուն համար Նոր տարի չկա՛յ...:

Ապրելու սահմանուած այս ցեղին համար սակայն, Արհաւիրքի  
այս Նոր Տարին նոր ու գեղեցիկ կեանքի մը ճամբան կը բանայ սոս-  
կուծէն ու սարսափէն վերապրող Հայութեան մնացորդներուն առ-  
ջեւ: Ստիկա պարտականութեան ճամբան է, դէպի վերջնական չաղ-  
թանակ ու Աղատութիւն առաջնորդող ճամբան, որ հսկայ զոհողու-  
թիւններու եւ անսահման նուիրումի պատրաստ, ազնիւ ու քաջարի  
զոհեր կը պահանջէ:

Հայ ցեղին անկախութեան տենչանքով իր աչքերը փակող Հայ  
ազգասէրը, քստմնելի կոշկոճուծներու հնհնուքներուն տակ մահաց-  
ուած Հայ մտաւորականը, կախազանի անողոք չուանին տանջանքնե-  
րուն մատնուած Հայ դորժիքը, Հայ ինքնապաշտպանութեան պա-  
րիսպներուն վրայ ցեղին դիւցապներգութիւնը կերտող Հայ կորիւն-



ները եւ դէպի ստույգ բաց անարիւն մահուան արիւնոտ ճամբաները առաջնորդուող ողորմելի անբաղբները, իրենց անձնական ոչնչացման մասին մտախոհուելի աւելի՛ ցեղին վերջնական բնաջնջման դժբաղդ հանդիսատեսներն ըլլալու մղձաւանջը ապրեցան ու թերեւս իրենց հոգեւարքի աշաւոր դալարումներուն մէջ ՅՈՅՍ մը ապրեցուցին իրենց սրտերուն խորը՝ թէ, դժոխքի բոցերէն ճողոպրող Հալութեան մնացորդները պիտի կրնան Հալուն քանդուած եւ ամաչացած Հայրենիքը վերաշինել:

Ինչո՞ղներուն այս լեռին ՅՈՅՍԸ, անոնց մեզի թողուցած վերջին հՏԱԿն է: Սրբազան ու նուիրական կտակ մը, որուն ամեն Հայ պէտք է ժառանգորդ կանգնի:

Հալուն համար Նոր տարի չկա՛յ եւ ցեղին ապագան կործանարար անստուգութիւններու աղջամուղջին մէջ թաղուած պիտի մնայ, որքան ատեն որ այլ հՏԱԿ-ՅՈՅՍԸ իրադրութեամբ չէ:

Յուսալքումի եւ Սուգի օրեր չեն որ կ'ապրինք, այլ արիւթեան եւ դուռթեան պաշարի դիւցադնական օրեր: Ազգը ապրիլ կը բաղձայ: Ազգը պէտք է ապրի: Եւ սերունդներուն ամենաերջանիկը պիտի ըլլանք մենք, եթէ Հալը ապրեցնելու կորովն ու հաստատակամութիւնը ունենանք:

Զոհարերումի եւ Ողջակիցման նոր տարին է ասիկա որ նոխաղ կը պահանջէ մենք: Զոհողութիւնն է օրուան անցախօսը: Զոհողութիւն հանգստի, զոհողութիւն եսի, զոհողութիւն անձնական եւ կուսակցական շահերու, զոհողութիւն դրամի, զոհողութիւն կեանքի: Պէտք է զոհուինք բոլորս — որպէսզի ԱԶԳԸ ԱՊՐԻ:

Նոր Տարի չկայ մեզի համար, որքան ատեն որ ցեղին վրէժը լուծուած չէ ու Ազատութեան լաղթական դրօշը ապահովուած չէ:

Երբ Արհաւիրքէն եւ Սարսափներէն վերապրող Հալութիւնը Ազգային Անկախութեան վսեմ խոչալին շուրջ խմբուած եւ միութեան աննախընթաց կապով մը միացած ուխտէ Ազգին վրէժը լուծել եւ անսահման զոհարերութիւններու եւ հերոսական արիւններու գնով կարենայ իր Հայրենիքին տէրը դառնալ, երբ դերեզման Հալաստանը կրկին չեննայ մեզմով, երբ Հալուն լեռներու կատարներէն սուզը հեռանայ, երբ Հալուն մտալ դաշտերը կրկին ժպտիլ սկսին, երբ դազան թշնամիներու պիղծ արիւնէն կազմուած լճերուն մէջ ցեղին պատիւը փրկուի, երբ Հալը իր Օճախին եւ Տոհմային Սրբութիւններուն տէրը դառնայ կրկին, երբ Հալուն արցունքը ցածքի ու Տառապանքը վերջանայ ընդմիշտ, աչն ժամանակ ամենքս միասին, ազգային հաւաքական խրախճանքներով, անվերջ ցնծութիւններով ու հսկայ խանդավառութեամբ կը տօնենք ՀԱՅՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ ԱՄԱՆՈՐԸ՝ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՓԱՌԱՇԵՂ ՆՈՐ ՏԱՐԻՆ:



Լ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ.— Ծնած է Մ. ԱԶԻԶ, ԽԱՐԲԵՐԴ 1887ին: Համեստ՝ աշխատաւոր ընտանիքի մը գաւաղը: Ուսումնաւարտ ՄԵԶՐԷԻ կեդրոնական վարժարանէն: Ռուբէն Զարդարեանի վերջին տարւոյ սաներէն մին եղած է: 1906—1913 քուկամներուն՝ կը պարապի ուսուցչութեամբ: Ծածկանուամբ աշխատակցած է ՊՕԼՍՈՅ մի քանի պարբերականներում, տալով իր ապրած գաւաղի կեանքէն կարգ մը ծանօթութիւններ: Գրական իր անդրանիկ երկը՝ որ հրատարակեց ԱՆԳՈՒՆԴԻՆ ՄԷՋԷՆ անուն փոքր գրքոյկն է, որպէս պատանեկան իր յուերուն եւ յոյգերուն հայելին:

Լ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Գաղթած է Ամերիկա:

### ՃԻՆՅԱԾ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Նուէր անոր՝ որ կա՛ն, ամենուն ծառան ու ամենէն արիւմար-հելին էր:

### Գրեց՝ ԼԵՒՈՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Մ . . . ի մէջ եմ . . . :  
 Առանձնացած եմ իմ սենեակս . . . :  
 Այլ սենեակը դրացի չունի, ընկեր չունի. քաղաքէն դատուած է ու քաղաքը կը դիտէ իր մէկ պատուհանը:  
 Կը սիրեմ իմ սենեակս, որովհետեւ կը սիրեմ առանձնութիւնը. կը սիրեմ առանձնութիւնը, որովհետեւ կը սիրեմ վիշտը:  
 Վատարանիս մէջ Տէրսիմի անտառներէն կտրուած վայրի կաղ-



նիին ճիւղերը կը ճարճատին, կը վառին, կարծես կը հաչուեն ու կը սմբին: Բնութեան անընտել վայրենութիւնն է որ մոխիր կը դառնայ քէլի մը տաքցնելու համար իմ եսը . . . :

Ահա ներս կը մտնէ խեղճուկ մարդ մը. այս մարդը հագած է հագար կարկասնով կապուտ կտակէ ռալվար մը, ոտքին ունի հին-ցած արէխներ, գլուխը դրած է սեցած ֆէս մը ու բոլորտիքը վաթ-թած է կարմիր լաճաքը: Եկեղեցւոյ ժամկոչն է ան— Հրպօ՞ն . . . :

Տարիքն առած է Հրպօն ու լաւ պաշտպանուած է, բայց չի մտիր, չի դողար, էր ազօտ նաչուածքը խնդութիւն մ'ունի: —

— «Ողորմի Աստուած» կը մըմնջէ գրեթէ անլսելի ձայնով ու կը նստի վառարանին քովիկը:

Բառ մը չեմ պատասխաներ ու կը դիտեմ դաշն. որովհետեւ նա մարմնացունն է աւանդապաշտութեան, մարմնացունը՝ միամտութեան. նա չունի երէկի չիչողութիւնը, չունի վաղուան երազը. նա աչսորով կ'ապրի ու աչսորով կը դոհանայ:

Երջանի՛կ մարդ . . . :

Ինձ հետ խօսիլ չի համարձակիր և արդէն խօսելիք ալ չունի. պահ մը առջևը կը նայի, պահ մը վառարանին, ապա դրպանէն կը հանէ եկեղեցւոյ խոշոր բանալին, անգամ մը կը դիտէ անոր լայն ծակը, անգամ մ'ալ՝ անոր մեծութիւնը ու չես դիտեր ի՛նչ բնագ-դական գրգռմով աչքը կ'ուզէ ինծի:

Մեր նաչուածքները իրարու կը հանդիպին, իրենը կը խոնարհի, խի իմս կ'ամպտտի չ'գիտեմ ինչո՛ւ . . . :

Լուութիւնը բաւական երկար կը տեւէ . . . :

— «Վարժապե՛տ, կը ձայնէ չանկարծ այդ խոնարհ մարդարձա-նը. բան մը ըսեմ չե՞ս բարկանար:

— Սօսի՛ր, կըսեմ իրեն. կը տեսնես որ դրադած չեմ, զիս չես խանդարեր:

Ո՛չ, խոստացիր որ չի բարկանաս. կը կրկնէ նա:

— Կը խոստանամ Հրպօ, կը պատասխանեմ:

— Վաղը Կաղանդ է կըսէ նա համարեա վախկոտ ձայնով. եթէ տղաքը քեզի կաղանդէ՛ք բերեն, անցեալ տարուայ պէս ես մի դրկեր. ինծի համար պահէ զանոնք . . . :

Վերջին բառերը հազիւ արտասանած է, երբ արդէն ինքն իր մէջ կ'ամփոփուի, կ'ամջնայ ու այդ ամօթը ծածկելու համար վառարա-նին դռնակը կը բանայ, ունելիին ծալրովը ճարճատող փայտերը կը խառնէ, ապա կը դոցէ. ունելին ձեռքին մէջ կը դարձնէ անգամ մը, անգամ մ'ալ անոր ծալրը կը նայի՝ տեսնելու համար թէ ի՛նչ տպա-ւորութիւն կրեց, չետոյ նաչուածքը կ'ուզէ իմ կողմս. տեսակ մը պաղատազին նաչուածք՝ որ շնորհ մը կը խնդրէ:

— Ես այդ չեմ կարող ընել Հրպօ, կը պատասխանեմ իրեն ժպտե-լով. բայց եթէ խօսիս Պրն. Ս . . . ին նա քեզի միջոց մը կը ցուցնէ:

Հոս՝ կը լսէ այլևս, ձեռքը կը տանի ախանջին ետև, կը քերէ ար-դէն ճաղատ գլուխը. կերևի թէ իմ պատասխանը դոհացուցիչ չէ իրեն: Պրն. Ս . . . եկեղեցւոյ երաժիշտ վարժապետն է, Հրպօն դիտէ թէ անոր հետ սակարկութիւն ընելը հեշտ չէ որովհետև նա պի-տի ուղէ իւրացնել բոլոր կաղանդէքները, առանց իրեն բաժին մը հանելու:

— Ի՞նչ պիտի ընեմ Պրն. Ս . . . ր, նա ինծի բան չի տար, կըսէ Հրպօն դժգոհութեամբ մը շեշտելով այդ անունը:

— Ես Ս . . . ին կը խօսիմ այդ մասին, վստահ եղիւր Հը՛րպօ, կը պատասխանեմ և ուշադրութեամբ կը նայիմ իր դէմքին:

Գոհունակութեան ժպտան է որ կուգայ թառիլ անոր տժգունած շրթներուն վրայ:

Հրպօն երջանիկ է ալ, շա՛տ երջանիկ, վաղը պիտի ընդունի կաղանդի նուէրները, գոչնդգոչն թաշկինակներ, տոպրակներով չա-միչ, պաստեղ, ընկոյզ. զանոնք պիտի պահէ որպէսզի առտուն կա-նուխ երբ եկեղեցւոյ դուռը բանալու երթայ, մտքովը աղօթք մը ծածծէ, բերնովը քաղցրեղէններ . . . :

Ահա կ'սկսի ինքնիրեն մըմնջել եղանակ մը. բառերը չեմ հասկնար ու չեմ կրնար դիտնալ, շարակա՞ն է թէ սէրոյ երգը: Իր ձայնը մերթ կ'երկարի, կը դողդաղայ, կը նուաղի. կը կարծեմ թէ փառաբանու-թիւն է. երբեմն ալ կ'ուռճանայ, կը ցցուի, համրուած սանդղամա-տերէն արագ արագ վեր կելլէ՝ կարծես երազին հասնելու համար:

Գուրսը ձեան թանձր խաւը ծածկեր է երկրիները, ծածկեր է դաշտերը, մերկ մնացեր են միայն Տաւրոսի հսկայ ու սեպ ժայրերը իբր երկրային կատաղութեան ժանիք, ցցուած՝ երկնային կատաղու-թեան դէմ, եւ առանց բոլորին քովէն, որպէս չախտեանական երազի ու անթառամ գեղեցկութեան օրհներգու՝ Մնձիւրն է որ խուլ մուրն-չուծով կը սահի, կերթայ . . . :

Հրպօն չ'գիտեր լեռան վիշտը, չ'գիտեր և ցաւը այն ժողովուր-դին, որուն հաւատքին խոշոր բանալին ինք կը պահէ քովը. Հրպօն անգիտակ է և Մնձիւրի երգին. նա ո՛չ մէկուն ախանջ կը դնէ. նա իր երգն ունի ու կ'երգէ այդ երգը . . . :

Յա՛նկարծ արցունքի երկու կաթիլներ վար կը գլորուին իր խոր-չոմած աչտերէն ու կ'երթան կորսուիլ ցնցոտիներով ծածկուած կուրծքին վրայ:

Ա՛հ, որքան սխալած եմ եղեր ես. Հրպօն մարդերուն ամէնէն լաւը և թերևս ամէնէն բիւրեղացածն է. նա ունի իր չուշերը, ունի իր չուզերը, ունի իր երազները . . . :



Այդ արցունքը ցոյն է իր երազի ծաղիկներուն . . . :

Հիմա երեակալութեանս առջևն է նա . . . :

Անքան կը սիրեմ զինքը, որքան իմ Հաչքենիքը . . . :

Անոր անձին հետ ալսողէս թէ անցիս կապ ունեցող դէպքերը իրենց ամենաչնչին մանրամասնութեամբ, լիշատակներու վերած-  
ւած՝ կարաւանի պէս շարքով կանցնին մտքիս առջևէն ու կարծես  
որոշ ուղի մը չ'զտնելով՝ ետ կը դառնան նորէն սկսելու իրենց չա-  
ւիտենական, միօրինակ ճամբորդութիւնը :

Այսօր թերեւ մեռած է նա, որովհետեւ չբացած է կրտսն, ան  
ժողովուրդը, որուն անբարեկի չանձանքներն եղած են իր հաւատքը,  
իւր շինարար բազուկները, ազատասիրութեան անդուստր տենչը,  
անսպառ կենսունակութիւնը . . . :

Այլևս Հըրպօն չիկա՛յ, չիկա՛յ և կազանդն ու իր երազը. ալիս  
եկեղեցի չիկա՛յ, չիկա՛յ և անոր բանալին. որովհետեւ հաւատացեալ  
չիկա՛յ, աղօթող չիկա՛յ. սուրբերը Մեծ-Աստուծուն հետ փայտեր են  
զարհուրանքով. փայտեր են աշխարհին անձանօթ հորիզոնները, ուր  
մարդը արիւն-արցունք չի փայտեր, ուր վիշաք չի հեծեծեր լալազին . . . :

Հ . . . ի մէջ եմ հիմա . . . :

Առանձնացած եմ իմ սենեակս . . . :

Այդ սենեակը դրացի ունի, ընկեր ալ ունի, բայց Հըրպօն չունի.  
ու ես չեմ սիրեր ատ սենեակը :


Անոր կռնակը ոչ թէ անմատչելի հսկայ Տաւրոսն է, այլ զգուելի  
տափակութիւն մը, անոր առջևէն Մնձիւրը չի սահիր հառաջելով.  
ո՛չ, հոս Մնձիւր չիկա՛յ. հոս՝ գործարանին երկար ծխնելուցը կայ  
միայն, որու քովէն ամեն առտու մթնշաղկին՝ ոռնուծը կը լսուի շան  
մը որ կուգայ ու կը բզբաէ իմ երազները . . . :

Ամեն օր կը տեսնեմ ես անոնց կտորները ու կ'արիւնի սիրտս . . . :

Միակ մտերիմը, զոր կը պահեմ քովս, առանձնութիւնն է. կը  
սիրեմ առանձնութիւնը առաջուրնէ աւելի, որովհետեւ անով է որ  
կ'ապրիմ լիշատակները՝ բոլոր հինցած «Նոր-Տարի»ներուն :


Անոնք գեղեցիկ են ու հրապուրիչ. անոնց պատկերը մտեր է  
ուսկորներուն ծուծին մէջ ու քարացեր է :

Պիտի դուրդուրամ անոնց վրայ, որպէս նուիրական մասունք-  
ներու և ամէն նոր Տարիի իմ խունկը պիտի ծխեմ անոնց առջև,  
ամեն նոր Տարիի, ալ ո՛, մինչև ան միւս նոր Տարիին, որ բարօրու-  
թեան և Ազատութեան նոր Տարին պիտի ըլլայ, երբ մեռած ժողո-  
վուրդը պիտի վերածնի իր գերեզմանին վրայ, երբ Հըրպօնները ու-  
րախութեամբ պիտի սպասեն կազանդին ու իրենց գալիք նուէրնե-  
րուն . . . :



Յ Ո Յ Ս Ը





Ա. Ա. ԱՐՈՆՏՅԱՆ

## ՅԱՐԳԱՆՔ ՔԵՉ

Գրեց՝ Ա. Ա. ԱՐՈՆՏՅԱՆ

Յարգանք քեզ, նահապետական ժողովուրդ:

Ո՞վ չափեց երբ եւ իցէ քո տառապանքի անդունդները, ո՞ր սպաւոր կարապը եկաւ մի օր չուզելու հոգուդ խորունկ ցաւի խորունկ լճերը, ուր ետում են պղտոր ալիքները անէծքի մրմունջով: Ինքդ միայն գիտես անօրինակ ցաւիդ մեծութիւնը. ինքդ միայն ես վարում քո անդէկ ու ալեծուփ նաւը դէպի անձանօթ հորիզոններ, ո՞վ դու ծովերի մոլար, տանջուած ճամբորդ, մըրթիկների չաւիտենական ուղեկից, չարգա՛նք քեզ:

Հազար տարիների արիւնի մառախուղի միջից դու փալցում ես անչղզողդ, չամտ ու վսե մղէպի մի վեհագոյն, մի սքանչելի նպատակ, գրաւիչ՝ որպէս փարոս. դիւթական՝ որպէս ժպիտը կոյսի. քալում ես հեւ ի հեւ, վիրաւոր, խոշտանգուած, քո հսկայ թիկունքին կրելով մի բեռ, որի ծանրութեան տակ աչնքան ազգեր լացով խորտակուել են ու կորել որպէս մըրթիկների վարած փոշու ամպեր. չարգա՛նք քեզ:

Հազար տարի բարձրից ընկնող կաթիլները կամաց կամաց կըծում են հսկայ ժայռը եւ չորձանքներին չանձնում, լեռներ են փուլ գալիս դարերի բոցոտ երկունքից, իսկ դու մարտիրոս ժողովուրդ, քո գլխին տեղացող անթիւ հարուածների տակ գեռ քալում ես պղնձուած, անողորմ անապատների միջով, ուր օձերը իրենց թունաւոր հեքով լիզում են արիւնոտ դարչապարդ, ուր փշերը չօշտում են ներբանդ, քալում ես դէպի աշտեղ, ուր մըղում է քեզ քո անօրինակ ճակատագիրը, ո՞վ գիտէ, ո՞ր պիսի փառքի, կամ ո՞ր պիսի նոր պաշարների, համար. չարգա՛նք քեզ:

Աչնքան դարեր փառուող խրճիթներից բարկ ու գորշ



ծուխը՝ մորթուտուղ զաւակներէիդ արիւնով ու մաշրերի ա-  
նէծքով բեռնաւորուած գնում է սեւով խարանելու երկնքի  
ճակատը. արեւը չոգնեց շրջան անելով քո արիւնտա հո-  
րիզոնով, եւ լուսինը դողդողալով քաշում է իր գունաստ  
ցուքերը քո արեան երեսից. եւ դու հեծեծանքդ խեղդած՝  
քո հսկայ ցաւը՝ կրծքիդ տակ շղթայած, մենաւոր ու հա-  
լածական գնում ես անշեղ խաւար ճանապարհներով, հաչ-  
եացքդ միշտ դէպի հեռուն, ուր ծածկուել է արշալուսը եւ  
որ պիտի ծագի, պիտի ծագի մի օր. չարգա՛նք քեզ:

Հազար ձեռներ կան հոգուդ հսկայ թուիչքը սանձե-  
լու, հազար ճիրաններ, աղատութեան քո վարդապոչն ե-  
րազները բզկտելու. կեանքդ պատրանքներով անցաւ, եւ  
հաւատը քեզ չթողեց, թէ կան արշալուսներ, որոնք պիտի  
փաշ տան մի օր քո մուշկ հաչեացքին. չոսիդ փթթած  
վարդերը հազար անգամ խամրեցին խորշակների երեսից,  
եւ դու չես չոգնում նորերը տնկելուց, ո՛վ դու մուշկ ու  
համր պարտիզպան: Սաւար ու խեղդող ճանապարհիդ վրա  
քեզնից անբաժան, քեզ հետ շաղկապած փաշում է չա-  
րիքը, հազար գլխանի հրէշը, եւ քո շուրջը՝ արտերի մէջ  
ոռնում են քաղցած գազանները. թափառական հոգմերի  
հետ լոկ անտառներն են մութ գիշերներին հեծեծում ու լա-  
լիս քո հսկայ ցաւը. չարգա՛նք քեզ:

Իրոնդէ ու երկաթէ սաՀմաններ կան զաւակներիդ  
երամից բաժանելու, նրանց հոգեւոր կեանքի ամբողջա-  
կան թափը, ցեղիդ ստեղծագործող հանճարի թուիչքը  
փշրելու համար: Պողպատէ շղթաներ կան բազուկներդ  
պրկելու եւ ոտներիդ վերելքը խափանելու համար: Երբ  
գալիս է կարմիր ոճիրը երկգլխանի արծւի թեւերի վրայ,  
գալիս է սանձարձակ ու կատաղի, պարուրելու քո չարա-  
տանջ մարմնին, մահացու համբուր դրոշմելու քո խոհուն  
ու չոգնած ճակտին, սաՀմանները ջնջում են եւ Մասի-  
սից՝ գրգուռ ու Նպատ, Արագածից Վարագ ու Սիփան,  
դաշտ ու ձորեր ողջ հեւում են արիւնտա մշուշի մէջ, ո-  
ճիրը քրքշում է երկնքի երեսին եւ դու դարձեալ քաշում

ես. չարգա՛նք քեզ:

Ասա՛, կենդանի մարտիրոս, ո՞վ դրեց քո հոգում  
այդ զարմանալի բոցը, որ քո խանդի աղբիւրն է ցաւի ու  
սեւի օրերում, ո՞վ տնկեց քո կրծքի տակ խորունկ հաւա-  
տի այդ հսկայ ծառը, որի վրայ այնքան սգաւոր թռչուն-  
ներ են թառել: Թէ նա մի բարի Աստուած էր, ինչու կա-  
պեց քո սրունքներին ոռնացող ցեղերը, կիզիչ անապատ-  
ների խուժանը, որ անկարող է ըմբռնել քո մեծ երազները  
գեղեցիկ ու բարւոյ, քո հուր տենչերը, որոնք հրդեհում  
են հոգիդ ուժգնօրէն:

Քո տառապանքի ու կսկիծի մեծութիւնից մաշր  
երկիրը քրքրուած ոտներիդ տակ զառանցում է ցաւա-  
գինօրէն: Լսիր նրան. տանջուող, մարտիրոսուող ազգ. նրա  
մրմունջների, նրա լացի մէջ բողոքի դառն շեշտ կայ. այն-  
քան դարեր դու հերկեցիր, բեղուն դարձնելու նրա կուրծ-  
քը, եւ ոճրագործները պղծեցին նրան: Այժմ ականջ դիր,  
իւրաքանչիւր փշրուած ճհասի, արորած ծաղիկ, բողոքում  
է քո դէմ, քո խաղաղ, անձնուրաց, արիւնաքամ, առաքի-  
նութեան դէմ, որ քո շուրջը ոչ ոք չի հասկանում, ոչ ոք  
չհասկացաւ երբեք: Ահա՛ այդ առաքինութիւնը, որքան  
եւ վսեմ լինի նա, թո՛ղ այն աստուածներին, ոտքի ել եւ  
զա՛րկ, զա՛րկ թափով — ողջ աշխարհն է զարկում, վա՛յ  
նրան, ում առաքինութիւնը մարտական չէ, ում բռունցքը  
չի բարձրանում հարւածելու արիւնածարաւ, անողորմ  
թշնամուն:

Դարձեալ չարգա՛նք քեզ, չարգանք քո արիւնին,  
քո ցաւին, քո լաց ու արցունքին, չարգանք նոցն իսկ քո  
հսկայ համբերութեանը, որ քո դրահն եղաւ սեւ օրերում,  
չարգանք քո մեծ հաւատին դէպի բարւոյ չաղթանակը:

Իսպա բաւակա՛ն է: Դարերի հարկը թող դարերը  
տանին: Թշնամին չափազանց անողորմ է, բիրտ ու ոճ-  
րագործ, որպէս զի համբերութիւնը շարունակի առաքի-  
նութիւնը մնալ: Վեր կա՛ց ու զա՛րկ, զա՛րկ ուժգին եւ  
թող հազար տարիների մեռելների ոսկորները դողան



Հարւածները չօրհնելից: Չա՛րկ, երբ հալածում են քեզ,  
 դա՛րկ, երբ փակում են քո փառաւոր ընթացքը, դա՛րկ,  
 երբ մերժում ու հեղնում են քո սարդած ձեռքը, դա՛րկ  
 շարունակ, մինչեւ կարմիր ոճրի նողկալի քրքիջը խեղդւի,  
 մինչեւ արդարութեան ու ճշմարտութեան վսեմ դորժը  
 չաղթանակի:

Եւ այն ժամանակ հաւատա, նահատակ ժողովուրդ,  
 արիւնարբու թշնամիդ անգամ ծունկ կը չոքէ ու կը կոչի՝  
 «Յարգա՛նք քեզ»...:

## Ա Ր Յ Ո Ւ Ն Ք Ս

Նուէր՝ վանիկին

Դեռ չի բացուած իդօերդ շուշան  
 Թոռմեցար իբր աշևան տերեւ՝  
 Քամիև սուրաց հոգւոյդ վերեւ  
 Տանկրով կեանքիդ դեպ՝ գերեզման...:

Երբ կը լսեմ քու մահուան բոթ  
 Կ'զգամ ներսես ցաւ մ'հրայրփոս,  
 Կուրամ ահա երգս շիրմիդ մօտ  
 Թեղերովը քնարիս թախծոս...:

Արցունքներու շիթովն այժմեև.  
 Պիտ՝ յօրինեմ ողբ մը անհուն  
 Ու տամ փառքիդ եւ Աղեղուն  
 Անուց՝ որ քեզ միշտ սիրեր եև...:

## Ա Ղ Ե Ր Ս

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒՆ

Գրեց՝ ՀՐԱՅԱՅՏ

— Դուք հայրենի կոյսեր հէք,  
 Ընդվզումի բոցեղէն  
 Ահեղ երգեր երգեցէք՝  
 Ձեր հոգիին խորերէն  
 Դուք հայրենի կոյսեր հէք:

— Ձեր երգերով սիրաւէտ,  
 Ու տխրանոյս ու յուզուն,  
 Երգեցէք դուք առ յաւիտ  
 Թըրքըռումով քաղցրամուն,  
 Ձեր երգերով սիրաւէտ:

— Ձեր երգերով սիրաձայն  
 Կայծեցէք դուք հեռուէն  
 Կարիւններուն մոգական  
 Հոգիները վառօրէն  
 Ձեր երգերով սիրաձայն:

— Ձեր ձայներով քաղցրալուր,  
 Դուք ռազմիկներ երգեցէք,  
 Հրդեհելով սիրտեր լուս  
 Ով հայրենի կոյսեր հէք  
 Ձեր ձայներով քաղցրալուր:

Բիւքանիա



Թարգ. Ա. ԿԻՒԼԵԱՆ


Հսկայ ու երկզվեսան Արարատի բոյրաբեր լեռները կ'երկարին Պարսկաստանէն դէպի Կովկաս ու կը հանգչին Փոքր Ասիոյ արեւմտեան հորիզոնները: Նա ու անոր ընկերակից քառաթեւ Արազածը չափանախան ձիւնով սրահուած կը հսկեն այս մեր կեանքը անհամար տարիներէ ի վեր: Այս կեդրոնէն լեռները շեղելով կը տարածուին իմ հայրենիքիս ամբողջ տարածութեանը վրայ խորտ ու բորդ, շարունակական արիքներով, զիկզակ ելեւէջներով ու շտույ կը մխրճուին դէպի Կասպեան, Սեւ ու Գիջերկրական ծովերը:

Հիւսիս ու Արեւմուտք կը հոսին երեք մեծ գետեր, Քուրան, Ալիսն ու Ճիհանը: Հայրենիքիս կուրծքէն ալ կը բլլի Արաքսը՝ Հայաստանի Մայր գետը, մերթ գոտուծով ու գոչուծով, մերթ լուռ ու հանդարտ նա անդադար կը հոսէ իր վշտի ու արիւնտա դարերը Կասպեանի ջուրերուն մէջ:

Դէպի հարաւ կը վազեն եփրասն ու Տիգրիսը, որ մինչեւ վարերը՝ Միջագետի մէջ միացած իրրեւ մի հսկայ գետ կը խուժէ քաղաքի ձորերուն մէջէն եւ շտույ կը սահի մեծ դաշտերու վրայէն, ընդարձակ ու հարաւ, հարաւային կիզիչ արեւին տակ:

Որչա՞ր գետակներ կը միանան իրենց պատմական ջուրերուն եւ ի՞նչ անհաշիւ առուններ ու աղբիւրակներ մաքուր ու ցուրտ:

Ամենուրեք գետեր կան մեծ ու փոքր, ամեն քաջափոխիզ, ամեն անկիւն: Անոնք կը կարկաջեն խորհրդաւոր հեղեղատներու դողը, կը ցատկեն դու ձաշներով կոշտ լեռներու կողմ ի վար եւ կ'իջնան գլխիկոր ուժգին վիհի մը խորութեան մէջ: Անոնց վազքը ձողակեան ճողփիւններով ահարկու գահավէժներէն կը ջրվէժեն խորխորէն չատակի ժայռերուն վրայ ու շտույ մեղծ երրոխտորէն չատակի ժայռերուն վրայ ու շտույ մեղծ երկրով բնութեան օրորը կը հիւսեն խոր ձորերու մէջէն եւ կ'երթան արատաւող ուռենիներու տակէն լուալու լեռնային ծառերու ե թուփերու արձատները: Աւելի առաջ իրենց ուռեցող մակընթացութեամբ կը լայնան, կառատանան ջրելով կանանչ ու գեղեցիկ մարգագետինները՝ բուրումնաւէտ ծաղիկներով զարդարուած, ընդարձակ դաշտերը՝ խոհանքներով զարուվեր, եգիպտացորենի գետինները եւ մեծ չքաւոր սլարտէզները՝ պտուղներով ճոխ ու հարուստ: Եւ այդ



Ա. ՆԱԶԱՐ ՊԵԿ



պարտեզներուն մէջ կ'աճին ամեն տեսակ վալլող, գեղեցիկ խնձորներ, ոսկեայ ու վարդագոյն անուշաւէտ տանձեր, մաքուր սաթանըման խաղողներ, մարդարտանման Հատիկներով ծածկուած չոզացող նուռեր եւ անուշաւէտ փշաաներ՝ փոքր, կարմիր կճեպներով:

Բայց աւելի վար՝ Հարաւ, արեւուն կիզիչ ճառագայթներուն տակ, Հեռու դեաներու ձայներէն, ուր բնութիւնը տաքութենէ՞ ու անջիղ է, նարինջի ու լեմոնի ծառերէն մեղմօրէն կ'օրօրուի եւ ոսկեգոյն պտուղները, թուզը Հասունութենէն կը պալթի կըթուն, քաղցր Հիւթերով. Հպարտ, ճկուն կաղամախը կը Կ Ագառաւթեան օրերը, եւ Համեստ ձիթենին Խաղաղութիւն կ'ըողէ . . . :

Թաղազութիւն. . . որչափ բազմալի. . . բայց աւա՛ղ մոռցած է երկար ատեն այս տարաբաղը դրախտը:

Դառն է դիտել պարզ ու աճող բարտիները որ ուղղաճ, կը բարձրանան դէպի ամպերը:

Դառն է նաև դիտել նսեմ անտառները կաղնիներուն, շներուն, եղենիներուն եւ տարիներու բուսան տակ կըող շագանակներուն որք նախանձառ դուրդուրանքով իրենց զաղտնիքները ծրարեն մեկուսացած ձորերու մէջ եւ անՀասանելի, աՀարկու, ցը եւող լեռներու կուշտերուն վրայ:

Երբեմն երկչոտ, Համեստ ու թեթեւաշարժ վիթը՝ սեւ բոցավառ աչքերով, երբեմն ալ մշտաՀալած քարայծը անսովոր ձանով եւ կամ եղջերուն պառկած՝ դէպի ջրվէժ երկարող ժալուի վրայ, սուր ահանջներով եւ մեծ սեւ աչքերով լայնարաց՝ աղատութեան սիրով եւ կամ կատաղի, վիրաւոր չովաղին կաղկանձիւններ են որ կը խոռվեն անտառին քունը:

Հո՛ն է ծառերուն արմատները կեղևող վալլի վարազը եւ արջը՝ իր Հաճույքին անձնատուր: Հոն են գալլերու վեՀմակները Հըսկելով եւ միշտ սխտրաստ չարձակելու թափառող Հօտերուն վրայ, մինչ Հովիւը անդին անՀոգ իր սրինգին քաղցր ու Հողեցունց տաղերը կը Հնչեցնէ:

Հոս է նաև կատաղի բորենին, որ յանդգնօրէն կը քրքրէ բոլոր գերեզմանները անբաղձ մեռեալի մը ոսկորները չափաշատակելու: Կան գալլաշուններու չարաղէտ խոնրեր որք ձորերու մէջ թաղուած, դաշտերու վրայ ցանցնուած եւ կամ բլրակներու կուշտերուն վրայ մագլցող գիւղերուն բոլորտիքը կը սլքտան որս մը կորգելու վալլաք բնազդովը:

Բոլոր այս վալլի կենդանիները, այս ամալի սարսաղգեցիկ երկրին տէրերն են, ինչ որ էին ատենօք:

Դարձեալ Հո՛ս, Հոս կան լիճեր, մերթ ժպտելով մեղմ գեփիւտին, մերթ չողջալով վարդագոյն արշալույսին, իրենց ջինջ Հալելին մէջ ծածկելով սեւ գիշերի երկինքներու ստուերները եւ կամ լուսնին ու աստղերուն անպատուձ դաղտնիքները: Անոնց երեքը ծովերու չափ մեծ են, Սիվանի լիճը՝ փառաւոր անցեալի մը թաղուն լիշատակներովը, Ռւրմիոյ լիճը՝ պատմական մեծ կուիներու ողբերգու վիան եւ երրորդը՝ Վանայ լիճը իր պատկերալին, գալլաբազարդ եւ լեռնալին եղերքներովը:

Որչա՛փ չաճախ, Հի՛ն օրերուն, երկար դարերու մէջէն, Հայ աշուղներ այդ երկրին բնութեան գեղեցիկութեանը եւ Վանի կապուտ ջուրերուն դովեսանները երգած են:

Այդ տաղերը ներշնչուած էին Հայրենի մուսաներէն եւ Շամիրամի երգիչներն իսկ՝ իր չաղթանակէն վերջ կախարդուած անոր առասպելներէն Հալաստանի բնութեան գեղօմները կը Հիւսէին այնքա՛ն զմայլելի, ա՛ջնքան բանաստեղծական:

Բարեխտոն կլիմա մը կը արիէ Հոս, թէև մասնաւոր տեղեր երկար, կծու ձմեռներ կ'ըլլան, կան ուրիշ մասեր ալ ուր տարւոյն կէսը կ'անցնի ալրող արեւին տակ: Փազք այդ կլիմային աՀաղին բուսականութեան զանազանութիւն մը կայ պարզելով շատ մը գոյներ եւ քանի մը լեռներու կատարներու վրայ ալ վալլի վարդեր՝ ճերմակ թաւշնայ թերթիկներով ու նորալիթի կոկոններով:

Իրականօրէն Հիասքանչ պարտէզ մ'է այս, ուր կը լսուին սոխակներու ու սլէսպիսի թռչուններու երգող ու սուլող մաքուր խաղերը: Պարտէզ մը, ուր Փասիան Սիրամարդին Հեռ փեսուերնին կը տարածեն մեծ Հովանոցներու նման, ուր աղանիներ ապաստանաբան կը փնտռեն որսորդին մաՀայցո՞ւ գնդակէն, ուրկէ թափառական կոունիլը թեւեր կ'առնէ դէպի արար, Հեռու երկիրներ տխուր լուրեր տանելու ցեղիս ցրած Հայրենասէրներուն: Բազէն ու անդը Հոս կ'աղաստանին, եւ աւա՛ղ, անոնք շատ կողոպուտներ ունին իրենց անօթի կտուցներուն Համար: Վե՛րը, բարձրին մէջ արծիւը միայնակ կը սաւառնի ու կը սաւառնի աւերեալ Մայր Հայրենիքիս վրայ: Վա՛րը, վալլի դաղաններու չաղթական արշաւէն իր Հպարտութիւնը վիրաւորուած, զլուխը մէկդի դարձունելով կ'իջնէ, կը միւրճի վիՀին մէջ . . . :

Այս երկիրը իր Հարուստ ու բեղմնաւոր մակերեսովը ունի մետաղի երակներ, ուր իր մարմնոյն Հիւսկէններուն մէջ կը քնանան մարմարիտի, արծաթի ու ոսկիի թաղուած Հանքեր: Մետաղաջուրերու աղբիւրներ կը ցատկեն երկրի ծոցէն մօր մը կուրծքէն վազող կաթին նման, կամ չաւէտ արիւնի տաք Հեղեղի նման որ Հայրենիքիս կուրծքէն շարունակ կը Հոսին ու կը վազեն . . . :



Եւ ի՞նչ պատմութիւն ունի այս երկիրը: Անոր մէկ ծայրը անց-  
եայի մշտնապատ հորիզոնին մէջ թաղուած է, աւելի քան 4000 տա-  
րիներ առաջ... առասպելներ ու Գողթան երգիչներ, մեզ յանձնած  
են զիւրազանական քաջագործութեանց հատուկտոր մասնիկներ: Յե-  
տոյ դասական ու միջնադարեան պատերազմներու տողանցք մը մին-  
չեւ 14րդ դարուն վերջը՝ արքայական զերդաստանին անկուծը, ու  
ահա 500 տարիներու ողբերգական շրջան մը, ցեղիս ցերուցան բե-  
կորները անձնատուր փոթորիկներու, քաղաքական հայածանքներու,  
արիւնոտ ջարդերու իր գոյութիւնը պահեց մինչեւ ներկայ դարուն  
մահմետական արիւնարբու ժանիքներուն տակ: Երկիրը բաժնուած  
էր երեք տէրութիւններէն Ռուսիայէն, Պարսկաստանէն եւ Թուր-  
քիայէն:

Ահա պատմութիւնը սղաւոր հայրենիքիս...:

Իր պատմութիւնը պատերազմ մը եղած է եւ նորէն պատե-  
րազմ մը եւ պատերազմ մը առանց վախճանի...:

Ատեն մը կար երբ նա իր չաղթութիւնները բարձրաձայն կը  
յայտարարէր որոտումներու նման՝ հարիւրաւոր արձագանգներով  
կրկնուած իր բուն հնչուն երկիւնքին տակ: Ատեն մ'ալ կար երբ եր-  
կիրը կը շարժէր ու կը տքար սոսկալի կատաղութիւնով ու անձայն  
վրիժառութեամբ զօրաւոր թշնամիներու յարձակող ոտքերուն տակ:

Ան ատե՛ն... նա դանդաղ չէր ու դիւրաւ կորուստներ չէր  
տար: Բա՛յց... վերջին հինգ դարերը մութ ու տխուր եղած են:

Մեր պատմութիւնը սկիզբէն մինչեւ այս շրջանը անվերջ, ա-  
րիւնահեղ կռիւններու, Անկախութեան, Ազատութեան համար մղուող  
անդադար պատերազմներու երկար շարք մը եղած է: Պատերազմ-  
նե՛ր՝ ատենօք յարատեւ, ընդիմացող ու յանդուգն եւ աւա՛ղ չուսա-  
հատական: Այս երկիրը չէ թաղուցած որ իր սուրը ժանգոտի, այդ  
իր փառքն է, անմահ ու դիւցազներգու:

Պատմութիւնը այսպէս կ'երկարի մինչեւ հոս, մինչ իսկ այսօր  
երբ աւերի ու մոխրի վերածուած է ամեն ինչ, մինչ կարող էր  
երկրաւոր դրախտ մը դառնալ:

Թ՛չա՛ն Հայաստան...:

Ի՞նչ արիւնոտ, աղետալի ողբերգութիւններ տակաւին կը  
սարքուին այդ ժպտուն, մոգական տեսարանիդ առջեւ:

Ը՛ր Մայր Հայրենիք, դուն դաւաճաններու գերի՞ն պիտի ըլ-  
սկիր:

## ԱՔՍՈՐԱԿԱՆԸ

(Պատկեր)

Գրեց՝ ԱՏՐՈՒՇԱՆ

Աղջիկս, մութը կը սեւնայ, դասերէն հեռու քայրերը բաց են մեր  
առջեւ:

Հայրիկ, ուժաքափ եմ, մտնեմք աւերակին մէջ որուն կիսակործան աե-  
տարակը ցերմըլցած է լուսնակի շողով:

Աղջիկս, կը տեսնեմ գերեզմանի նոնի մը, անոր բունը բոսացած է, հոն  
քաղուիմք այս գիշեր:

Հայրիկ, հայրենիքի խոտերը փափուկ են ու բարձր, անոնց մէջ. քնացուր  
գիս, ինչպէս կախաւ իր ձագուկները քնուց:

Աղջիկս, փափուկ խոտերուն մէջ պառկէ, անոյց քուն քաշէ, գիշերուան ցօղը  
վրադ վերմակ քաշէ:

Հայրիկ, ուժաքափ կը պառկիմ, բող որ քնանամ, մինչեւ որ արեւը իր  
համբոյրներով գիս արքնցնէ:

## Գ Ի Ի Ղ Ը

(Պատկեր)

Հմայֆիդ մէջ ուրախ կ'ապրիս, գի՛ւղ, դուն որ քանընչորս տարի հովուեր-  
գութեան կեանքը սիրցուցիր ինձի:

Զմրուխտի կանաչը կը փայլի ժայռերու վրայ, կը յիշեմ առաւօտներդ,  
ա՛լս, որքան գեղեցիկ էիր, լեռներուդ այտերը ցօղով լուսուած ծիծաղ կը քա-  
նազայրէին շինակաքին մեակուած արտերուն վրայ: Առտուն պարզութիւն էիր,  
իրիկունները խորիդապատուութիւն: Բուխերիկին կաքնորակ ծուխը կ'ամպտէր  
պատկերդ, եւ դուն նոյն պահուն բնութեան ուրուապատկերը կ'ըլլայիր:

Ի՞նչ անոյց էր մութիւն ձայնը, երբ շինականը իր գերանդին կը սրէր գան-  
գակատան շուֆին տակ, ու պատկերդ խայտաճամուկ կը մոզէր գիս երբ ուսադիր  
կը դիտէի երկանի կառքը, ու նստած հայր ու աղջիկ կարմիր հովանոցին տակ,  
երկար ծառուղիէն կը հեռանային: Մութին մէջ իսկ պատկեր էիր, էֆէլինեան  
աւտարակը վիթխարի, բոնակալութեան ողբերգութիւնը կը հիւսէր ինձի, այն  
լուսնակ գիշերները՝ երբ ման կուգայի անոր ստորտը անտառածիր ամառանոցիս  
փափուկ կանաչին վրայ:





ՄՈԿՐԱՏ Խ. ԳԵԼՕՖԵԱՆՅ  
 — Ծնած է՝ Պարսկաստան  
 «Համատան» 1868ին: Գե-  
 րանի արքայական բարձրա-  
 գոյն դպրոցին ընթացքը  
 կ'աւարտէ և ոսկի նշան  
 կ'ստանայ, և 1887ին կ'անց-  
 նի Եւրոպա, ուսումը շարու-  
 նակելու: 1889ին Նաւրէտ-  
 տին Շահ Ս. ԳԵԼՕՖԵԱՆՅ  
 ՅՐ կ'առնու իր շքախում-  
 բին մէջ. կ'այցելեն Եւրո-  
 պայի գրեթէ բոլոր արժու-  
 նիքները: 1890ին Գաւրէժ  
 կ'անցնի և տեղին Հնչակ-  
 եանութեան գործերը կը  
 կազմակերպէ: 1891ին  
 մատնութիւններէ ստիպ-  
 ւած խոյս կուտայ և կ'անց-  
 նի Պարսկաստանի Հիւսի-  
 սային Արեւելեան կողմերը:  
 Իսկ 1894ին, Թեհրան կը հը-  
 ր աւ ի ր ու ի խմբագրելու

ՄՈԿՐԱՏ ԽԱՆ ԳԵԼՕՖԵԱՆՅ

«ԱՍՏՂ ԱՐԵՒԵԼԵԱՆ» քերթը, որուն մէջ ցոյց կուտայ իր կարողու-  
 քիւնները, իբր Սոցիալիստ՝ կը պայքարի պուրժուայի դէմ, միան-  
 գամայն կը հրատարակէ հակառուս յօդուածներ, որոնք պատնատ  
 կ'ըլլան Ռուսաց դեսպանի միջոցաւ քերթին դադարմանը:

1897ին Մուգաֆֆէրէտտին Շահը իր որդին՝ Իշխան Սալարէ Տուվ-  
 լէն կը յանձնէ անոր, դաստիարակելու համար: ԳԵԼՕՖԵԱՆՅ ԽԱՆ այս  
 առթիւ կ'ստանայ General Aide de Campի բարձր պաշտօնը:

1898—1903 ՄՈԿՐԱՏ ԽԱՆ իբրև դաստիարակ և քիկնապահ իշխա-  
 նի, միջամուխ կ'ըլլայ համայնի, Արաբիստանի, Լոռիստանի, (Խու-  
 ժաստան) և Պախթարի կուսակալութեանց գործերուն, և կ'արժա-  
 նանայ բարձրագոյն գնահատումներու: 1903ին կ'ամբաստանուի իբր՝  
 «բնութեամբ անհանգիստ իշխանը գահ բարձրացնելու համար Հայ Յե-  
 դափոխական խումբեր պատրաստող» և երբ իշխանը իրաւ ալ Արա-  
 բիստանի մէջ ապստամբեցաւ հօրը դէմ, Սալարտ Խան 1906ին իր ըն-  
 տանիքին հետ անցաւ Ամերիկա ուր կը մնայ ցարդ:

Տարիներ վաթած է ԵՐԻՏՏԱՍԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ խմբագրութեան  
 պաշտօնը՝ գրելով առաջնորդող յօդուածներ:

## ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

Գրեց՝ ՄՈԿՐԱՏ ԽԱՆ ԳԵԼՕՖԵԱՆՅ

Նոր սերունդ! այս Հծալիչ, այս դիւթիչ ջուխտակ բառերն աչ-  
 քիս առաջ դարուն լիշեցի Հետեւեալ դէպքը, որ շա՛տ և շատ տե-  
 սակէաներով Համապատասխանում է մեր կեանքին, մեր ազգային  
 վիճակին:

1912 թ. ի վերջերում Պարսկաստանի Մէշիզ քաղաքումն էի,  
 երբ Ռուս զօրքը ոմբակոծել և գրաւել էր այդ քաղաքում ամփոփ-  
 ուած՝ Իմամ Ռիզայի ոսկէպատ դերեզմանը, ամբողջ մահճակալան  
 աշխարհի նւիրական ուխտատեղին, և այդպէսով կոտորեալ էր ճշե-  
 ուանդ Իսլամութեան ամբողջ կազմի սլնաշարը, և մի օր նշանաւոր  
 կրօնապետներէց մէկն ինձ Հարցրեց. «Ի՞նչ է ձեր կարծիքը մեր այս  
 դժբախտ երկրի մասին: Արդեօք մեր խեղճ ազգն ու մեր այս գրախ-  
 տանման Հալընիքը, մեր պաշտած Դարէհի և Կիւրոսի Հիմնած  
 Պարսկաստանը ընդ միշտ օտարների ոտից կ'սխա՞ն պիտի մնան:  
 Պարսկաստանը ընդ միշտ օտարների ոտից կ'սխա՞ն պիտի մնան:  
 Մեր սրբատեղիները ոմբակոծուին և մեր ազգային ու կրօնական  
 արժանապատուութիւնը ոչնչանա՞լ...: Արդեօք որեւէ փրկութեան  
 ճանապարհ կամ միջոց կա՞ մեզ Համար: Կարող է՞ք ասել թէ՛ աչն  
 ճանապարհ կամ միջոց կա՞ մեզ Համար: Կարող է՞ք ասել թէ՛ աչն  
 մահճակալանից մեզ արդէն փրկելու մեզ այս կորստեան անդուն-  
 լից փրկելով մեզ տալ մեր ազգային ինքնազոյուլթեան պահպա-  
 նումի սրբազան իրաւունքը և այդ իրաւունքի պաշտպանութեան  
 անհրաժեշտ զօրութիւնը:»

«Այո՛», պատասխանեցի ես, «այդ՝ Նոր Սերունդն է»: Այս Հա-  
 մասու և կտրուկ պատասխանը մի տեսակ Հանելուկ երեւալով իմ  
 խօսակիցին, նա սկսեց Հարցական նայուածքով դիտել Հանդիսա-  
 կանների երեսին: Մի քանի վաղրկեանի լուծիւնից չետոյ կրօնա-  
 կանների երեսին: Մի քանի վաղրկեանի լուծիւնից չետոյ կրօնա-  
 պետը Հարցրեց ինձ. «Բայց ի՞նչ կարողացաւ անել մեր Նոր Սե-  
 րունդը, երբ ոմբակոծուած էր մեր սրբատեղին և այժմ էլ մեր  
 երկրի մեծ մասը, զրեթէ ամբողջութիւնը մեր ձեռքից դնացել և  
 դնալու վրայ է...:»

«Հէնց այդ ըմբռնումի մէջ ցոյց տուած՝ ձեր ազգի թերութիւնն  
 է, որ պատճառ է դարձել ձեր արդի աննախանձելի վիճակին» —  
 է, որ պատճառ է դարձել ձեր արդի աննախանձելի վիճակին» —  
 չեչտեցի ես — «որովհետեւ նա չի կարողացել տեսնել աչն Հրաշալի  
 կենսունակութիւնը և ստեղծագործիչ ուժը որ պահուած է Նոր Սե-  
 րունդի կեանքի բոլոր ծալքերի մէջ և Հեռաւարտ նա դարերից ի վեր



անտես անելով այդ հսկայ ուժը տկարացրել եւ ծախսներձ վիճակի մէջ է գրել իր ազգային գոյութիւնը, եւ այդ՝ անխուսափելի էր, եւ պիտի կատարուէր: Իսկ այժմ, կատարուած իրողութիւնը կերպարանափոխելու համար այս ծերացած եւ ուժաստատ ազգի ուշադրութիւնը պիտի կեդրոնանայ իր Նոր Սերունդի վրայ, նրա մէջ պահուած հսկայ ուժերից ապագայ վերկուծիւն ձեռք բերելու համար: Եւ այդ՝ որքան շուտ, այնքան լուս եւ արդիւնաւոր պիտի լինի ձեզ համար:»

«Ձեր միտքը հասկցայ» — ստաց կրօնապետը — «բայց ասացէ՛ք, խնդրե՛մ, ինչպէ՞ս պիտի կարողանանք երեւան բերել ձեր ակնարկած Նոր Սերունդի հսկայ ուժը:»

«Շատ պարզ ձեռով», պատասխանեցի եւ — «գպրոցները ցանցերով եւ կրթութեան ջահի լույսով:»

«Դպրոց եւ կրթութիւն» եւ . . . կրօնապետի ու հանդիսականների միջեւ կատարուեց խորհրդաւոր նաչուածքների ու գլխի արմբամբոցների երկարատեւ մի փոխանակութիւն, որ շիմացայ համաձայնութեա՞ն նշան էր, թէ Հասկացողութեան ու շիտթութեան:

Ինչ էլ որ լինէր այդ ծերացած սերունդի ներկայացուցիչների մտքից անցնելիս, բայց իրողութիւնն այն էր, որ այդ խօսքերը արձագանգ դասն մի խումբ երիտասարդների շրջանի մէջ, որոնք այդ օրոնանից չետոյ չաճախ ինձ հետ տեսակցեցին եւ համոզուեցին, որ եթէ այժմուանից սկսեն այդ խաւար եւ կրօնական թանձր նախապաշարուծով ծրարուած երկրի մէջ հիմնել կրթարաններ եւ այդ տեղերում մտաւորապէս, բարոյապէս եւ ֆիզիքապէս մշակել Նոր Սերունդը, ապահոված կլինին երկրի ու ազգի ապագայ վերածնունդն ու վերկուծիւնը, որովհետեւ նոր կեանքը բղխում է Նոր Սերունդի սրբտից ու երակներից միայն:

Արդ, եթէ Պարսկաստանի նման մի ընդարձակ երկիր իր 12 միլիոն ներկայացնող ժողովուրդը միասին, իր արատաւորուած արժանապատուութիւնը վերականգնելու, իր ուրուցն եւ անկախ գոյութեան իրաւունքը ապահովելու եւ իր ծերացած՝ ծախսներձ կեանքը երիտասարդացնելու եւ թերեւս անմահացնելու համար սկսում է զգալ կրթութեան խորթափանց լույսի փրկարար անհրաժեշտութիւնը, որպէս զի այդ լույսի օգնութեամբը կարողանայ Նոր Սերունդի սրտի եւ երակների միջից, նրա կեանքի խորքերիցը երեւան հանելու ա՛յն կենսունակ ուժը, այն կախարդիչ շունչը որով ամբողջ ազգը եւ հայրենիքը պիտի վերստեղծուին եւ վերաշինուին, ապա ուրեմն որքա՞ն եւս աւելի աստանդական, ցիր ու ցան եղած, հայրենիքի մեծ մասից զրկուած, թշուառ ու հալածական Հայը, Հայ ազգը պէտքը

պիտի զգայ Նոր Սերունդի ծոցում պահուած այդ դերագոյն եւ փրկարար ուժին . . . :

Ինքաւոր անդամներ աւելին: Որովհետեւ նա, Հայը իր բաղաքական, ազգային եւ տնտեսական, մանաւանդ իր ամբողջ գոյութիւնը ներկայացնում է բղքաւորուած, պառտաւորուած եւ բաժան բաժան եղած մի մարմին, որի ամեն մի բախիւնը ինչ որ դիշակերի մագիլների մէջ, արնաթաւալ կծկուում, տանչուում, տատապում եւ մաշուում է անյուսալի եւ անդարձ կերպով . . . :

Նա ունի մի հայրենիք, որ օտարի ձեռքով հանրային դերեզմանատան է վերածուել դարերից ի վեր: Նա աշխարհի մէկ ծայրից միւսը ցրուած՝ թափառական Հրէայի նախնածն է զբղուում . . . : Նա թրանսիբրանիայի գաղթակիւնումն ահարկու կուրթին հարիւր հազարներով դո՛ւ տալով, եւ Շահ Աբասի նման ճիւղի պատրաստած արեան լճերի միջից անցնելով Պարսկաստանում ուժաստատ եւ կիսակենդան շունչ աննկուց չետոյ, Կոփկասի եւ Ռուսաստանի մէջ հանդստութիւն ուղեց փնտուել: Եւ այդ արիւնտո թափառուներից, հալածանքներից եւ թշուառութիւնների շրջաններից անցնելով նա կանգ է առել նաեւ Սալանտեան ափերում: Զուլումի եւ տառապանքի սաստկաշունչ հոգմերը եւ անդամազրկի փոթորիկները Հայն իր երկրի, իր հողի վրայից արմատահան պահելով նրան քշեցին օտար երկրի տակ, եւ օտար հողի վրայ ցրուեցին եւ ցանեցին, այնպէ՞ս երկրի տակ, եւ օտար հողի վրայ ցրուեցին եւ ցանեցին, եւ Կոփկաս, Եւրոպայ եւ մայր հայրենիքի վրայ տարածուած են դժբախտ Հայ ազգութեան դանաղան մասերը, այն էլ ուժաստատ եւ արմարած . . . : Իսկ հայրենի՞քը, Հայի ժառանգական երկիր՝ Հայաստանը, ո՞հ, այդ դրախտը, մարդկային ցեղի այդ որսանք աշխարհ եւ աշխարհին թշնամու, Արիարտանի հարազատ ժառանգների դիւալին շունչից խորշակահար, մոխրակոշտի վերածուած՝ իր հարազատ դուակների դիակների վրայ արիւն արցունք է թափում . . . :

Հինգ դարեան այս արիւնտո ու թշուառ կեանքը անխուսափելիօրէն պիտի ծերացնէր, քամէր եւ ուժաստատէր Հայ դանդուածը, որը մեշուած ու սղծուած կեանքի պայմանների տակ իր վերկուծեան եւ հանդստութեան համար ուրիշ միջոց չտեսաւ եթէ ոչ «համա-կերպուել ճակատագրին», հեռեւել՝ բախտին» եւ «օգտուել հանդամանքներից»: Զէնքեր, որոնք չատուկ են միայն հալածուած ու անդէն, ապիկար ու անորաշտպան ժողովուրդներին:

Բայց համաշխարհային աղատագրութիւն տեսող արդի լուսաւոր դարը բարեգուշակ մուստիկի նման մեզ համար բերում է միեւնոյն պատգամը, ինչ որ արուեց դերեզմանից չարութիւն առնող Յոյն, Իտալացի, Պուլկար, Սէրպ եւ այլն ժողովուրդներին, ցոյց տալով











Երևոտասարգական թարմ ու առողջ շունչն է հարկաւոր մեզ նա-  
հատակ հալընների վերակենդանութեան համար, մանաւանդ որ վաղ-  
ուան ազատ եւ ինքնավար Հայաստանը կրթական, գիտական, ակա-  
նիքական, բժշկական, անտեսագիտական, հողագործական, գիււ-  
նագիտական եւ կառավարչական կազմակերպիչ եւ ղեկավարիչ ու-  
ժերի պէտքը պիտի զգայ եւ այս բոլորը պիտի հալթալթէ մեր Նոր  
Սերունդը:

Շա՛ւ մեծ դեր է պիտի ստանայ մեր Նոր Սերունդին Ազգային  
վերսանդձուծի դարձի մէջ, եթէ նա գիտակցի իր կոչմանը եւ սկսէ  
պատրաստուել այդ նւիրական պարտականութեան համար քանի որ  
ուշ չէ:

Ազգերի արժանիքի նժարը միշտ իբրանց Նոր Սերունդի ձեռ-  
բունն է եղել, նոյնն էլ եւ Հայինք:

Երանի՛ թէ այս նկատմամբ վշտահար Մայր Հայաստանի ա-  
կրնկալութիւնը շատով իրականանար, թէրեւս մենք էլ այդ երջան-  
կութիւնից բաժին ունենայ ինք եւ ապա մի մխիթարում սիրտ գե-  
րեզման իկավարիչով ծագիլէինք:

Նոր Սերունդ, Նոր Սերունդ! Գարբիէլ հրեշտակապետի փողի  
հնչումովը կարող եւ լաջութիւն տալ մեռելներին... Շարժէ՛,  
չարժէ՛ որ ժամանակը անշնուն է: Շարժէ՛ եթէ չես ջանկանում գու  
ազդդ վերջնականապէս թաղելու...  
Նիւ Երբք, Օգոստոս 23, 1915

### ՄՏԱՃՈՒՄԻ ՇԻԹԵՐ

Կնոջ սիրտը նման է հանքի մը, որքան փորեա անոր խորը երբա-  
լու համար, այնքան աւելի բանկագին նորութիւններ կը գտնես հոն:

Այն երկրին մէջ ուր ընկերվարութիւնը կը տիրապետէ, այնտեղ  
անարդարութիւնը և շահագործումը բնակարան չեն կրնար գտնել:

Յայտով ապրողը ինքն է որ անօթութիւնը տան սեմէն ներս կ'առ-  
նէ, առանց նեղութեան ու աշխատանքի շահ չկայ:



ԼՈՒԹԵՐ ԿՈՐԿՈՏԵԱՆ. — Ծնած է 1889 թ. Օգոստոս 30 ին,  
Եղովեա: Աղբատութեան հետեւանօք, կանոնաւոր դպրոց յա-  
նախած չէ: Ինքնօգնութիւնը եղած է իր դպրոցը՝ այդ միջոցին կը  
գարգացնէ իր բանաստեղծական հակումները: Իր գրական ուսու-



ԼՈՒԹԵՐ ԿՈՐԿՈՏԵԱՆ

ցիչը եղած է, մեր գաւառացի գրագէտներէն յայտնի դէմք մը՝  
Յովի. Գազաննեան: Աշխատակցած է՝ մասնաւորապէս գաւառա-  
բերքերուն, ինչպէս՝ ՆՈՐ ԱՅԳ, ՀԱՅԿՈՒՆԻ և ԻՐԻՍ, սիրային ու-  
տանաւորներով: Ժամանակ մը վերջ, կուգայ Ամերիկա, կ'աշխա-  
տակցի «ՀԱՅՐԵՆԻՒՄ»-ին:



Գրեց՝ ԼՈՒԹԵՐ ԿՈՐԿՈՏԵԱՆ

Մոռցայ սերն ևրգեյ, քանի արի՛ւն կայ,  
Քնարս փոխեցի ուրմբի որոտիև,  
Ու ևրգս եղերե՛րգ դարձաւ տրամագիև,  
Մոռցայ ամեն բան քանի աւեր կայ:

Հոգիս գոհերու մրրիկն է հագեր  
Հերո՛ւ սուրիդ վրայ անեծ՛ք շողացուր,  
Պատիւն է կախուեր կոյսերուն անգօր,  
Հերո՛ւ լոյս հոգիս սերեր է հագեր...:

Սիրոյ ու գութի Աստուածն է մեներ,  
Ես ի՛նձ սխերիմ, վըրեժով ուխտեալ,  
Մայրեր ձեզ կ'ողբամ, մայրեր մահացեալ,  
Հին հայուն պաշտած Աստուածն է մեներ...:

Վերջարոյսին մօտ գիրկը մեկնութեան,  
Մանուկներ եօթի... ձեր սուգը կուշամ,  
Դո՛ւք պըսակումը իդներուս գտում,  
Դո՛ւք լոյս ապագա՛ն վաղուան Հայութեան:


Հերոս սուրիդ վրայ ՎՐԷ՛Ժ քանդակէ,  
Տառապանքն Հայուն վախճանին հասար,  
Յարով արցունքով մեր օրերն անցար,  
Հերոս սուրիդ վրայ ԱՐՇԱԼՈՅՍ կերտէ...:

\* \* \*

Մոռցայ սերն ևրգեյ, քանի արի՛ւն կայ,  
Քնարս փոխեցի ուրմբի որոտիև,  
Ու ևրգս եղերե՛րգ դարձաւ տրամագիև,  
Մոռցայ սերն անուշ քանի գուրում կայ...:

ՆՈՒԷՐ Ե. ՍԱՖՈՒՆ

Մթնածեւ անտառին անթափանց, անծալրածիր եւ արհաւ-  
րալից գիշերուան մէջ բանտուած գերդ թռչուն՝ թափառկոտ մտա-  
ծուաներով բեռնաւորուած՝ դողաչար կեանքը կ'ապրին նժուէհի:  
Սարսուղը եղիկ է մթութիւնը իր մեռելական կեանքով, եւ աւելի  
մաշարոյց՝ իր արդանդէն արտահոսող հեղձուցիչ շունչով:



ԳՈՐԾԻԶ—ԵՄԲԱԳԻՐ «ԵՐԻՏԱՍԱՐԻ ԶԱՅԱՍՏԱՆ»Ի Ե. ՍԱՖՈ

Նենգամիտ խաւարի ծալքերուն մէջ, ուր կարծես ամբողջ  
աշխարհի չար սղիները թագնուած կը մրափեն արիւնի նախճիրէն  
արբեցած, կը հեւան, կը մարմըին, կ'անկանան եւ մերթ ընդ մերթ



կը լեռնանան դիակնասէր ազուաներուն կռիւնքը, եւ չարադուշակ բուերուն տիրահիւս ողբը, որուն մէջ կը թրթուայ ամբողջ ցեղիս հառաջանքին կոտորացող վանկերը:

Պաւարի ուկիւնքսին մէջ կը խաբխաբիմ Յոյսի նշույլի մը պապակը շրթներուս վրայ, Լոյսի աղօս կայծի մը խնդը դարձած: Աչքերս կոպիճներէն խելալեղօրէն դուրս ցալտած՝ մթութեան քօղը պատուել եւ անոր մէջէն դէպի Առաւօտեան Աչքը սաւառնիլ կը տենչան, սակայն ի դո՛ւր, կորած է ամեն Յոյս, Լոյսը անդարձ իր հրաժեշտի ողջօջը երգած է, դէթ այսպէս կը փոփսան ականջիս մշտադաւար տերեւները անտառի ծառերուն, ու խաւարը իր մահահետ դիւերգութիւնով եւ դաժան ու դժոխածին որդիներու վարսերով հիւսւած ձայնով կլանած է տիեզերքը համայն:

Աչքերս չողնած՝ խաւարոջին մէջ՝ ինքնաբերաբար կը դոցւելին հոյլ ի հոյլ շրջաշրջող ուղիներու երամը անտեսելու, ու չունկնդրելու համար խաւարին ջղապրկուած շրթներուն արանքէն դուրս պոռթկացող թունալից համերգութիւնը՝ մատնեբոլս կը դոցեմ ականջներս եւ ամբողջ էութիւնովս դաչրոյթ կտրած կը դոցեմ սարսափի խորշակով ցնցւած. — Լո՛ւս... Լո՛ւս... Լո՛ւս... ապրիլ կ'ուզեմ...:

Ձայնս մթութեան ուկիւնքի ալիքներուն անձնատուր, կը բազխուի բարձրակատար կաղնիներուն հսկայակերտ թեւերուն, վարը, մթութեան երախին մէջ ցրցքեւած թուփերուն, որուն արձագանքէն ազուաներու չեղակարծ սթափումը կը խոռովէ, կը փոթորկէ, կ'ալեկոծէ անտառին խորհրդաւոր լուծիւնը: Հեռուէն կը հասնին զահանդելի ոռնոցներու կտորները, այլազան կենդանիներու աչլազան համերգը սարսուղդեցիկ, մահերգակ:

Աչքերս կը բացւին ու խաւարին մէջէն կը նշմարեմ անոնց վալրազ բիբերը ահեղօրէն բացւած, որոնք կը սեւեռնին եւ մոլեկան նայւածքներով գիշերը բղբուել, կլանել կը ճարտարութիւն:

Երակներուս արիւնը կը սառի, մարմնուս մէջէն ցուրտ սարսուռի մը ճամբորդութիւնը կ'ազարեկէ գիւս, ու աչքերս կսկսին արցունքոտիլ, որովհետեւ կեանքի դարնան սեմէն դեռ նոր անցած՝ Անձանօթին անողօք երախին մէջ աչքերս լաւիտեան փակելու դաժան իրականութիւնը կը պատկերանայ ամեհիօրէն:

Մահւան ահազանգը խուլ հեկեկանքով մը ընդհատ-ընդհատ կը տարածուի, կը խեղդուի անտառին խորախոխոմ ձորերուն մէջ...:

— Լո՛ւս... Կենդանութիւն... Ապրիլ կուզեմ դեռ... Անձանօթին սարսափովը մտրակւած դողաչար շրթներէս դուրս կը սպրդին նուաղկոտ շեշտերով, ինքնաբերաբար:

Ապրելու տենչը ներսի կողմս հրարուխի նման կը ցնցուի իր

ամբողջ էութիւնով: Իսկ Անձանօթին սանձաձայնը կը թրթուայնէ ծառերուն տերեւները, որոնք սեւ շղարշով շղարշւած՝ մեղմ գեպիւնին համբուրին եւ օրօրին կարօտովը կ'աչրին:

Շատ մօտէն հնչող մահւան զահանգական տաղերգէն խելւած՝ իսկ միւս կողմէ մեղմ եւ կենսապարզ եւ գեպիւնի մը համբուրէն վերանորոգւած, կը դառնամ դէպի աջ ու հեռո՛ւն, շատ հեռո՛ւն, ծառերու արանքէն կը նշմարեմ աղօս լուսի ճառագայթ մը բեկրեկւած: Աչքերս վաչրկեանական կը կտրեն անջրպետը եւ ալը լուսի ծալքերուն մէջ կը կարգան. — «Ապրելու համար միայն ապրիլ ցանկալը բաւական չէ, գոյութեան կռիւը, կեանքի պայքարը պէտք է մղել առնական քափով ճամբաներէն վերացնելու համար այն խոջնդոտները, որոնք կ'արգիլեն դէպի Լոյսին, դէպի ազատութեան կայանը քալելու:»

Անձանօթին շունչը ամբողջ խաւարին եւ անտառին մէջ կը հեւայ: Ազդաները աչտաչար խուժումով մը դուրս կը սուրան մահահոս անտառէն: Կենդանիները խուճապական տողանցումով աւելի խորը, թաքթաքուն ձորերը կը խուժեն սարսուղդեցիկ ոռնոցները ցանկով չորս գին:

Ամբողջ անտառը կը հեկեկայ խաւարին մէջ...:

Անդիմադրելիօրէն սպրելու տենչս գերմարդկային ոյժէ մը զսպանակւած դուրս կը պոռթկայ ու ես թեւերս սոթթած՝ որպէս սուրճ ամեհի՛ կը մոնչեմ չտաջ խոջանալով:

— Ճամբայ տէ՛ք, ես ապրիլ կ'ուզեմ, լուս կ'ուզեմ, կայծ կ'ուզեմ կիսամեռ մարմնուս...:

Պաւարը կը բղբուեմ, կը պատուեմ, թուփերն ու ծառերը կը կտրտեմ ակունքերովս, կը սլանամ արծւի նման մարմինս հազարաւոր վէրքերով ծածկւած, արիւնլայ: Այս անհաւատար: Կռիւր, խաւարային մենամարտը, սպրելու տենչս աւելի կը հրահրէ, ու հերոսական ճիգերէ չետոյ հեւտապատ երբ կ'իջնամ պլալացող լուսին առջեւ, ականջիս կը հնչէ:

— Կ'ապրին անոնք՝ որոնք կեանքի գոյութեան կռիւին մէջ յաղթական դուրս կուգան: Դուն հերոսաբար մղեցիր այդ կռիւր եւ ապրելու իրաւունքը ունիս, պիտի ապրիս:»

Գրեց՝ Արա-Ոսկեանց





ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՎԵՐՉ  
ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Գրեց՝ Ա. Մ. ԱՐԱՄԵԱՆ

Պատերազմի փողը պոռոտ՝ մարտահրաւէր կը հնչէ,  
Ժամն է ահա բաղխումներու անիծեալ,  
Ռազմադաւար դիակներու ահեղ շեղջով կը պարծի,  
Ուր մոլուցքը հրետներու լեզուներով բոցեղէն՝  
Գագանութիւնը կը պատմէ մարդկութեան...  
**Քանի՛ կիներ որբացած՝**  
Այսօր իրենց մայրութիւնը ողբացին...  
Քանի՛ մայրեր նգովեցին  
Հարստութիւննին, արգանդն իրենց բեղմնաւոր...  
Քանի՛ սիրուն պարմանիներ եղծ մահուան մը դալուկով  
Աչքերն իրենց եղնիկի պէս խեղճն, անխօստ՝ փակեցին...  
Դիակները, ահեղօրէն մորթոտուած,  
Անգերեզման, անպատանգ, անարտասուք լուեցան...  
Թագակիրներ, գագանօրէն մոլեցնած,  
Ծովածաւալ բազմութեամբ  
Մէկգմէկու յար կ'ըբաղխին դարձարձիկ...  
Մեն մի բաղխում անթիւ կեանքեր կը մարէ...  
Բերբի դաւտերն ռազմավայրի՛ փոխուեցան,  
Ուր երբեմնի մեռնող սերմը հողին տակէն կեանք առած  
Լի բարութեամբ կ'ընծիւղէր...  
Հողն այդ այսօր բոսոր արիւն կը ծծէ, մա՛հ կը փսխէ...  
Ո՛ւր ես, Հոմե՛ր, ժամանակին սլացքը ետ դարձուցած՝  
Կայան-կայան ետ կը բռնի վաթերլօ,  
Վաթերլօյէն՝ Թերմոփիլէ, Մարաթոն,  
Մարաթոնէն՝ Տրովադա հոյանուն...  
Որուն կարմիր սեմին վրայ խաղաղութեան դիցուհին  
Կանգնած կուլա՛յ, քէ ինչո՞ւ  
Կը յօնանայ այսօր բարի նեմեսիս...  
Ելի՛ր, սրբէ ժանգոտ լարերը տաւիղիդ մահախօս,  
Անգամ մըն ալ դիակնարայր տաղտուկ տաղեր տողելու...  
Ո՛վ թագերու վեհապետներ ամբարիշտ,  
Որ գահերու վրայ բազմած վերամբարձ՝  
Ֆարոյական դուք օրէնքներ կը հիււրէք,—

Սպաննողին մահու պատիժ, բանտ ու զնդան կը վնոէք,—  
Այսօր միայն յանուն թագին ձեր գահին,  
Դո՛ւք քանիներ սպաննեցիք վատօրէն...  
Ի՞նչ օրէնքով պիտ' պատժուիք, ձեզ ո՞վ, ձեզ ո՞վ պիտ' պատժէ:  
Սուրբ խաչելոյն յիշատակին  
Կեղծ պաշտամունք, աղօթք ու խունկ կ'ընծայէք,  
Իսկ դեռ այսօր նենգօրէն՝  
Հուր, հրացան, սուր ու սուին զիկզակելով,  
Խաղե՛ր, խաղե՛ր ձեւացուցած՝ մէն մի մարդու բաշխելով,  
Վա՛տ Արքաներ, գիտե՛ք արդեօք, որքա՛ն մարդիկ խաչեցիք...  
Սեւ օրերու այս ռեկրներն ո՛ւր պիտ' յանգին, ո՛վ Աստուած,  
Գերերկրային օրէնքներդ արդեօք տեղի՞ պիտի տան  
Սա երկրաւոր հիւլէներու օրէնքին...  
Ո՛ւր կը վազէ՛ք կո՛յր ամբոխներ,  
Գարշ վրէժի մոլուցքը պիտի ակոսներնուդ մէջ խածած,  
Զե՛ք լսե՛ր դեռ կոհնչը սեւ ազուաներուն խունկերս,  
Որոնց յայրատ կտուցներէն յափրացում մը կը կարի,  
Զեզմէ առաջ գացող մարդկանց  
Բիբերն անյագ փառակելէն կտցահար...  
Անմի՛տ գիւնոր, ինչո՞ւ համար  
Սպաննեցիք այդ հէ՛ք տղան, ա՛յս, ինչո՞ւ,  
Կը ֆանչնայի՞ր գիւնը երբեք. ո՞ւր տեսար,  
Քեզ ի՞նչ ըրած էր գայրոյթը՞ գրգռելու,  
Կրնա՞յ մարել վրէժածարաւ սեւ կիրքը  
Տաք արիւնը գաւակի մը մէկ հատիկ,  
Որ պիտ' ըլլար անմիտքար իր խեղճ մօրը ապաւէն:  
Դարձո՛ւր սուրբը իր պատեանը, նետուի՛ր գիրկըս, ո՛վ եղբայր,  
Սիրոյ ոգին գայրացած՝ դարերն ի վար կը պոռայ,—  
«Ո՛վ մահասփիւռ արքաներ,  
Դուք որ անգին արեւներ կէսօրին մայր մոցուցիք,  
Ու լուսնակին վարեքը արիւնի հետ շողուեցիք՝  
Ոնրաքանդակ ձեր անդրիներն ծեփելու...  
Դուք որ հեղուկ կարմիր կեանքը մարդկութեան՝  
Զեր թագերով գիւնի պէս ըմպեցիք,  
Նախանձնարարք ձեր վրէժին հուսկ ծարար մարելու...  
Դո՛ւք, ոնրատոնմ Հիդրաներ,  
Դուք պիտ' իյնաք ծանրահարուած լախտին ներքեւ պարտասած,  
Պիտ' յափանե՛մ ձեր դաւերը ոնրահիւս,  
Պիտի ֆանքե՛մ ձեր անօրէ՛ն օրէնքներն  
Եւ անկրօ՛ն կրօնքն ալ...»



Անխառն սիրոյ ի՛սկ կրօնքը  
Պիտ՛ աղփաղփի արեւներու հանգունակ...»  
Եկուր, ընկեր, արդ լֆելով վատ կրօնքը  
Թնդանօթին, վառօղին,  
Ապաշաւով եկուր երթանք անեղծ սիրոյ բազինին...  
Ուրկէ՛ օր մը, անեռ՛ւտ օր մը, պիտ՛ ծագի:  
Պերն արեւը հաղաղութան, Փրկութեան,  
Սրբօծելու ազգ ու ազինք տառապող...:  
Ու թէմիսը այդ բազինին երկնաճանդակ բարձունքէն,  
Զիքեցիի նիւղն ի ձեռնին  
Մայրագորով ու գգուանուց բազուկներն  
Տարածելով գլխուն վրայ սա տարագիր մարդկութեան,  
Թեւատարած՝ պիտ՛ պատգամէ աւետիսներ երկնախօս.  
— Հանգստութիւ՛ն, Արդարութիւ՛ն, Խաղաղութիւ՛ն և Անդո՛րր...:

Ֆրէզնօ, Քալ.

### ԳԱՂԱՓԱՐԻ ՔԱՆԴԱԿՆԵՐ

Ո՞վ գիտէ, թերեւս չարերը և ո՛չ մէկէն սիրուող դժբաղդներ են:  
Պահպանողականները ամենէն յամառ էշերն են մարդկային ընկերութեան մէջ:

Եթէ ամեն ծեծ ուտող հերոսանար, անուշտ լաւ բաղդ մը կը վիճակուէր էշերուն:

Ազատութիւնը ծառ մըն է, որու սնունդն է բոնապետներու արիւնը:

Աշխարհի պատմութիւնը արձանագրած չունի բոնապետի մը անուն, որը իր բաղձանքին հասած ըլլայ, բոլոր բոնապետներն ալ կէտնամբուն վրայ ինկած են:

Քեզ մէկ անգամ խաբող անհատի դէմ բարկացիր, իսկ երբ այդ անհատը երկրորդ անգամ քեզ խաբէ, սաստիկ բարկացիր դուն քեզի դէմ:

### Դ Է Պ Ի Կ Ռ Ի Ի

Հ ամայնակույ հրդեհին մէջ սահաւոր,  
Զագիր, վայրագ բուրք բոնակալ դարաւոր,  
Խանձէ, փօրէ ողջ հայութիւնն անպաշտպան,  
Բռնութեան գահը պսակելու անասան:

Ն սեմանան քաղաք եւ գիւղ բազմամարդ,  
Մոխրաքաւալ գետին իյնան գունդագունդ,  
Յնցլի աշխարհ, եեծէ՛ ծերունկն ակեգարդ,  
Շիջի՛ Հայուն արեւ ու կեանք, պատէ՛ մութ:

Զ քնաղ դաշտեր կը լեռնանան գերդ բուրգեր,  
Դիակներով հայ քաջերու դիւցազուն,  
Արիւն հոսն բոլոր գետեր տիր, գիւշեր,  
Թուրքեր, ֆիւրտեր դիակ փոխն օրն ի բուն:


Ա րիւնագանգ այս օրերուն անտարբեր  
Եթէ մնաք երիտասարդ, ծեր եւ կին,  
Հագար անէծք եւ նախատինք մահաբեր,  
Պիտ՛ դրոշմէ վազուան սերունդ ձեր նակտին:

Կ ենաց-մահու պայքարն է այս ամենի,  
Օ՛ն քաջարի մարտիկներ գաղափարի,  
Փօրենք գահը բիրտ բռնութեան վայրապար  
Կերտենք Հայուն Հայաստանըն ինքնավար:

ՄԱՐԻՅԱ Խ. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Փրովիտէնս





ԱՐԲՆԵՐՈՒՆ ԱՊԱՍՏՈՍՈՒՆԸ

## Ա Հ Ա Ջ Ա Ն Գ Ր

Գրեց՝ Սուրբն Պարթեւեան

Կովկասը ճգնաժամի մէջ էր: Նոյեմբերեան սանձափոսոր խան-դավառութիւնները՝ ուսս սահաւաթիւ բանակին ու Հայ կամաւորական դուռներուն ընդհանուր նահանջին հետ՝ տեղի տուեր էին Համատարած անդուշի մը որ տակաւ պանական սարսափի Համեմատութիւններ կ'առնէր:

Ռուս-Հաշկական շանթաւարիչ չարձակողանքն Հանդէպ՝ Թուրք դարձնուան չեղակարծ ու չուսահատ կորովայրկուծ մըն էր եղեր: Օսմանեան լաւագոյն տրամադրելի ուժերը՝ Շիւքրի եւ Իզզէթ փաշաներու հրամանատարութեան տակ՝ Հայաստան զրկուեր էին: Էն-վէր փաշա իր անփառունակօրէն համբաւաւոր Զրդ. զորաբանակով անոնց ետեւէն ածապարեր էր, եւ Գերման գինւորական առաքելութեան պէտ՝ զօրավար Լիման Փօն Սանտէրս փաշա անոնց օգնութեան հասեր էր՝ տեւտոն սպաներու ստուար խուճրով մը:

Եւ ահա՛, Պաթուժի Հարաւակողմէն, թշնամին, սպառնական, կը ցցուէր Ռուս սահմանագլխին վրայ: Արտանուշն արդէն գրաւուած էր Թուրքերէն, որոնց ռազմագիտական ծրագիրը կը մղէր զիրենք դէպի Արտահան, Կովկասեան ճամբաներու այդ քառուղին: Սարիգամիշի եւ Օլթիի մէջ Ռուսերն՝ երկար դիմադրութիւն մը ցոյց տալէ վերջը՝ թուով դերազանց չարձակողներուն դէմ կը ստիպուէին նահանջել՝ սպասելով օժանդակ ուժերու:

Գերման սպաներու եւ Երիտասարդ Թուրքերու երազն իրադործուծի կէտին մօտենալ կը թուէր. գրաւել Ղարսը, եւ անկէ սպառնալ Տփղիսին, Երեւանին, Պաքուին, այս փալտուն չաջողութեամբ ոտքի հանել բոլոր ուսսական խաւանները, ինչպէս նաեւ կովկասաբնակ Պարսիկ Շիւնները, վերջապէս ստիպել Ռուսիան իր ուժերն աւստրիական ու գերմանական ճակատներէն ետ քաշելու, պաշտպանութեանը վագելու համար Կովկասին, որ կաշարութեան «գոհարը» չորջորջուած էր նոյն ինքն Նիքօլա Չարէն, իր Տփղիս աչգելութեան առթիւ՝ քաղաքապետ Սատիսեանին ուղղած պատասխանձառին մէջ: Այս էր տաճիկներուն հետապնդած նոր իտէալը, 1878ին իրենց ջախջախուծին չի չուսացուած փոխադէժը, զոր գերման նենգութիւնը կը խոստանար իրենց:



Ռուսական հողի վրայ թուրք լառաջխաղացումն աւելի դանդաղ եղած էր նախ՝ քան դաշն կանխող ուսւ չարձակողականը դէպի կարին. բայց անոր բարոյական ազդեցութիւնն անմիջապէս զգալի կը դառնար սահմանակից Մահմետական հոծ տարրերուն կողմէ: Համխալածական փրօփականտը կովկասի մէջ իր էնթրիկները բազմապատկած էր դադտնի պատուիրակներու միջոցով: Եւ մինչ թաթար մտաւորականութիւնն ու առաջնորդող դասակարգերը դէպի Ռուս պետութիւնն իրենց հաւատարմական գաղցուծներուն մասին երդուծպատառ կ'ըլլային, անդին Օլթիի, Արտաշանի, Սարիղամիշի իրենց հաւատակիցները կը պատրաստուէին գրկարաց ընդունիլ կովկաս խուժող թուրք զօրքն ու անոր միանալով անձնատուր ըլլալ Հայ աբիւնի երազուած խրախճանքներուն:

Այս համխալած մեղսակցութիւնն, ինչպէս նաեւ Պաթուճի հարաւային շրջաններն ապրող Լազերու ռազմիկ ողբերգութիւնը կը թուէին դիւրացնել Փօն Տէր Կօլց փաշայի Երիտասարդ թուրք աշակերտներուն արկածախնդրական լանդուզն արշաւը դէպի կովկաս, ա՛յն միջոցին իսկ երբ կովկասեան մեծ բանակը կալիցիոյ մէջ ռուսական դրօշակը բարձր բռնելու համար կը մարտնչէր:

Կովկասահայր մինակ կը մնար՝ ուսւ նահանջող անբաւական ուժերուն հետ, դիմադրաւելու համար ահեղ վտանգը, որ կը սպառնար սահմանադիւխէն:

Թույլ ու հեշտասէր Վրացին՝ եթէ չայտնապէս չէր դաւակցեր Ատրթաթար-Պարսիկ արիւնխախճ համերաշխութեան, պատրաստ կը բաւէր որ ան չի վնասէր իր առօրեայ բարօրութեան, չի խանլեցուն բաժակներուն առջեւ, վայելքի իր բաղնիքներուն մէջ, Վրանութիւններուն մէջ՝ այլապէս չէր տազնապեր խուժուծին հանդէպ Եւ չետոյ՝ Հայուն խոշտանգուծը, նուազուծն ու նուաստացուծ տեսնելու ներքին խուլ մարմաջը, շատ մը անպատեհութիւններու եւ անախորժութիւններու հետ հաշտուիլ կուտար նախանձարեկ Վրացին, որ պիտի յօժարէր կովկասը՝ գեղեցիկ աղախինի մը պէս՝ չանձմիտ անբարտաւանութիւնն ու սլասերած մեղկութիւնը խնայուէին, եւ Հայն ըլլար աղէտքին ամբողջ բեռան տակ ճգմուողը:

Եւ ահա հնչեց ահազանգը, կովկասի մէկ ծայրէն միւսն՝ անկարագրելի ալէկոծուծի ու ճգնաժամային չիթութեան մատնելով

Հայ բնակչութիւններն ու Ռուս պաշտօնական մարմինները: Թուրք չարձակող բանակը, Գեկտեմբերի վերջերն Օլթին դրաւելէ չետոյ, արագ վաղըով մը կ'երթար Արտաշանը կը նուաճէր, մինչ իր միւս թեւը Ղարս-Սարիղամիշ երկաթուղին կը կտրէր Չաթախի մօտ: Տաճիկ չարձակողականը կանգ չէր առնէր Արտաշան, այլ քիչ ատենէն մինչեւ Ախալքալաք հասնելով, կը սպառնար Տրփիւսին՝ հաղիւ երեք-չորս օրուան հեռաւորութիւնէ՝ մը:

Վաչրկեանը սահմուկիչ, դահանգեցուցիչ խուճապիւնն էր ամբողջապէս: Կովկասի քաղաքային ու գինուորական իշխանութիւնները դերադոն անձկութեան անողոք մաղիքներուն մէջ չանկարծակի բռնուած, ի դուր աչքերնին կը դարձնէին, կը սեւեռէին դէպի Բեթրուկրատ, ստեղծուած դարհուրելի կացութեան միակ դարմանը, ռազմական օգնութիւն, սպասելով, խնդրելով, կանչելով թախանձադին... Կովկասէն տեղացող բոլոր ստիպողական հեռաղիւններուն, միօրինակ ու մահալճուային «Ոչ-կարիմք»ով մը կը պատասխանէր Մալր-Ռուսաստանն, Աւստրօ-Գերման ճակատներու իր վիթխարի ճիգովն համադրաւուած:

Սահմանադիւխին վտանգուած մասերուն մօտ վաչրերէն, Ղարսէն, Արեքսանդրուպօլէն եւ ուրիշ երկրորդական կեդրոններէ փախստական հասնող քաղքենիներու կարաւաններ՝ կովկասի մալրաքաղաքը կը քաջալերէին անբարոյացուծի հետզհետէ աւելի անվերապահ իր արտայայտութիւններուն մէջ: Լքուծը շուտով դասալքութեան տգեղ ու ծամածուռ կերպարանքը կ'առնէր հոն, եւ մարդիկ կը շտապէին կոնակ դարձնել սպառնացուած հաչրենի երկրին, իրենց անվթար մորթերուն ապահովութիւնը փնտոելու համար անսահման Ռուսաստանի ներքին հանդրուաններուն վրայ: Տիգրիսէն սկսան մեկնիլ միւլիոնատէրները, աղաչին ջոջերէն ոմանք, ընդ որս այնպիսիներ ալ՝ որոնք հասարակական փրկութեան դործին անուսով կաղմուած մարմիններու անդամ նշանակուած էին: Դրամատուներու դանձերն երկրին ներսերը փոխադրելու ձեռնարկուած էր արդէն: Փոխարքալութիւնն, իր ամբողջ պաշտօնէութեամբ, կը մտածուէր անչապաղ տանիլ Սթաւրօթօլ հաստատել: Բայց ինչ որ ամենէն ողբալի նօթը կը կաղմէր նահանջի այս ընդհանուր շարժումին, ատիկա պաշարող, մաքառող կամքի պակասն էր՝ Տիգրիսի միջազգային բարձր դասակարգներն ու ահուծրներն չատկանչող: Թշնամիին անձնատուր ըլլալու առնազուրկ տրամադրութիւն մը, կոխէն խուսափելու ողորմելի արտօրանք մըն էր որ երեւան կուգար եւ ստրկավայել համակերպութեան վիզ կը ծուէր անպատկառօրէն, երբ տակաւին կովկասեան դիմադրութիւնն իր վերջին բառը չէր արտասանած, երբ վտանգը դեռ Տիգրիսին հասնելու համար երեք օրուան ճամբայ ունէր



կտրելիք, նույն իսկ եթէ կրնար անարդել չառաջանալ:

Վրացի ազնուականութիւնը տուաւ քաղաքացիական մատուցած տուութեան ազդանշանը: Անիկա «պատմական» ժողով մը սարքեց, ուր գումարուած ասպետողի «իշխան»ներն, երկար ու հանդիսաւոր խորհրդակցութիւններէ ետքը, կ'որոշէին Փոխարքային զիմել, խնդրելու համար որ Տփղիսը թշնամիին չանձնուի, առանց զիմադրութեան, իբրեւ ոչ-ամրացեալ ոստան, դժբաղդ կորուստներու եւ աւելորդ աւերումներու առաջին առնելու համար:

Այս «ազնուական» դիմումը կատարուեցաւ, Վրացի երեւելիներէ կազմուած պատուիրակութեան մը միջոցով, Կոմս Վօրօնցօվ-Տաչքովի մօտ:

Տփղիսի քաղաքային Տուման եւ լրագրողներու Ընկերակցութիւնը նոյն իմաստով չաջորդական դիմումներ ըրին Փոխարքային, որ՝ վէթերան զինուորի իր հպարտութեանը մէջ գտնուած՝ դառն ու արհամարհոտ լուծեամբ մը պատասխանեց, անշուշտ, այդ դողահար խնդրանքներուն:

Բայց քաղքենի այս ընդհանուր տափկացումին, հաւաքական այս վախկոտ ու վհատ անձնատուութեան դէմ, կովկասահայ չեղափոխական կազմակերպութիւնը ցցուեցաւ ա'յնքան աննկուն ու անտեղիտալի ամեհութեամբ մը, որ ծերունագարդ Փոխարքան պիտի պահէր իր պաշտօնական պատնէշին վրայ, դասալիք ու դաւաճան հոսանքներն ետ պիտի մղէր դէպի պղտոր իրենց աւերն, ու ի վերջոյ Կովկասը պիտի փրկէր աղէտքէն, այլ մանաւանդ անոր վեհաշուք ճակատն արատել սպառնացող անարգութենէն...:

Կովկասահայ ահազանգը մահուան ու սուղի բօթը չէր զոր կը հնչեցնէր այս անդնական օրերուն, այլ ծայրագոյն մաքառումի որոտագոռ հրաւերը: Ու անծայրածիր Ռուսաստանը մարտիրոս ցեղին զիւցաղնական ռազմակոչներն ու թափահարումները կ'արձագանգէր ամեն կողմէ, եղբայրական սքանչացումով մը, որուն մէջ հարկաւ խղճիխալթն ալ կ'արթննար չաճախ անցեալ անտեսումներու եւ անիրաւումներու:

Ի'նչ անվերածելի հաւատք էր, որ կը գօտեպնդէր այս ժողովուրդին իր մարտական անընկճելի անձնագոհութեանը մէջ, ի'նչ անմահ, անպարտելի ոգի էր, որ անոր ներսիղին, անոր հողիին անդրնդային գերեզմաններուն խորը կը թաղէր Արդութեաններէն, Աշտարակեցիներէն մինչև հայրիկ ապրուած գոթնէ չուսախարութիւններն ու դառնաթոյն հիասթափումներն, ու դաչն կը մղէր ազգովին գօրավիք կանգնելու Մոսքովեան բանակներու կողքին, դժբաղդ օրերու հաւատարիմ ախոյանը մնալու Ռուս դատին...: Դարերու գաղտնիքներէ'ն էր ասիկա:

— Մի' վաղեր ցնորակոծ այդ գլխովդ, ըսին անոր, քեզ նորէն պիտի պատրե'ն, դռուչացի'ր ճամբուդ վրայ լարուած դարաններէն...:

Բայց Հայը, չի փորձուեցաւ ականջ դնելու այդ փոխն ի փոխ չարագուշակ ու չարակամ թելադրանքներուն: Ան իր ետին չուզեց նաչիլ, չի չամեցաւ անդրադառնալ իր անցեալ ճակատագրին մօտը, ու եղբրական վրիպումներուն վրայ: Աչքերն ապագային սեւեռած, անիկա անվարան նետուեցաւ, բոլորանուիրուեցաւ ազատարար կըռուիին, որ իր պատմական գոյութեան իրաւունքն անգամ մը եւս պիտի նուիրագործէր, եւ որ զինք պիտի կրնար տանիլ Ինքնավար Հաստանի իտէալին միակ հնարաւոր իրականացմանը:

Իսկ եթէ իրեն վերապահուած էր դարձեալ մատնուիլ իր ամենաարդար ակնկալութիւններուն մէջ, ի'նչ փուլթ, ինք հեղ մըն ալ խաչուած պիտի ըլլար ճշմարտութեան չաղթանակին հաճար, Պերճիքացիին ու Սերպիին հետ բաժնելով մարդկային մեծագոյն ողջակիզումին մէջ փոքրիկ ազգերու հսկայական զոհաբերութեան փառասալը:

Թո'ղ, ուրեմն, «դժբաղդութեան մարդարէները» լռէին, թո'ղ սկեպտիկ իմաստութեան փերեղակները մէկդի' քաշուին, թո'ղ Վրացին ու Թաթարը մութին մէջէն ձուք տային իրարու, հայատեաց մախանքի դիւաչին ժպիտներով: Կովկասահայ պիտի քալէր, անչոզողոզ, իր քաղաքացիական ու ազգային կրկնակ պարտականութեան մինչև ծայրը:

Կացութիւնն երթալով աւելի արհաւիրալի կը դառնար, սակայն: Պէ'տք էր կռիւին հրամայական պահանջներուն հասնիլ եւ միանգամայն կշտացնել Տաճկահայաստանէն եկող հարիւր հազար փախըստականներուն համայնակուլ անօթութիւնը...:

Թուրք զինուորութիւնն իր խուժած վաչրերուն մէջ ո'չ միայն միլիոններու հարստութիւն թալանի տուեր եւ ուրիշ միլիոններու աւեր կուտակեր էր, այլ տեղացի իսլամներու դազանային բնաղդներն արթնցուցեր եւ զանոնք շղթայագերծեր էր անսպաշտպան Հայ զիւղացիութեան վրայ:

Թաթար եղեռնը, չաղթական Թուրք բանակին հովանուոյն տակ, ման կուգար հիմա աւանէ աւան, հարիւրաւոր Հայ զեղջուկներու արիւնը խմելով անչափօրէն:

Շահ-Աբբասի օրերը վերադարձեր էին:

Ո'վ պիտի կուրծք տար այս համասիրու դարհուրանքին, եթէ Կովկասահայ գիմադրական կորովն ու պաշարող չամառութիւնը չի ստիպէին զինուորական իշխանութիւնները թշնամիին գրոհներն:



ամեն դնով ետ մղելու, եւ եթէ Հայ կամաւորական զուեղերն ու ռազմական վարիչ կոմիտէները չի հաւասարէին կացութեան ահագնակնճիւղ կարիքներուն:

Դո՛ւն եղար նորէն Կովկասի փրկարար պաշտպանն, ո՛վ Հայ չեղափոխական սերունդ, որ քու անդրանիկներէդ ու Հարադատներէդ ա՛յնքան հոյակապ հսկաներ հանրազին անդիտուծի ու անտարբերութեան մէջ գերեզման դրեր էիր մէկուսի, որպէս թէ ցեղին ամենէն ազնիւ ու վսեմ զաւակները, անոր փառքին գեղեցկագոյն սիւները չըլլային անոնք...: Դո՛ւն, եղար, ո՛վ մեծ ուրացուած, որ Հայուն պատիւն ու Կովկասահայուն կեանքն ապահովեցիր այս անգամ ալ, ինչպէս ըրած էիր թաթարական վաչրագութեան նախորդ պոռթկումին դէմ...: Դո՛ւն եղար, ո՛վ բանասարկուած, այլ եղբայրական սերունդ, որ տաննակ տարիներու քու ժխտուած ու երբեմն ժխտական ալ գործունէութեամբդ ու անհանդարտ խլրտուններովդ ու «խռովարար» խառնշտկումներովդ իսկ, այո՛, արիացուցիր, ստրկագերծեցիր այս ժողովուրդը, որ քեզ խճրճեց, որ քու պարսականք բերնին ծամոց դարձուց, քու «միտք կերաւ», բաց որ պիտի զգար օր մը թէ անհունօրէն պարտական կը մնար քեզի...: Քու ռազմավար շէֆերդ, քու կորովի վարդապետներդ, քու առաքեալներդ ու հերոսներդ մեր քովէն անցան, իբրեւ խաղաղութեան աքորեալներ, մեր առջեւ ելած, իբրեւ չուշածուներն ու ազդարարները կուրին, որ պիտի դար մեզ գնել անդանցառելի պարտականութիւններու լուծին տակ, բաց մենէ շատեր հազիւ հաճեցան զիջող, գրեթէ արհամարհոտ նայուածք մը դարձնել այդ Տօն-աւրող անցորդներուն, որոնց տիրական ու հմայքոտ անունները ռազմադաշտերէն մեր ուշադրութեան կը հարկադրուին այսօր...:

Բաց դո՛ւն քէն չես պահէր այն հասարակութեան դէմ որ քեզ որբացուց իր ծոցին մէջ, որ լռելեացն խեցեվճռի ենթարկեց քեզի, ո՛վ ուխտուած սերունդ, դո՛ւն ատելութեան տեղ չունիս քու պաշտօն ու անլիշաչար հողիւրդ մէջ...: Դո՛ւն ամբոխներու ապերախտ ուրբացումէն լետոյ՝ անոնց փառարանութեան առարկայ եղար նորէն, կուրին դիմելէ առաջ՝ քաղքենի փողոցներէ անցքիդ վրայ տեսար երէկուան խոթոս դէմքերն որ քեզ կ'ողջունէին ժպտագին, տեսար թէ ի՛նչպէս քու երեսիդ փակուած դռներն ու սիրտերը լայնափեռիկ կը բացուէին քու առջիդ, ու անայլայլ՝ ճամբադ շարունակեցիր...: Ամեն քայլի քեզ հանդիպող դէմքեր ու ոտքերուդ տակ ինկող քարեր ակամայ կը ստիպեն քեզի վերլիշել քու երէկուան տանջանքներդ, շղթաներդ, հալածանքի ու ըսպանդի խուժուոթ ենթարկումներդ, ինչպէս Օլթիի առջեւ մրրկասլաց Դումանեանցիդ արշաւախուճքն արիւնազանդ մսակոցտի վերածուած...: Բաց քու

վրիժառու դասազաններդ չեղափոխական արդարութիւնը գործադրեր էին, իր ատենին, եւ քու ահաբեկիչ ուժերը արգաւանդ սերմերը ցաներ մաքրագործուած ու անխարդախ եղբայրակցութիւններու...: Կալիցիներու, Նակալիցիներու, Բեկօֆներու Կովկասը պիտի կըրնա՞ր միթէ թշնամիին դէմ հանել ամենաչնչին մէկ կոտորակն անգամ այն Հայ Ռուս միահաղոցն ու հրաշագործ զինակցութեան, զոր արդարակորով Վօրօնցօլ-Տաշքովի բէժիմը կ'ընծայէ այս վաչրկեանիս...: Դո՛ւն հաւասարապէս արժանացար, ո՛վ Հայ չեղափոխական Երիտասարդութիւն, Ռուսական մեծապանծ հայրենիքին ու անոր խոնարհ, այլ անդաւաճան դաշնակից քու ողորմուկ ու քաղցր վաթանիդ...:

Եւ հիմա քայլէ՛, ո՛վ անիծուած, այլ նուիրական սերունդ, որ արիւնի մէջ բացիր աչքերդ, եւ օր մը օրանց չուզեցիր ճանչնալ անգործութիւնը կեանքի անամպ հորիզոններուն և եսական հանդրուաններուն...: Քալէ՛, վասնզի դեռ շատ տաժանքներ, դուցէ նորանոր փոթորիկներ ունիս դիմադրաւելիք, քալէ՛, ու մինչեւ վերջն արժանի՛ հանդիսացի՛ր քու վեհ կոչումիդ...: Կովկասն ահա՛, քեզ կը ծափողջունէ գողդաղին... ու կ'ըսէ. «Ես կորսուած էի առանց քեզի»...: Քալէ՛, մինչեւ լրուծն անդրժելի ուխտիդ, մինչեւ չաղթանակի ու հատուցման աւետաշող ժամն, ուր ամբողջ Հայութիւնը պիտի ծնրադրէ քու առջեղ եւ պիտի փառաւորէ քեզ՝ դոչելով միաբերան. «Դուն փրկեցիր զիս»...:



Պատերազմի ընդարձակ ժանիքներուն մէջ խեղճ ու ճշտուած հոգիներն են որ գոհ կ'երթան:

ՇԵՔՍՓԻՐ

- Որո՞նք կուր կ'ուզեն — քագաւորները:
  - Որո՞նք կուր կը հոչակեն — քաղաքագետները:
  - Որո՞նք կը կուրին — աշխատաւորները:
- Ատելուքիւնը կ'ստեղծէ կուր՝ իսկ հպարտութիւնը կ'արծարծէ գայն:
- Ճնշուած ազգ մը երբէք օտարէն օգնութիւն փնտոյլու չէ, այլ ինքզինքն ազատագրելու համար պիտի է կազմակերպուի, ու պայքարի:





Արսէն Երկաթ

(Շամլեան)

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ.— «Սիրելի բարեկամս Յ. Փափագեան, կենսագրական գիծեր համեր էիք ուզել ինձմէ. մեծ բան չունիմ: Ամասիան եղած է ծննդավայրս, Փոքր Ասիոյ Բաղաբնէն մէկը՝ ուր ծնած եմ 1893 Յուլիս 18|31ին: Փոքրիկ քաղաք մըն է ան՝ գոթ կը ջրէ Իրիսը, աստուածներու պատգամաբեր, իր արագընթաց ալիքներով: Իր երկու ակերուն վրայ մթաստուեր այգիներու լուսաբիւնը՝ գոթ կը վրդովէ ջրեղջնէրու միօրինակ ու քնաբեր ճոնչոցը, մանկութեան օրերուս մեղեդին կը բուռի հիմա, լռած առ յաւետ անցեալի խաւարին մէջ: Քաղցր լուսաբիւն՝ որուն ծոցին մէջ երագեր եմ շատ անգամ միամտօրէն, կեանքի վիտերէն հեռու, կախարդական աշխարհ մը, ուր ծաղիկները պիտի չի բռնմէին բնաւ, ծառերը

միշտ ծանրաբեռնուած պիտի ըլլային մեկահոտ պտուղներով, և ուր համբոյրը երբէք չպիտի խաբէր . . . : Բայց հիմա որ մեծցած եմ, ափսոսանքով կը յիշեմ պարգուբիւնը մանուկ հասակիս . . . :

Ձերդ բարեկներով,  
ԱՐՍԷՆ—ԵՐԿԱԹ

Գահիրէ

### ԿԱՄԱԻՈՐՆԵՐՈՒ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

Գրեց՝ Արսէն Երկաթ

Պիտ՝ ուզէի որ ան ըզար մեր հոգին  
Ազատութեան կրակին մէջ շուարբաժ,  
Անոնց համար՝ որոնք մեռան՝ ժրպտագիւն  
Դիւցագուններ՝ խառնուրդներու մէջ ինկած . . . :  
Ու պահեցի զըրօշը վեր՝ Աստղերուն,  
Հայրենիքի փառքին համար շուտեղէն,  
Ու գոհուեցան, Նահատակներ՝ անանուն՝  
Շընչելով խունկն Անմահութեան խորանէն . . . :  
Անոնց համար մահը կեանքն էր՝ ուր ևորէն  
Պիտ՝ ապրէին գեղեցկացած աւելի,  
Ու ֆառեցի՛ն վարդակարմիր դաշտերէն՝  
Երագելով գալիք հունձֆերն ոսկելի . . . :  
Ոչ մէկ ատեն վրահատեցան, թըշուամիս  
Անոնց ըստուերը տեսնելով՝ կը դողար . . .  
Հիմա չի կան . . . — հանգի՛ստ անոնց անիւնին  
Առանց խաչի փոսերուն մէջը խաւար . . . :  
Հոն՝ ուր ինկան, Հայրենիքն է՝ որ կ'ապրի,  
Եւ հողին վրան անոնց արեամբ ևերկըրած՝  
Յաղթանակն է հըրաշագեղ, շուարի՛  
Որ կը հըսկէ ձերմակ թեւերը բացած . . . :  
Շա՛տ քիչ էին, բայց մեր ցեղին՝ արիւնոտ  
Պատմութեան մէջ արժանացան փառքերու,  
Անոնք մեռա՛ն իտեալով երագկոտ,  
Ողջունելով ծիրակն շողը Աստղերու . . . :  
Ո՛վ մեռելներ, ո՛վ հերոսներ անմոռաց,  
Խաղաղութիւ՛ն ձեզ՝ մահուան մէջ շարխտեան,  
Ձեզ՝ որ ինկաք դեռ ժրպտագեմ, անձնուրաց,  
Ձի դեռ կ'ապրի, դեռ կը շընչէ Հայաստան . . . :  
Գահիրէ



# ՎԱՌԷ ԼՈՅՍԸ

Գրեց՝ Լ. Լանխ

Վառե լոյսը. վառե լոյսը՝ ֆոյր վառե  
Ա՛յ գիշեր է, խաւարը մեզ կը հեզկե,  
Պանդուխտ հոգւոյս վերֆերն արևոտ կը ծածկեն  
Քալած համբոս սեւ փոշին:

Սրտիս մօտիկ, աչքերուս մէջ վառե ֆոյր  
Աստղերն ամեն կայծովն հոգւոյդ ոսկեհոտը,  
Իմ գանկս արդեւ գաղափարի աշխարհին  
Սմայութիւնը կուշայ...:

Վառե լոյսը հայրենիքիս սիրական  
Ուխտաւորներ գիս թաղերու պիտի գան,  
Մեռնելէս վերջ, յիշատակիս ծաղիկէն,  
Մօրքս փունջեր դրկելու:

Վառե լոյսը բարձիս վերեւ վառե ֆոյր  
Պատուհանիս առջեւ կուշան առաթուր,  
Սիրականներս որոնց սիրոյն կուրծֆս ըրի  
Զոհի սեղան մը արևոտ...:

Վառե լոյսը, վառե լոյսը գանկիս մէջ,  
Քու կոյս սրտիդ շանթերովը մշնանեջ,  
Յրուէ մը շուշն որ աչքերս կը փակե,  
Քու վարսերուդ շուքին տակ:

Վառե լոյսը, վառե լոյսը ֆոյր անգին,  
Լոյսին մէջ ես դիւցազնութիւն պիտ՝ հագնիմ,  
Մահուան ժամուն հշտարտութեան գրկին մէջ  
Անմահութիւնս երգելով...:



Բռնակալները մարդկութեան ամենէն անարգ և ամենէն դժբաղդ էակներն են:

# ՆԱՀԱՏԱԿԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Գրեց. Գագիկ Օգանեան



(Հ. Հրազդեան, Գ. Օ.)

Հո՛ն, ձորին եզերքը՝ հողվտիրքը կ'ե-  
րեւայ: Հողէ թուճը մը, բուռ մը կանաչ,  
քանի մը քար.— ահա՛ ամենը, որ կը ծած-  
կեն Նահատակին գերեզմանը: Առուակը,  
վճիտ առուակը՝ մեղծիկ դռնիւնով մը կը  
սահի ձորէն վար, ա՛յնչափ դգոյզ, ա՛յն-  
չափ մեղծիկ, որ կարծես Նահատակին  
զարթնումէն կը վախնայ:

— Մի՛ վախնար, անո՛ւշ առուակ, Նա-  
հատակին մարմինը կայ հոն, Նահատակին՝  
որ մեռաւ, որ իր կեանքի վերջին շունչին  
հետ Ազատութեան խրոխտ ոգին կտակեց  
իրեններուն, որ՝ հակառակ իր ջերմին հա-  
ւատքին ու բուռն փափաքին՝ բռնակալու-  
թեան սեւ օրերուն մէջ մեռաւ, — կարելի  
է ըսել խաչուեցաւ, — աչքերը բաց, հո-  
գին կարօտ, սիրտը բաղձիկ: Մի՛ վախ-  
նար, անո՛ւշ առուակ, դուն դռնէ՛ քաղց-

բաղին, թրջէ՛ անոր գերեզմանը ու վազվզէ խօլբար: Նահատակին  
հողին, մաքուր ու անարատ, թէև չէ՛ մեռած, բայց չի կայ ա՛լ այդ  
սեւ հողերուն ու թուճերին ներքև: Ան վե՛րն է, շատ հեռուն, ու քեզ  
կը դիտէ: Ան կը շրջի շրջմովիկ մը պէս եւ ցանկակարօտ կը դիտէ  
հորիզոնը՝ Ազատութեան կարօտով: Եթէ օր մը, պայծառ օր մը, Ա-  
զատութիւնը գաջ սաւառնիլ այս հողվտիրքին ալ բոլորտիքը, Նահա-  
տակին հողին այն ատեն՝ վա՛ր պիտի իջնէ հողիներու աշխարհէն,  
երանութիւնը այս երկրին մէջ պիտի գտնէ, պիտի գաջ այս անշուք  
գերեզմանին վերևը, ու պիտի փնտռէ այն ծաղիկապսակները՝ որոնք  
երախտաղէտ մարդկութեան սիրտն ու զգացումները պիտի փոխադ-  
րեն հոն, այդ համեստ գերեզմանին մօտիկը:

\*\*\*

Հիմա լքուած ու մոռցուած է գրեթէ Նահատակին գերեզմանը:  
Հազիւ երբեմն քանի մը կիներ, հարս մը և աղջիկներ կը մօտենան ա-  
նոր հողին ու քարին, և իրենց քնքոյզ ձեռքերով կ'ամփոփեն հողերը,  
որոնք՝ ըմբոստ՝ վար կը թափին կամ կը ցրին, անձրեւէն ու արեւէն  
փխրած, թուլցած և անչարիւր, դժուարանալով կարծես փակել գե-



բեղմանը Նահատակին՝ որ իր կեանքին ծաղիկին մէջ, թողած աշխարհն ու վայելքները, գրկա՛ծ սև հողը, և իր դադափարականին պէս պլուած անոր՝ սև հսկումը կը կատարէ, մինչև որ որդեր ու ճճիներ սպառեն իր մարմինին վերջին նշխարները, և անպատուար թողուն ոսկրուտ կմախքը՝ հողին ծալքերուն մէջ:



\*\*\*

Հովիկն անուշ, մեղմիկ փշիւնով մը, կը թռչի գերեզմանին վերայէն. Նահատակ հողին, որ կը հանգչի փոսին մէջ, կը զովացնէ կարծես իր տաք ճակատը, որ քրանած էր կեանքի պաշարին մէջ, ցեղին ազատամարտի սաստիկութեանը պահուն: Կը շնչէ հովիկը, մի՛ շնիկ և անուշ, հեռուէն բերելով քաղցրիկ բուրուճները վարդերուն և մանիշակներուն, մեխակներուն ու շահոքրամներուն, որոնք դէմի գարակչին տափաստանին վրայ կ'աճին՝ իրեն քով ունենալով հսկայ արեւածաղիկները, որոնք իրենց երեսները փոխան արեւին՝ Նահատակին գերեզմանին կը դարձնեն: Թռչուններն ալ սիրաթեւ իրենց թովիչճուռուղիները ընծայ կը բերեն համեստ գերեզմանին, որուն ջուրջը պար կը բռնեն՝ ե՛ւ առուակին քաղցրիկ դղչիւնը, ե՛ւ ծաղիկներու թովիչ և զգլխիչ բուրուճները ե՛ւ թռչնիկներու զուարթ ճըլուրիւնը:

Փոքրիկ ուռենի մը, կախ կախ ճիւղերով ու տերեւներով կը փորձէ ստուերել արեւոտ գերեզմանը, մինչ հպարտ արեւը և իր բարի ճառագայթները՝ ուռենիին խիտ ոստերուն ընդմէջէն, ճամբայ մը կը գտնեն և չե՛ն զրկեր վերջապէս հէք Նահատակին գերեզմանը՝ իրենց կենարար շողէն: Ու առտուն կանուխ, երբ աղամանդեաց շողերը կը հանգչին հողվտիւրքի կոյտերուն ու տերեւներուն վրայ, փայլուն, փոքրիկ գնդակներու պէս, արեգին գեղին ցուրբերը կ'իջնան անոնց վրայ՝ ստեղծելով աննման գոհարը բնութեան թագուհին:

\*\*\*

Հո՛ն, ձորին եզերքը, հողվտի՛րքը կ'երեւայ: Հողէ թուճ մը, քանի մը քար, բուռ մը կանաչ, — ահա ամենը՝ որ կը ծածկեն Նահատակին գերեզմանը: Փոքրիկ ուռենի մը, կախ կախ ճիւղերով ու կանաչուկ տերեւներով կը փորձէ հովանաւորել արեւոտ գերեզմանը: Հիմա լքուած ու մոռցուած է գրեթէ Նահատակին գերեզմանը, բայց պիտի գայ ատեն մը, օր մը, ժամանակ մը, երբ Նահատակին ոգին, — Ազատութեան Դիցուհին, — պիտի զարթնու. ու այն ատեն մարմանը՝ հոն օրհնելու ու գովելու փշատակը բոլոր անոնց, որոնք մարտիրոսները եղան Ազատութեան, Նահատակները Հալընիքին և առաջընթացները՝ Փրկութեան ասեղ և արիւնոտ պատերազմին:



Զաւէն Պաշարեան

ԶԱՒԷՆ-ՊԱՅՔԱՐԵԱՆ. — Ծընած է Քէսիրիկ, Խարբերդ, 1888 Մարտ 28ին: Իր նախնական կրթութիւնը ստացած տեղւոյն Ազգային ու Բողոքականաց վարժարաններուն մէջ: Տասներկու տարեկանին՝ իր ծնողացը հետ գաղթած Ամերիկա, հաստատուելով Ուստր «Worcester» քաղաքը: Ժամանակ մը տեղւոյն Grammar School յաճախելէ վերջ, ընտանեկան դժբաղդութիւնները՝ պահ մը զինք կը հարկադրեն քողով դպրոց ու ուսում: Կ'ընդգրկէ գործի սուպարէքը: 1904 թ. կրկին ուսանող, յաճախած է High School ուրկէ 1908ին ուսումնաւարտ մտած է Private Tutorի մը ֆով, ու հարտաբապետական ֆիւլը կատարելագործած, որուն կը հետեւի այժմ:

## Ա Ն Ի Ր Ա Ի Ո Ւ Ա Ծ Ը

Գրեց. Զաւէն Պայքարեան

Բանտապահին ձեռքը թոթուցի ու եղերաբաղդ Մաքրուհին առած զուրս Էրաց: Տուն հասնելու պէս՝ սուքերս ինկաւ եւ իր հեկեկանքին մէջէն երախտազիտական խօսքեր ընել փորձեց, ու օրհնեց բոլոր անոնք ալ՝ որոնք զինքը փրկելու առաջնորդեր էին զես:

Բազկաթուսին մէջ նստեցուցի զայն. շատ չի տեւած՝ ամոքիչ մըրափէ մը տարուեցաւ...:

Իրիկուան դէմ, միթիթարուած Հրաշալի մտայնութեամբ մը, Մաքրուհին արթնցաւ, ու մեր հիւրնկալ Ժպիտներէն աւելի կազդուրուած զգալով, ձեռքս



քաշեց ու գրեթէ ընդոստերով սլարտէզ տարաւ զիս:

— Եթէ ձեզի հետ պիտ' ապրիմ, պէտք է որ ամեն բան իմանաս... Ըսաւ ան:

Դէմ առ դէմ նստեցանք ու ես մտիկ ըրի:

\* \* \*

Այս առտու բնաւ չի դարձացայ երբ հալուածաշ երեւոյթէս կը խոսովուէիր: Խամբած աչտերս, սակաջն, ու մարած աչուրներս ալ՝ թող չի վախցընեն զեզ. ուժ ունիմ. տանդ դործը կրնամ տեսնել:

Դժուար չէ ինձի համար խոստովանիլ, թէ կեանքի մէջ քսան տարի է որ մեռած եմ արդէն ու ցաւին մէջ մարդերուն արհամարանքը դարձեր եմ: Աղջիկանս մահը՝ չոյսս ալ մեռցուց: Կարեկցութեան ու Արդահատանքի կարօտ կը քաշեմ:

Իննիսունական թուականներուն էր, ես վարժուէի էի, Միհրանս ալ՝ վարժապետ: Կոտորածին աղմուկը տարածաչնուեր էր, ինչ կ'ըսեմ, հալալինջ արշաւանքն սկսեր էր արդէն: Հեռաւոր հորիզոններուն վրայ Հայ տուներու հրդեհէին սիրուէթը կ'երեւար: Տարակոյց չի կար տաճիկ եղեռնը մեզի ալ պիտի հասնէր ընդհուպ:

Հրացան մը դնեցի. դանակ մը ունէի: Ուրիշ զէնք չի դտայ: Ակումներս ալ սուր եւ ուժեղ էին:

Ու ահա՛ Ահազանդն հնչեց, եօթներորդ օրն Արհաւելքը տարողուեցաւ, ու Հայ տուններուն ճրագները մարեցան...:

Քանդուած օճախներու մէջէն, ու դիակներով պատնէշուած՝ երեք օր ինքզինքնիս պաշտպանեցինք — ես ու Միհրանը: Միւս օրն անհետացուծի մը ճամբան փնտռեցինք: Վրանիս արեւն ու մուխ կը հոտէր: Տուններնիս կը վառէր:

Միհրանս հրացանն առաւ, ես դաշուցնը, ու վեցամսեայ Չարուհին կուսկա կապած՝ դժոխքին մէջէն քայլելու ելանք:

Այդ գիշերը խաւարին մէջէն խարխափելով Կարմիր լեռն հասանք:

Միհրանն չոյներ էր, առապարին վրայ տախտապարեցաւ ու Չարուհին թեւերուն մէջ առած՝ քնացաւ: Ես՝ իր զովը՝ ամպերուն հասնող բարձունքին վրայ մաղցեցայ, ու արմուկս ապառաժի մը լնամ, դըռուս առի քաղաքին սեւեռուեցայ, զոր անասանելի հրդեհէի մը տակ կը մոխրանար...:

Գիշերն ի բուն հոտ կեցայ: Լալի, երգեցի ու լռեցի ու կսկիծէս ուռած՝ նորէն լացի...: Արշալուստին դէմ ու Աստուծոյ առջեւ այս անգամ...: Կ'ուզէի մրտիկ վազ մը, քիչ մը հանդէլի, բաց ուղեղս կը ցնդէր, արեւնս կ'եւար ու անճառելի զայրոյթով մը հորիզոններուն դէմ վազել կը սկսէի:

Առտուն՝ զառանցելէ չոյնամ՝ ոտքի ելայ որ վար իջնեմ: Քիչ մը հաղիւ առած էի, չանկարծ, ձիւն մը ոտքերուն քառասմբակ արշաւանքին դօրիւնը լսեցի: Կանդ առի ու քիչ մըն ալ մտիկ ըրի: Չայնն աւելի կը մօտենար: Դանակը դողնոցիս տակէն քաշած՝ վազեցի...:

Չարհուրանքէս ահարեկած՝ քիչ մնաց պիտի պոռայի. բաց ինչպէս եղաւ՝ լռեցի ու բնազդաբար շարժեցայ միայն:

Ձիւնոր մըն էր ան, որ Միհրանիս մօտեցած վար իջաւ դրաստէն: Ձեռքը խարազան մը կար ու մէջքը դէնք:

Ես մօտեցած էի. քարի մը ետեւ սքլեցայ:

Նախ մերձեցաւ ան, սպասեց, քննեց, լեռոյ ծոցեաց, Միհրանին գլուխը դարձուց, եւ լուսթեան մէջէն՝ մէկէն ի մէկ կից մը տուած անոր՝ քրքիչ մը արձակեց...:

Միհրանն ոտքի ցաթկեց սարսափահար:

— Կեալո՞ւս, քամահրեց, տաճիկը ու սպտակ մը իջուց անոր:

Ու երբ Միհրանս ծոցեաց՝ Չարուհին գետին դնել, ձիւնորը սուրը քաշեց: Մինչ վրան կը խուժէր, ես կողին իջայ ժանդոտած դանակս. ան՝ մեքենարար՝ սուրը ճակատիս նետեց ու մղողանք մը արձակած՝ ինկաւ դիտաւալ:

Քանի մը օր վերջը սահմանադրուիս հասանք: Տարի մը չի տեսեց. ապրելու. ու ապրեցնելու համար Ամերիկայ խրկեցի դանիկա:

\* \* \*

Մեկնելէն ի վեր՝ Միհրանէս լուր չառած, չուսահատ՝ տուններնիս վերադարձեր էինք, Սահմանադրութեան օրերուն, ես ու Չարուհին, որ ալ մեծցեր էր հիմա: Մտացի, չանկուցիչ ու ճրվառու աղջիկ մը եղաւ ան: Կը ստիպուէի զինքն լաճախ ներս փակել: Կը վախնայի: Իր չքնաղ հրապուրէն սկսեր էին արդէն մեր չորս պատերուն տակ սպանական կաղանձիւններ բերել: Իր պարմանի հասակին հետ հողին ալ մեծածաւալ իտէպներով կը մեծնար...: Ու ո'րքան արդարադատ ու առինքնաղ մտածումներու տիրեր էր ան, զորս, աւա՛ղ, իր եղբրակն ճակատադրին հասուցին իմ անուշ, իմ աղւոր, մէկ-հատիկ աղջիկս...: Մի՛ մեղադէր, պէտք է լամ...:

Մեծ պատերազմին լուրը հասեր էր մեզի: Տաճիկ մոլեռանդութիւնը նորէն արթննալ սկսեր էր: Առօրեայ Տեւտոնեան չաղթութիւններն Իսլամ անդիտութիւնն Ռուսաստանց զբաղումներու կը քաշէր, ու Հալը՝ այս տրամադրութիւններուն հանդէպ՝ կը դողար...:

Վերջապէս պատահեցա՛ւ... — Թուրքիա պատերազմ չալտարեց, ու Հայ եղբրերը պատրաստելու համար, վարագոյնը ալ քաշեցին...:

Վալրաժատին վաշտ մը՝ մեր քաղաքին մէջ Հասեր էր արդէն: Ձիւնի ու փոթորիկի օրեր էին. քամին կ'ոռնար, արիւնին անդուզը կը տարողուեր, ու մարդիկ իրենց նկուղներուն չատակը կ'իջնէին...:

Հեաղհեա՛ք նոր դուժարտակներ հասան՝ քաղաքը: Չօրանոցը կը նեղնար. ցուրտն աւելի կը սաստկանար, ու զինուորները՝ կը գիզուէին...:

Եւ օր մըն ալ հրովարտակ մը ելաւ:

— Քրիստոնէաները տուններնին պէտք է զինուորներ տանին, ապրեցնեն, պահեն, որքան առեն որ անոնք հարկադրուած կ'ըլլան քաղաքին մէջ մնալ:

Կը մտածեմ, անմիջապէս, որ իմ տունս վալրենադալար հետապնդումներ պիտի պատահին, ու քաղաքատուն կը փութամ:

— Վալի էֆէնտի, կը զենկէզնամ, իմ չարիկս մէջ էրիկ մարդ չի կա. զինուոր չեմ կրնար վերցնել. կը վախնամ...:

— Դո՛ւրս հանեցէք սա կինը...:

— Անդօր եմ, տկարներուն պատիւը պաշտ —

Խօսքս չի լծնուցած վնասեցին զիս: Ճամբաս հեկեկալէն քալեցի: Տուն հասնելուս՝ Չարուհին ու դաշուցնս առած՝ դեռնափոր սենեակ մը իջայ. միւս դըռները բաց ձգեցի:

Կէս գիշերը անցեր էր, ահա՛ եկան: Աղմուկ մըն էր փրթաւ...: Աչքէ աչք քալեցին, երգեցին ու հայհուցեցին — Հայ սուրբերուն ալ...:

Գիշերն հոտ, մեր գլխուն վրայ ժամանեցին:

Չարուհին որ ժպտներուն աղջիկն էր ու թիթեռնիկներուն հետ կը պարէր, այդ գիշեր, զայրոյթէն ու վախէն համալուած՝ չի քնացաւ: Լուրջ էր: Վերը կը խօսէին, չարձակողական որոշումներ կը նախադէտն ու ան՝ մտիկ կ'ընէր, մինչ ես կը մըրտափէի: Ցորեկին զինուորները դացին, բաց անիկա իր մասիսո՛ճ դիրքին մէջ մնաց: Տժգուներ էր:



— Վաղը դեռեր, մա՛յր, նորէն պիտի դան, ըսաւ — ան ահուաներուն տակէն:  
— Եկուր արտասահման անցնինք աղջիկիս, սլաղասեցայ, դերեկցայ:  
Եւ սակաւն՝ անիկա շրթունքը խածաւ, դուրսն երեքցուց ու անթափանցելի շեշտով մ'ըսաւ,

— Տակաւին ծրարութիւններ կան ու դաւե՛ր, մա՛յր, պէտք է իմանալ...:  
Չարագուշակ նախապագում մը եկաւ մէջս, սիրտս դող ելաւ այդ խօսքէն՝ ու ես մղձաղակնօրէն ճչեցի.  
Չարուհի՛...:

Պաղարին կերպով դուրս լանջքին քաշեց, շրթունքը մաղերուս վրայ դըրաւ. լուռ ու անուշ հպանքներով փափաջեց ու հանդարտեցուց զիս:  
Ցնորարբեր այդ դրութեան մէջ, բռնակալներու դարձապարին տակ, օրերո՞վ տասնեակ օրերո՞վ ապրեցանք մենք...:

Չարուհիս առանձին ձգել չէի համարձակեր այլեւս:  
Վերջալուսի մըն ալ դարձեալ քնացուց զիս ու Արշալույսին՝ քովս չի դտայ զինք: Այն ատեն, ա՛՛հ, լեռներն ինկալ կատաղանքէս ու մորմոքէս խելակորուց՝ մաղերս բղկտեցի: Հողիկս մէջ Արհամարանքին անէծքը նստեցաւ, ու հզօր եւ անզօր էութիւններու դէմ՝ բախուած օրհնութիւն կարծեցի: Գերեզմաններուն այցեցերուն հետ սլար բռնեցի: Արեւուն ի տես՝ երգեցի մանչելով, ու լուսնին հետ՝ խաւարին մէջ լացի, մինչեւ որ, օր մըն ալ, արահետի մը սառուցապատ զրկէն, անձանթ ձեռուներ զիս վերցուցին ու խնամատուն մը տարին:

Երկար ատեն, մտացնոր, ապրեր եմ եղեր...:  
Անցեալ Մայիսի վերջերն էր, երբ ուշարեւուեցայ, Հայ խուճերու ու Հայ երգերու մէջ դտայ ինքզինքս:

Այն ատեն, Հայ կարծի մը ինձի նոր բաներ իմացուց. — Կամուրջի մը վըրայէն, երբ թշնամի բանակ մը կ'անցնի եղեր, Չարուհիս ինքզինքն անոնց հետ օղն հանած է, Հայ ազատագրութեան ուխտագնացումն անկասելի ընելու համար:

Մինակ մնացի աշխարհի վրայ, միս-մինակ: Միհրանս միտքս բերի, ու իր ուրացումներուն ներս՝ զինքը փնտռելու ելայ:

\* \* \*

Ոտքս Ամերիկա նետածիս պէս, ինձի անձանթ մարդիկներ, արմուկէս բըռնեցին ու տօնոն անկիւն մը նետեցին զիս: Մարդկային նախիրներ եկան դացին հեւ ի հեւ, սակաւն ես կը ջամտակէի չի հասկնալ թէ ինչու տակաւին կ'ուղչէին վանձերմիւթենէն: Որքա՞ն դժուար է, երբ երանակտ ակնկալութիւններու անձնատուր՝ կը կաշկանդուրս, լսալուով կը ստիպուիս: Ձէի ուղեր լուսահատիլ, սանաւորութիւններու դէմ, որոնք պարփակուած այդ վիճակիս տէրն էին ըրեր զիս: Ամիս մը վերջը, երբ Գաղթականութեանց վերաքննիչը քովէս կ'անցնէր, առջեւս ստի, ու հատկապէս անդլիներէնով մը՝ ըսի.

— Կ'աղաչեմ, պարո՛ն, ձեզեցէք երթամ, շա՛տ տառապած եմ, զրկուած ու արտասուած եմ, դժբացէ՛ք, կը սլաղատիմ, ես էրիկ ունիմ, տէր-տիրական մարդ ունիմ... Եթէ հիմա իմացած ըլլար, հաւատացէ՛ք, եթէ այս վիճակս զինտար... Ա՛հ, անձնուէր հողի մըն է ան, մի՛ տարակուսիկ, ձեզի բն չեմ ըլլար, թողուցէք զիս մարդուս երթամ, պարո՛ն, կը խնդրեմ...:

Միւս օրը բարի արածագրութիւնով մը արձակեցին զիս:  
Ուստը հասայ: Մէկը չէի ճանչնար: Միջավայրին ու սովորութիւններուն անդիտակ, դեմնապարկ մը վարձեցի: Հիւանդացայ ժանտահոտ խնաութենէն ազդուած: Շատ անգամ անթի, եւ չաճախ խելար, ամբողջ ձմեռ մը անցուցի ու դարունն չօղերուս խիթն արեւուն առջեւ քաշկոտեցի...:

Ցուպի մը չենած՝ ալ ոտքի կընայի կենալ, քիչ մըն ալ՝ քալել...: Անօթութիւնը՝ անտեղիտալիօրէն, կ'սկսէր կամաց կամաց վրայ հասնել, փարաս լմնցած էր: Գործ մը պէտք էի դանել: Նպերտ վիճակէս դուրս եկայ ու Հայ ճաշարաններուն դռներն ալ առի: Ընծերտ լաթեր վերցուցի, ու հոգիս խածած, լուացի դանոնք... շունչս կը կտրեր, լաւատ դեռին կ'իջնայի, բաց, ողնահարս պատերուն ու դրանքիին տուած՝ նորէն կը ճնոկէի, կը քամէի, կը քամէի, ու ճանկերուս վրայ սողոսու կեցնէ՝ չորնալու կը փոռէի դանոնք: Հպարտութիւնս խորտակուեցաւ, դեմո՞ց... տանիիններու դեռններն ալ լուալ սկսեցի...:

Սակայն դիմացայ այս բոլորին ու ջնջոցն ու կոնքը ձեռքերէս չի ձգեցի, մինչեւ որ, օր մըն ալ, բարի ծերունի մը, Միհրանիս հասցէն դտաւ, տոմսակ մը կտրեց ու զիս անոր զրկեց:

\* \* \*

Շատ դժուար չեղաւ, ինձի համար, Միհրանիս տունը դռնել: Սա լայնատարած դաշտը կը տեսնե՞ս, «Ուէյ քրօս ֆիլտ»ին վրայ, ամենէն չքեղ ու մեծափարթամ տունն անորն է: Հրաշալիօրէն տիրական Փասէլտ մը ունի ան: Նախադուր՝ կորընթական սիւներով ընդմիջուած՝ պղնձեայ երկու հպարտ թեւերով, կարծես տունն իր շողորուն ուսերուն վրայ աւեր նստեր է: Այցելուները, ներսի դրան մօտենալէ առաջ, պէտք է անոր ցուրտ միջներեսին հպին...:

Դրան վրայ կը կենամ. սիրտս արագ արագ կը դարձուի ու աչքերս ջղածիլօրէն կը բացարձակին: Կը փորձուիմ հաւատալ թէ եղբրական Նսեհիս վախճանն հարէն կը բացուին: Կը փորձուիմ հաւատալ թէ եղբրական Նսեհիս վախճանն հասած է:

Գալլ մը կ'առնեմ ներս մտնելու, բաց չանկարծ՝ կը կենամ ու պարտէզին ծաղիկներուն կը նայիմ... Թիթեանիկ մը՝ մէկ ծաղիկէն միւսը կ'անցնի. հովը՝ հեղանքի մը պէս կը սուլէ...: Ահա՛ պատշգամէն պղտիկներ պարտէզը կ'իջնեն ու կը տեսնեմ որ թռչունի մը լույնին քար կը նետեն...: Ցնցում մը կուգայ մէջս: Ի՞նչ ունին այդ տղաքը մեր պարտէզին մէջ: Պոտալու ճիզ մը կ'ընեմ: Մէկէն ի մէկ դուռը կը բացուի: Կ'անակս զսպանակին տուած եմ եղեր:

- Ո՞վ կ'ուղչէք, սեւամորթ մը դուռը բացած հարցուց:
- Տանտէրը, ըսի ու ներս մտայ:
- Վարդիկեան մը:
- Հիւրասրահը նստած՝ սպասեցի: Նորէն խորհիլ կը սկսէի. հողիկս վրայ ծանրութիւն մը կը նստէր այս անգամ:
- Գովի սենեակը ձայներ կային ու վայելքի հրճուած կը լսէի: Յետոյ երգ մը սկսեցաւ, թեթեւ ու սլացելի ձայն մը, դուարթ խօսքեր ու ծափահարութիւններ եղան ու խրախճաքի զարկ մը տուած վերջացուցին:
- Երբ ազմուկը հանդարտեցաւ՝ սեւ աչքերով, թխաղէ մարդ մը դուրս՝ զէպի զիս եկաւ:
- Ոտքի ելայ ես, խօսելու փորձ մը ըրի, բաց երբ իր հրեղէն բերերն իմինիս վրայ ինկան՝ կարկամուեցայ, ծունկերս կտրտիլ սկսեցան ու նեցուկ մը փնտռեցի:
- Ի՞նչ կ'ուղչէք, հարցուց ան անտաշ շեշտով մը:
- Անմիջապէս չի կրցի պատասխանել, կամ՝ կարծես ձայնը չի լսեցի...: Նայ-







# ԱՆԷԾՔ ԵՒ ՊԱԾՏՈՒՄ

Գրեց՝ Տֆթ. վ. Գ. Թաւանեան

## I

Ու իմ կամքիս տանարին մէջ գեղակերտ՝  
 Ես կ'աղօթեմ այս գիշեր,  
 Յեղիս համար տառապակոծ  
 Որ հայրենի հողին փարած սպասեց  
 Ազատութեան Արեւին . . .  
 Ես կ'աղօթեմ, կ'աղօթեմ,  
 Յեղիս համար մորբըւող,  
 Հայածական՝ սարէ ի սար եղնիկներու պէս չֆնայ  
 Զարկի՛ն, գարկի՛ն, խոցեցի՛ն . . . :  
 Ու ծնրադիր ես այս գիշեր  
 Կը պատեմ իր անհուն վշտին հուրքն անմար :

## II

Հագար անէ՛ծք դահիւններու անգգամ,  
 Դահիւններուն՝ որոնք քանդել լոկ գիտեն,  
 Որոնք կ'ուզեն համբոյրներով սպաննել,  
 Մուտ ու պատիր խոստումներով խաբխրել,  
 Ու մութին մէջ դաւել բարին նեմարիտն՝  
 Ու ռնիրի ծրագիրներ յղանալ . . . :  
 Ա՛հ, կ'անիծեմ, Մուհամմէտին, Ղուրանին,  
 Որ օր մ'իրենց գուժէ անկումն յաւիտեան :

## III

Արեւայսի կածաններուն մէջ դեղձան  
 Արտասուալից կ'երագեմ,  
 Իյնողներու տուգը սրտիս մէջ ցաւատ,  
 Յիշատակովն բոլոր գոհուող Հայութեան  
 Որոնք ինկան Յե՛ղի՛ն համար, բայց իրենց  
 Արիւնն անգին արժեցնել գիտցուցին,  
 Ինկա՛ն, ինկա՛ն, անիրական իղձերով,  
 Կրակելով երազն իրենց փառաւոր . . .  
 Նոր Սերունդի՛ն . . . Նոր Սերունդի՛ն . . .  
 Որ անա՛  
 Խաւարներէն դէպ 'Արեւայս կ'արեաւէ . . . :

# ՍԵՐԸ ԶԻ ՄԵՌՆԻՐ

Գրեց՝ Յրթ. Պ. Փափագեան

Սարսափի, դուրսնի օրերէն վերջ՝ շատ երկար տարիներ չէին  
 անցած, ըմբոստութեան մարմնացումը, կարիճ երիտասարդ մը դար-  
 ձած էր, հայրենիքի հալածանքն ու զրկանքը զինք չեղափոխեր էին,  
 ալլեւս պիտի մեկնէր, պիտի հեռանար իր հայրենի գիւղէն, կանխաւ  
 առաջադրած իր վեհ դաղափարներուն չափուրդ մը տալու տենչովն  
 հրահրուած, պիտի երթար հո՛ն, ուր հայրենիքի անհուն սէրը զինք  
 կը կանչէր . . . :

Բաժանումի պահը հասաւ . . . :

Ան ալլեւս մէկըր ըրած աշխարհալին ամեն վաշեւքները իր մա-  
 տաղ կեանքին՝ անընդհատ երազներու անդունդին մէջ կը խորսու-  
 զէր, կերեւակալէր շարունակ, ցաւատանջ, քանդ ու աւեր եղած իր  
 պաշտելի հայրենիքը, որուն համար կարծես մեծցաւ, դժած ու վա-  
 չելէց . . . :

Պարտականութեան վսեմ դաղափար . . . :

Գարնանալին անուշ ու զւարթ կիւրակիւր մը առտուն էր, հալ-  
 կահան խրախճանքի՝ տօնի օր մը, գիւղին մէջ անսովոր ողևորու-  
 թիւն մը կար, արեւածագի այգ թովիչ պահերուն, անհուն շիրիմ-  
 ներու ահաւոր ու ողորմ տեսքը խորհրդանշող՝ գեղջկահան այգ  
 փայտէ պղտիկ ու ցածուկ տուներն ու խրճիթները, նորածագ ա-  
 րեւուն հուր վարսերուն վրայ ցրած կը լողալին, երկարատեւ գի-  
 շերներու ընթացքին կրած չղնութիւններէն նւաղած կարծես, ո-  
 ըրոնց կը չաջորդէր հեռզհետ հովերուն սովորական մեղմ սուլը  
 տերեւազարդ ծառերուն խորհրդաւոր սօսափիւնը, կարկաշահոս  
 առևակներուն ձայնը եւ զարթօնքի պահը հնչեցնող աքաղաղներու  
 սուր կանչը, որոնք կարծես զայցող քաջարի Հայ Ֆէտալիին դաղ-  
 թերզը կը ջօրինէին մերամաղձօրէն: Բնութիւնը վաղուց ծնունդ  
 տուած էր իր ալլազան հրապուրիչ տեսարաններուն, օրան կեան-  
 քին՝ ես ու գեւին հետ, ներդաշնակութիւն մը կար ամենուրեք . . . :

Պատմական այգ Ս. գիւղին քաջերը ալեհեր, մէկիկ մէկիկ ժող-  
 վըէր էին Սիսակի բոլորտիքը, կատարեալ խանդավառութեամբ,







ման, անոր անցած փառքը տօնեց...: Եւ որ մը, անոնց անմահ հոգիները իրար հանդիպեցան՝ չափտենականութեան ծոցին մէջ, ու ջուխտակ ջահէր կազմելով խաչտացին մեզ, գիւցազնօրէն պատգամելով. «Սէրը չի մեռնիր»ը...:

Պոսթոն

## ՈՐԲԻՆ ԿՏԱԿԸ

Գրեց, Ատրուսան.

— Չայլամայր՝ պատանքս հիւսէ ջարդէն ինկած օրիորդներու դեղաճամով:  
Դազաղազործ՝ ճաղս կազմէ Սուրբ խորանին ջարդէն ջախջախ բեկորներով:  
Դիապատիկ՝ փափուկ մարմինս ջարդուած մայրերու աղու արցունքովը լուսա՛:  
Եւ դու Տէր հայր՝ ջարդէն անցած օրորանս մեռելիս բուրվառին ա՛ծուխ ըրէ:  
Մեռելակիր դազաղս դիր հօրս ու մօրկանս դիակներուն միջև:  
Հրեշտակներու արտօսը ձիւն դառնաց վրաս,  
Ես հող դառնամ հողվար ըլլամ հօր ու մօրկանս.  
Սիրտս սափոր ըլլաց տատրակներու ծարաւին:  
Գթութիւն՝ շարժէ արծաթթաթիկ մատուրներդ,  
Չորցուր ոսկի վարսերովս սև արցունքը Հայաստանին:



## ԿՈՌԻՆԿՆԵՐՈՒ ԵՐԱՄԸ ՍԻՆՈՒՆԻ ԱՓԵՐԷՆ

Գրեց՝ Արեալիք Շամլեան

«Նժդեհ կոունկնե՛ր, ինչո՞ւ խոյս կուտա՛ք.  
Իմ այս սգաւոր դիագարդ ավի՛ն.  
Ա՛խ, դուք Տարօնի դաստերէն կուգա՛ք.  
Ի՞նչ լուրեր բերի՛ք «Արիւն-աշխարհէն»:  
Իջե՛ք իմ դալար հիւրընկալ այգիներն,  
Տեսե՛ք վիճակը, ծաղկանց, ծառերու,  
Հոն փոխան ցօղի արիւնն է քրջեր,  
Հայոց նահատակ անմեղ գոհերու:»

Անցե՛ք ամայի, աւեր քաղերով,  
Երբեմն բազմամարդ, շէն քաղաքներու,  
Տեսե՛ք, դեռ միայ լափող կրակը,  
Մոխրի տակ քաղուած, քանդուած տուներու:  
Տեսե՛ք, քէ ի՛նչպէս հոս տիւ ու գիւեր,  
Աղի արցունքով կեանքս անցնեմ,  
Գրկիս մէջ պահած նահիլ-նիվաններ,  
Ո՛րհ, օտար ձեռքի ես ի՛նչպէս յանձնեմ:

«Լսե՛ք, աղեխարս նիջերու ձայնը  
Հայրենի բնէն տարուած կոյսերուն,  
Երբ վերադառնա՛ք «Արիւն-աշխարհը»  
Իմ այս սև քաղդը պատմե՛ք ամենուն.  
Ըսե՛ք Հայ Մուսայն բազմալար քնարը,  
Չարնե՛ք, ջախջախե՛ք քո՛ղ ստոն քարերուն.  
Ու ալ քո՛ղ չերգէ վաղեմի փառքը,  
Մեր ոսկեղարուն, այն սուրբ օրերուն:

Երգի՛չ, գրագէտք ու Հայք համօրէն,  
Թող սուգը պահեն, ողբը Սիւնին,  
Գրասիրտ մայրեր վերքերն դարմանեն  
Բունագուրկ, քեւատ իմ խեղն որբերուն:  
Նժդեհ կոունկնե՛ր, երամնո՛ւղ մատաղ,



Ըստ' ք պատերի իմ բոյր երասխին,  
Ա'լ թող չհանկ սգոյ սեւերը,  
Ա'լ թող չսպասէ Հայոց գարունին:»

Անցաւ Սիւնունը ու ջրերն փրփրոտ,  
Կոհակներ դիգած ձայնը խեղդեցին,  
Մորթուած, խոտանգուած դիւեր արիւնտոտ,  
Հեռո՛ւ, խիստ հեռու ավերն նետեցին:  
Պանդուխտ կռունկներ, յուզուած, ահաբեկ,  
Թռա՛ն, վե՛ր թռան երամ կազմելու,  
Տարոսի սարերն շտապով անցան,  
Մասսին, երասխին գոյժը տանելու:

\*\*\*

Լուսնակն էր ծածկեր բոլորակ դէմքը  
Սարերու ետեւ ակտոր Մասսին,  
Կարծես կը լսէր աղեխարս ձայնը,  
Հեռուն գալարուող կարմիր Սիւնունին:  
Գետափին անող կաղնիք յաղթապանծ  
— Դարաւոր վկայք արնոտ անցեալին —  
Մեղմ օրօրեցին գլուխներ յոգնած  
Լալով ապագայ վիշտը երասխին:

Արեալոյսին դէմ հովն Արարատեան,  
Ցրուեց ամպերը մեղմիկ որպէս ծուխ  
Տակաւ երեւցաւ դէմքը կուսական,  
Ըմբոստ երասխին ակեաց մէջէն թուխ:  
Գուժկան կռունկներ փարերուն թառած,  
Պատմել սկսան դէպքը ողբական,  
Նագելի Սիւնունն ինչե՛ր էր ըսած,  
Թէ ի՛նչ դարտի էր ողջոյն կիլիկեան:

Աչքով հրացայտ, դէմքը ահաւոր,  
Փրփրած երասխը ամենը լսեց,  
Արդար գայրոյթի բորբոքած հրով,  
Բացաւ բերանը ու այսպէս խօսեց.  
«Անհուն երկնքի սև, մութ կամարներ,  
Ինչո՞ւ չէք փլչեր խղճալոյս վրայ,

Ինչո՞ւ չէք թափեր հրեղէն շանթեր  
Որ ձեր բոցին մէջ աշխարհը ծխայ:

Միթէ չհասա՞ւ բողոքի ձայնը  
Դարերով այրուող այս անբաղդ ազգէն,  
Միթէ չսեւցա՞ւ փակտիդ կապոյտը,  
Աշխարհ ակերող բոցի ծուխերէն:  
Զո՛ւր քեզի համար տանար շինեցին,  
Ոսկեգարդ սեղան, սրբատաւ փարով,  
Զուր տեղը առջիդ խունկ, մոմ վառեցին,  
Նախշելով սեմերդ անմեղ արիւնով . . . :

Հրաւէկ երկաթի պսակը գլխին  
Զարչարուող կոյսեր քեզի կանչեցին.  
Բանտի խորերէն, կախաղաններէն —  
Անմահ հերոսներ քեզ գո՛ւր փնտռեցին,  
Անգութ աչքերով ամէնը տեսար,  
Անտարբեր սիրտդ ի՛նչպէս հանդուրժեց,  
Լեզու են ելեր մեր սարերն ու փար,  
Մեր արեան հեղեղ դիակներ ֆեեց:»

Ու դիւցազնական յախուռն ոգով,  
Ամփոփեց ոյժերն մութ անդունդներուն,  
Ետ, ետ փառուեցաւ մոլեգնեալ թափով,  
Զարկաւ գլուխը սեպ ժայռերուն:

Սգաւոր կռունկներն ահաբեկ միջով,  
Թռան դէպ ի վեր երամ կազմելու,  
Օտար երկրի մէջ նոր բոյն շինելով,  
«Արիւնի աշխարհը» ա՛լ ետ չգալու:



Ազգ մը երբ իր գոյութեան համար պայքարիլ գիտէ, չի մեռնիր:  
Ազգային ընդհանուր շահերու շուրջ երբ միութեան ոգին կը պակ-  
սի, հո՛ն քայքայուիլ կ'սկսի:



## ԵՌԿԵՅՈՒ ՆՐԵԳ

Գրեց՝ Դանիէլ Վարուժան

Յաղթանակի զիշերն է այս տօնական .—

Հա՛րս, եղ լեցուր ճըրագին :

Պիտի դառնայ կռիւէն տըղաս չաղթական .—

Հա՛րս, քիթը առ սատրոցին :

Սալ մը կեցաւ դըրան առջև, հորին քով .—

Հա՛րս, վառէ՛ լոյսը ճըրագին :

Տըղաս կուզայ ճակատն հըպարտ դավինիով .—

Հա՛րս, բե՛ր ճըրագը շեմին :

Բայց . . . սալին վրայ արի՞ւն և սո՞ւգ բեռքեր են . . .

Հա՛րս, ճըրագդ ասդի՛ն երկարէ :

Հերոս տըղաս հոն գարնուա՛ծ է սըրտէն .—

Ա՛խ հարս, ճըրագդ մարէ . . . :

Իր «Հեթանոս Երգեր»էն,

## ՍԳԱԽՈՐՈՒՅԻՆ

(ՊԱՏԿԵՐ)

Գրեց՝ Արի-Արանց

Գարնանամուտի դիւթիչ առտու մը, արեւածագի լուսաւոր ջիւջ պահերուն ծաղկազարդ կանանչութեան՝ եղեւնաբոյր ակուշահոտութեանց ընդ մէջ, հեգեհնայ գարունի արեւտարեր երգեցիկ թռչուններու խորմբին հետ միայնակ . . . կը շրջագայիմ ընդ երկար, ակվերջ տողանցումներով, յորդահոս իրիսի գաշարուն ու թաւաշուն աշիֆներուն առնթեր . . . :

Շողարձակ Արեւը՝ իր ոսկեգոյն հուր վարսերովը պայծառ, գգւոտ համբոյրներ կը դրոշմէ ակուր խոտվայոյզ աշեակներուն . . . :

Բնութիւնը՝ վերագար թնումի շրջանին է թեակոխած, եւ իր յարիտեակակ հիագդեցիկ ներդաշնակութիւններու մէկ դրուագը կը ցուցադրէ շեկշող ու կեանքոտ . . . :

\* \* \*

Կը փաշե՛մ . . . :

Դաշարագեղ ճամբաներէն ակընդհատ կը յառաջանաւ երագուն, կ'առաջնորդուիմ անզգաշարար, դեպի մօտակայ գերեզմաննոցը հայուն . . . ուր կը մարմնակայ ակաւոր անյայտութիւնը կեանքին . . . վշտասարսուռ շիրմափարերուն ակողոք կանգնումին մէջ . . . :

Վայելք է իկայ հոն, արցունքի երգը կայ, հառաչակներու ցնցող արձագանգը կը ախրապետէ երեւոյթական անմահութեան վրայ . . . :

Արցունքի ախրերգը հոգիես կ'արձագանգէ . . . :

Կ'ընթանաւ շիրմածառերուն անպհովակներէն փայլամոյար . . . : Կ'զգամ ակունց սեր սարսուռը՝ երկնաբերձ բարտիներ են ակունք, որոնք իրենց գագաթները դեպի վար խոնարհած՝ մշտաւտեւ սգահանդեսի մը յարիտեակակ տրխոր ուրուակակներն են կարծես . . . :

Հանգչողներուն հոգեհանգի՞ստը կը կատարեն արդեօք . . . :

\* \* \*



Զատիկ՝ մեռելոցի Տօնի օրն է այդ...:

Վշտակոծ հոգիներու ստուար թափորն է որ հոտ կը շտայե, ամեն մեկը սիրականին կորուստը եւ անոր մահուան տխուր յիշատակը թախծերգելու միամտութեամբ է սոգորուած...:

Կը նշմարեմ քաղցնեքուն մեջ սեւեր հագած մանկամարդուհի մը, որպէս Արեւելի գեղեցկութեան մարմնացում, իր շուրջը երկչոտ նայուածքներ ցանցնելով կը մօտենայ անհամբերութեամբ մը գերեզմանի մը ետին, և հոն պահ մը կանգ կ'առնէ թուշութեամբ մը կանացի...:

Անտարբեր հովերը՝ իր ցիրուցան մագերուն մեջէն, բնութեան անխուսափելի մեկ օրէնքը կը սրշուրջային անհունօրէն...:

Անգութ Առեղծուած...:

Բովանդակ Բրիտանական աշխարհը՝ Աստուածորդունցն հրաշափառ շարութիւնը կը տօնախմբեր օր մ'առաջ, իսկ այսօր կը տարւեր խուշ համակերպութիւնով մը սգահանդէսը կատարելու մեռնող սիրելիներուն...:

Շատեր, շատեր, երեկի ցնծութեան հետ այսօրուան շացը փոխանակեր էին, եւ սակայն այդ անշուք գերեզմաննոցի մը անկիւնը, սեւեր հագած այդ հարսը, իր ամուսնոյն հետ իր կեանքի վայելքներուն տարածամ մահը կ'ողբերգէր անզուսպ շացերով...:

Վայելքներու կարօտ որբերայրի՝...:


Սգաւոր էր նե...:



Ազգ մը իր արտաքին բժնամիտն չի մեռնիր այլ ներքին:

Երջանիկ կեանք մը ապահովելու համար բնաւ պէտք չկայ համալսարանական կրթութիւն ստանալու:

Պատերազմը որսորդութիւն մըն է գործարներու դէմ, ուզողուած գործարներու կողմէ, սոսկ կապիտալիստ դասակարգին հանդէպ պատմաւորութիւն համար:



## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԻՆ ՇՈՒՐՋ



Գրեց՝ Ա. Յ. Գազանեան


Ազատութեան շուրջն արձանին,  
Յուրտ շիրիմներ իրենց դարձեալ  
Մերկութիւնը կ'ողբան լրոյն,  
Սառ խոհանքով կըլնախացեալ...:

Նահատակներ կուշան նորէն,  
Կ'երգեն իրենց վիշտն ու հառաջ,  
Անոյս շունչով մը դառնօրէն...  
Քանզի անոնք չունին մի խաչ,

Մի մահարձան՝ իրենց կեանքին  
Տառապանացն, այո՛, գոնէ  
Յոյց տարու, ո՛հ, նըշոյն անգին՝  
— Զի հանոյքնին արդէն հոն է...:







ԱՍՕ ծնած է 1880 ին Վան Նախնական ուսումը ստացած է տեղւոյն Յանկոյս դպրոցին մէջ:— 1896էն 1906 ուսուցիչ՝ Պարսկաստան:— 1906էն Յեղափոխական գործիչ պրօպականդիստ:— Աշխատակցած է, «Հնչակ», «Երիտասարդ Հայաստան», «Վերածնութիւն», «Լրարեր», «Ապագայ», «Արմէնիա», «Մուրճ», «Մշակ», «Բիւզանդիոն» թերթերուն՝ զանազան ստորագրութիւններով: Խմբագիր «Երկիր» թերթի: Հեղինակած ու առանձին զրքով հրատարակած է «Կարմիր Օրեր» «Հաւսէ», «Դատաստան», «Վահէ», «Դիւցազնուհին» եւայլն: Հայ առաջին Սօցիալ Դեմոկրատ վիպասանն է, եւ պրօլետարներու նուիրուած երգիչը, նահատակուած Վանայ բանդին մէջ:



ԵՂԻՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ (ՍԻՐՎԱՐԳ)

ՍԻՐՎԱՐԳ — Եղիա Գրիգորեան— Ծնած է 1889 թ. Օգոստոս 15ին, Մօրէնիկ (Խարբերդ): Իր նախնական կրթութիւնը ստացած է նախ՝ գիւղին և յետոյ՝ Բէսիրիկ գիւղի դպրոցը: 1905—1906/ին որպէս ուսուցիչ պատուակարած է գիւղին դպրոցը, իսկ 1907ին՝ Բէսիրիկի դպրոցը: 1908ին սկիզբը եկած է Ամերիկա:

Աշխատակցած է «Երիտասարդ Հայաստան»ին, Պարսկաստանի «Ջանգ»ին և «Միտք»ին, Պօլսոյ «Երկիր»ին, «Պայքար»ին և «Կոհակ»ին՝ զանազան ծածկանուններով: Մասնաւորապէս «Երիտասարդ Հայաստան»ի մէջ ցրցքնած իր գողարիկ վէպերը, առնուած Ամերիկահայ կեանքէն և Զուլումի երկրէն, մեծ հանոյքով կարդացուած են:

## ՎԵՐՋԻՆ ԿԱՍԲՈՅՐԸ

(Գրուող մը Ամերիկահայ կեանքէն)

Գրեց՝ Սիրվարդ

Սեպտեմբերի մասը գիշեր մըն էր. Տարագալը թանձրամած խաւարին մէջ կը հեւար, կը հեծէր: Կեանքի ետուզեալ ալիւս իր վախճանին հասած՝ սղ ըլլանակչութիւնը, քնոյ կրախին մէջ թաւալուր, վաղուան կրագնեալուն ոսկեզօծ թելերը կը հլուէր: Գարեջրատուններէն ներս, մալթերուն վրայ եւ փողոցներուն կեն կայնքը ախապին ափսոսանքով գեղեցիկները կարծես անհետացեր էին անդարձօրէն: Բանարօտիկ ժպիտներով վազրիկնական հեշտանքներու օրօրը կրկնող սղջիկներուն տողանցը նոր վերջացած էր: Բազաբը լուսաւորող կլեքարական սղջիկներուն տողանցը նոր վերջացած էր: Բազաբը լուսաւորող կլեքարական սղջիկները թէև չիջած կին տեղ-տեղ, սակայն Մէյն փողոցի հսկայաչէն խոնութլոյտերը թէև չիջած կին տեղ-տեղ, սակայն Մէյն փողոցի հսկայաչէն խոնութ-











ու դուրս թուա բանուած թուշտնի մը նման: Տուր վայրկեանի ճամբան Հինգ վայրկեանէն կարեց եւ հասա Չարուհիէնց տունը, բայց դժբարդարար հոն չը գտաւ: Փողոցներու մէջ քանի մը ժամ աննպատակ եւ խելացնոր թափառելէ վերջ նորէն եկաւ, կրկին չգտաւ: Տակաւին չուկայէն վերադարձած չէր: Ճարահաս ու յուսահատ շունչը ընկերով՝ Մարկոսին սենեակը առաւ եւ ստանց նախաբանի պատմեց մանուկի նման արտասուելով:

Մարկոս այս անակնկալէն ինքն ալ շանթաւար եղաւ, բայց կրկին պազարեւնութիւնը չկորսնցնելով մխիթարական եւ քաջաւերական խօսքերով կըցաւ մի քիչ հանդարտեցնել զայն:

— Անգամ մը, միայն մէկ անգամ կուզեմ զինք տեսնել երկու խօսք փոխանակելու համար, Մարկոս, եւ այս դուն պէտք է չաջողցնես, էթէ ո՛չ կը մեռնիմ...:

Մարկոսը չմերժեց: Օրիորդին ներկայացաւ քանի մը անգամ, աղաչեց, պաղատեց որ դռնէ կէս ժամուայ ուղնորութիւն շնորհէ, դէթ հէզ երիտասարդին կեանքը փրկելու համար: Օրիորդը թէեւ նախապէս անողոք, բայց վերջ ի վերջոյ տեղի տուաւ, ժամադրութիւնը նշանակելով զիւրեւայ ժամը 11-30ին:

Այսպէս երջանկութեան, կեանքի հաճոյքի սվկեանէն սպերջանկութեան, մահան ծոցը դուրսուց երիտասարդը, Պետրոսը, կը լստաջանար խաւարին մէջէն Չարուհիին շնորհած կէս ժամուայ ուղնորութեամբ երջանիկ կեանքին վերադառնալու լուսովը վառւած, խնդեցած:

\* \* \*

Միտքը փողոցի վերջամասին վրայ շինուած երեք յարկանի տան սենեակներէն միոյն մէջ լուր դեռ կը պլպլար, հակառակ զիւրեւան լստաջանած պահին: Սենեակը թէեւ փոքր՝ սակայն վայելուչ կերպով զարդարուած էր: Պատերէն կախուած էին Ամերիկեան նախազանկերու, հայ թագաւորներու, չեղափոխականներու եւ դրազէտ-բանաստեղծներու նկարները, իսկ առաստաղէն կախուած էր մեծ լամպար մը, որուն լուր մահաներձ վիճակ մը կատանար հետզհետէ: Չախ անկիւնը դրած էր մեծ հայելի մը, իսկ աջ կողմը՝ կոկիկ զրանգան մը որուն առջեւ նստած էր օրիորդ մը հաղիւ 22 դարուններ ողջունած, դէմքին վրայ կը տեսնէր լուզում, անհանգստութիւն եւ բարկութիւն: Մաղերը անինամ թափուած էին ուսերուն վրայ, հարուստ կուրծքը, որպէս բոցավառ հրարուի, մերթ կը բարձրատակ շրջադեմտի տակէն, բարձրացից ժայռերու երեւոյթը կուտային, իսկ դեղեցիկ եւ հոգեկազ ուռնիկի հասակը զլիւխէ էր, որուն առջեւ ամենադժարահաս ճարտասարդներն իսկ եղեղի նման կը խոնարհէին անկասկած: Անոր փոքրիկ եւ սիրուն դանիւր աչքան խորհուրդներով բեռնաւորուած կը հեւար:

Նա անհանգիստ էր, կը տանջէր, շատ կը տանջէր...:

Երկար սպասել տրոնած, ջրադրուած գլուխը երկու թեւերուն մէջ ամփոփելով ինկաւ սեղանին վրայ եւ սկսաւ լուս հեկեկալ: Անոր աչքին առջեւ պատկերացաւ երէկի սիրած եւ սակայն այսօրուայ ստած հէզ երիտասարդին պատկերը, մահադուն դէմքով, ողորմելի եւ կիսամեռ վիճակի մէջ: Ցնցեցաւ ամբողջ մարմէնով... զգաց որ իր ըրածը անխղճութիւն է, տմարդութիւն եւ մարդասպանութիւն է, բայց ի՞նչ կարող է ընել, երբ նա այլեւս իր կարեւորներուն զոհացում չի կրնար տալ: Վայրկեան մը անպէս թեւեւ թէ իր զոհը՝ երիտասարդը մեռը դառնոյն մը բռնած վրան կը խոյանար սպաննելու համար, մահը դաժան իրականութեամբ

պատկերացաւ աչքին առջեւ, ահեղ եւ սպառնական: Անրացատրելի եւ անբնական սառնութիւն մը զգաց, օգը կը պահէր սենեակին մէջ, կողորդը կը սեղմուէր, շնչառութիւնը կ'ընդհատուէր: Խղճահարկեցաւ... որոշեց ծուռիկ չոքել անոր առջեւ,

համարելի մեղքերն ու սոքերը, ներողութիւն խնդրել եւ կրկին սէր խոստանալ զայն վերապրեցնելու, մահան ճանկերէն ազատելու համար: Բայց յանկարծ անոր մէջ զարթնեց վայելքի եւ նորաձեւութեանց անզուսպ տենչը, նա կորսնցուց իր վճռականութիւնը, որովհետեւ այդ տենչը աւելի զօրաւոր էր, աւելի կ'ընչէր իր հոգւոյն եւ մարմնոյն: Ի՞նչ, միթէ՞ աշխարհի բոլոր մարդիկը վայելքի չեն ձգտիր, միթէ՞ այսքան աշխատանքները վայելքի համար չեն, ո՞վ է որ կը խուսափի անիկ, ո՞վ է որ զխաւցարար դէպի սպերջանկութիւն եւ թշուառութիւն կ'երթայ: Ո՞վ է մեղաւորը, որ այլեւս կեանքս կապել չեմ բարձար այն տղամարդուն հետ՝ երբ ինձ հաճուց պատճառելու, իմ տենչանքին զոհացում տալու միջոցներէն զրկուած է: Ինտութիւնը որ իմ մէջ դրած է այդ տենչը, եւ որ ես անոր զոհացում տալ կուզեմ, արդե՞օք մեղաւոր եմ: Ո՛չ: Եթէ նա իմ երջանկութեան համար դրամ վատնած է, ես ալ փոխադարձը զինք երջանկացուցած եմ համարուներով:

— Ո՛չ, ես չեմ ուզեր իմ կեանքը թշուառացնել, ըսաւ անկիւս վճռական շեշտով մը, ես աշխարհը վայելել կղձամ եւ իմ կեանքը կապելու օժտար եմ միայն այն երիտասարդին հետ՝ որ այդ վայելքը ինձ շնորհելու միջոցները ունի:

Ոտքի կանգնեցաւ եւ դիմեց դէպի պատուհանը, բացաւ զայն, գլուխը դուրս հանելով լայն շունչ մ'առաւ եւ եկաւ հայելիին առջեւ կանդնեցաւ: Դէմքը դուրս նստ էր, աչքերը արտասուելից եւ մաղերը զզրուած: Դանի մը վայրկեան այս դիւրքին մէջ մնալէ չետոյ ստիպակ թաշկինակով մը սրբեց աչքերը, մաղերը երկու խուրձ շինեց եւ եկաւ միեւնոյն տեղը նստեցաւ, կրկին խորհուրդներու մէջ թաղուած:

Սենեակին դուռը կամացուկ մը բացեցաւ եւ սեմին վրայ երեւցաւ դունատ դէմքով, արեւնալի աչքերով երիտասարդ մը: Օրիորդը դրան բացելը չիմացաւ: Երիտասարդը չհամարձակեցաւ մտենալ, այլ հեռուէն սկսաւ դիտել անոր ոսկեղուն մաղերը, հոգեկազ մարմինը եւ մարմարեայ լանջը: Նա չափաւակեցաւ այդ հարուստ մարմնով, մոռացաւ ամեն ինչ, մոռացաւ նոյնիսկ մտադրութիւնը եւ զայն անդամ մ'ալ, դռնէ վերջին անգամ իր թեւերուն մէջ ունենալու խօլ բաղձանքէն ճնշեցաւ: Օրիորդը ստակաց շնչառութեան մը հեւքէն եւ դարձաւ դէպի ետ:

— Պետրոս... արտասանեցին անոր շրթները դողալար:

— Չարուհի... արտասանեց երիտասարդը խանդակաթ սիրային թօնով:

Անոնց աչքերը զամեցան իրարու, երկուքն ալ ճնշեցան: Պետրոս լստաջացաւ երկու թեւերը լայն բանալով, բայց օրիորդը կոպտութեամբ ետ հրեց զայն:

— Մի՛ մտենար ինձ, որովհետեւ մենք չաւտանք բաժնուած ենք իրարմէ, ըսաւ կէս սպառնական թօնով, ըսելիքը ըսէ եւ մեկնիր, վասնզի տունեցիները ինձ կսպանեն վերնաշարկը:

Կայծակ մըն էր, որ պայթեցաւ Պետրոսի գլխին, խաւարեցան աչքերը եւ քիչ մնաց որ կայծակնաւար դետինը սլտի իշնար, եթէ պատը օշնութեան չի հասնէր: Անոր վերջին յոյան ու հաւատքը ջախջախեցան, խորտակեցան, թէեւ զգաց որ ամեն ինչ վերջացած է այլեւս, սակայն փորձ մ'եւս ըրաւ ուղղակի անոր դէմքին չառելով բոցավառող աչքերը:

— Չարուհի, ըսաւ աղաչական ձեւով, ի սէր Աստուծոյ կեանքս ինձ վերադարձուր, ես դեռ երիտասարդ եմ եւ ապրել կուզեմ, սակայն առանց քեզի անկարելի է...:



Չարուհին սիրաբար քարացր էր, ի իղնը նկատած, որովհետև այդ տղերսուկից խօսքերն ու ձևերը, որոնք քարերն անդամ կը չուզէին, ազգեցութիւն չըբին, ընդհանրապէս անիկա աւելի որոնելիք՝ պատասխանեց.

— Եթէ կարեւոր ընկերք մը ունիք, լա՛ւ, ըսէ՛ք, այլապէս ուրիշ խօսքեր չեմ ուզեր: Ես չեղի բռն թէ չախտեան բաժնուած ենք իրարմէ:

Պետրոս անմիջապէս պատասխանելու բառ չգտաւ, կոկորդը կը սեղմէր, արեւնը կեանք կրակներուն մէջ և փոթորիկ մը լուծախ կը ցնցէր զինքը:

— Բանի որ այդպէս է, ուրեմն զեթ ինձ վերադարձուցէք ձեր անունով զբանաստեղծն զրուած զուճարին կէսը, բառ Պետրոս վճարեան չեւանդ:

— Դուք ինձ դրամ չունենա՞ծ չէք, ստախոսեց Չարուհի անպատկառօրէն: Եթէ աւամ էք ալ, ես փոխադարձը վճարած եմ ձեզ հաճույք պատճառակով:

Օ՛... այս անպատկառ սրբայուանին կրբե՛ք չէք սպասե՛ր Պետրոս, կրբե՛ք չէք կրնար երեւեակներ խի թէ մարդ կարող է այսքան ստորանալ, վառանալ, և անբարոյանալ: Չգոյց թէ ինչպիսի մարդկային հրէշի առջև կը գտնուի, որուն քով խղճի, զրացուածի նշույլ մ'իսկ չգտնուիր: Արիւնը վարկեման զրուիք խուժեց, բարկութենէն կատաղեցաւ, աչքերէն զուրս ցալակներ վրէժի կաշմեցրը, և սկսան լալել բոլոր իրերը, որոնք լուս ախանառու կ'ըլլային այդ արածին: Ահաւոր խորհուրդներու շարանը պատկերացաւ անոր երեւակայութեան առջև, անիկա լիւնց իր վճարորչու՞մը...

Չարուհի տեսաւ անոր այս բոլոր արտասովոր շարժումները, տեսաւ աչքերէն հոսող բարկութեան և վրէժի հուրը ու ցնցեցաւ, զոգոց մահուան սարսուռովը:

— Մէկ համարուք միայն, վերջին համարուք... և ես չեղի պիտի ներեմ բոլոր սրտախ, բառ Պետրոս պարտքին և սիրական ձայնով մը:


Չարուհի վախէն չտարիկեց, չընդդիմացաւ, վերահաս վտանգէն ազատելու համար՝ բոլորովին ախմայ՝ զէպի ես յառաժացաւ: Պետրոս վաղրի նման խուլացաւ անոր վրայ և հաղիւ թէ երկու թեւերուն մէջ աւամ էք մարմինը, Չարուհի ողբալի ձիւ մը արձակելով արիւնաթաթախ ինկաւ դեպին...:

Մինչ հայրը և մայրը այդ ձայնէն խելացեար սենեակը կը մտնէին, տան ետեւի դռնէն մարդկային սուտեր մը կ'անհետանար խաւարին մէջ...:

## Բ Ո Ւ Ր Ա Ս Տ Ա Ն

Մարդու բարոյական արժանիքը անտարակոյս հիմնուած է պարտականութիւններու քով, գորս կը տեսնէ ու կը ջանայ գործադրել:

Հնուած ժողովուրդի մը ազատութեան համար կոխ ընելը ընկերային մեծ սրբութիւն մըն է, իսկ ուրիշի ազատութիւնը կատարելու և անոր ստացուածքները յափտակելու համար պատերազմիլը դաւանանութիւն:



ՀԱՅԿ ԷԿԻՆԵՍՆ

Ծնած է Տիգրանակերտ, 1865ին, բարեկեցիկ ծնողքէ մը: Իր նախնայորդ՝ բրժիէկ Թովմաս, Ակնէն գաղթած է Տիգրանակերտ՝ երկու դար առաջ:

Տիգրանակերտի Հայրենասիրաց Ընկերութեան դպրոցին մէջ ստացած է իր նախնական կրթութիւնը, ուրիշ յետոյ ալ ո'ւէ դպրոցի երես չէ տեսած: Ինքզինքը կը պարտի ինքնօգնութեան մեծ ու հիմնական դպրոցին:

Էկիմեան 1883ին Ամերիկա կուգայ, առանց դրամի, առանց ծանօթի և առանց լեզուի հմտութեան, միայն հորը օգնելու համար:

Չորս տարիներ կ'աշխատի մետաքսի գործարանին մէջ, և նոյն տեսն գիշեր-

ները կը նուիրէ Անգղիերէն ուսանելու առանց ուսուցիչի: Ա. Արփիարեան Արևելի խմբագիր եղած տեսն, էկիմեանը կը մղէ գրական կեանքի: Աշխատակցած է Արևելի, Մասիսի, Մշակի, Արմէնիսի և ուրիշ քերթերու, քէ՛ իսկական և քէ՛ ծածկանուն ստորագրութեան տակ: 1887ին կը յղանայ Ամերիկահայ քերթ մը հիմնելու գաղափարը, հետզհետէ կը հրատարակէ ԱՐԵՂԱԿ, ՍՈՒՐ ՀԱՆՂԱԿ, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ և ՏԻԳՐԻՍ, այս ետքին ուրիշներու ընկերակցութեամբ:

1899ին Ֆրէզո կ'անցնի, ուր սկսաւ հրատարակել ՔԱՂԱՔԱՅԻՆ (Citizen) 1902ին, գոր կը շարունակէ ցարդ:



## ԽՈՍԱՑԻՐ

Գրեց՝ ՀԱՅԿ ԷԿԻՆՅԱՆ

Սօսք տուր ինձի հայ ապրիլ միշտ Հայաստանի աղջիկ ճան՝  
Հայրենիքի գեղեցիկներին՝ քեզ շինել տամ պատմունքանի-  
Մասեաց բարձր գլխին վրայ դիզող ամպին՝ քեզ ձեռնոց,  
Երկնից անհրա կապողներին՝ քեզ պատրաստեմ հովանոց:

Վարդեր ցանկեմ ճամբուդ վրայ ցան ու ցիր,  
Հեզուդ պահել՝ ազգդ սիրել խոստացիր:

Մեր հայրենեաց գնդախառն պես լեռանց կողին՝ տասներկու  
Տարբեր տեսակ ծաղիկներին՝ քեզ պատրաստեմ վերարկու-  
Գօտիի սեղ մեջքեդ կապեմ Հայաստանի ծիրանին,  
Ոչ թագուհիք, իշխանագուհիք ոչ ոք քեզի անանին:

Վարդեր ցանկեմ ճամբուդ վրայ ցան ու ցիր,  
Հոգիդ սիրես ինձ հայ ապրիլ խոստացիր:

Արշարույսին քեզ ձեռք տամ նուրբ հանդերձներ ու շորք՝  
Ճեմած պահուդ ետևեդ գան փղանցփեղերդ փարշ ի փարշ-  
Առաջտեան լուսոյ աստեղի սկևոց ընթան քո աչաց,  
Քեզ պահապան պաշտպան կանգնին հոգիք նախնի մեր  
փառաց:

Վարդ ու ծաղիկ ճամբուդ վրայ ցան ու ցիր,  
Ազգդ սիրել, լեզուդ պաշտել խոստացիր:

Ազգիդ սիրուն կեանքդ աչ գոհել խօսք տուր ինձի աղջիկ  
ճան,  
Վճիռ լուսնի գուռ արծաթին քեզ թափել տամ ապրանքան  
Երկնից կապոյտ կամարներին ժողովեմ աստղեր լուսնեղին,  
Գլխեմ անկե պսակ շինեմ՝ ճակտիդ վրայ գեղեցեղին:

Վարդեր ցանկեմ ճամբուդ վրայ ցան ու ցիր,  
Կեանքդ ազգիդ նուրբ քերել խոստացիր:



Վ. Ա. Վ. Ն. - Մ. Ն. Ս. Ռ. Պ.

Վ. Ա. Վ. Ն. - Մ. Ն. Ս. Ռ. Պ. — Գեորգ  
Սարափեան — Ծնած է 1889  
Փետր. 28, յԱյնթապ: 1905ին  
կ'աւարտէ տեղւոյն Վարդանեան  
կրթարանը: 1906—1907 կը յա-  
նախէ Կ. թ. Գոլէն: 1907—1910  
ֆրանսերէնի ու հայերէնի դա-  
սատու Վարդանեան կրթարա-  
նին մէջ: 1910ին Ամերիկա գալով  
կը մտնէ Պրինսթոնի Օրթո-  
Սոնի ՏԶԱՆՈՅԸ, ուրկէ 1912ին  
երջանաւարտ կ'ըլլայ: 1912ին  
կը մտնէ ԳՕԼԸՄՊԻԱ ՀԱՄԱԼ-  
ՍԱՐԱՆ, ուրկէ (B. S.) Պաա-  
կաւոր Գիտութեանց ու (M. A.)  
Վարդապետ Արուեստից տիւ-  
ղոսներով երջանաւարտ կ'ըլլայ  
1914ին լեզուներու, բաղդատա-  
կան գրականութեան, հոգեբա-  
նութեան ու մանկավարժու-  
թեան նիւթերուն մէջ:

1914—1915 երջանին նոյն հա-  
ճալարանին մէջ հոգեբանութեան նիւթին օգնական՝ ու Տաքթորայի  
ուսանող կ'ըլլայ:

Այժմ՝ խմբագիր «Ազգ»ի քաղաքական ու գիտական բաժնին:

## ԿՈՌԻԵԼՈՒ ԲՆԱԶԴԸ

ԸՍՏ ՀՈԳԵՅԱՆՈՒԹԵԱՆ

Մարդկային բոլոր լոյսերը, կիրքերն ու զգացումները բը-  
նազդներու արտաշնչութիւնն են, սարբեր ձեւերու, եղանակա-  
ւորումներու եւ բարդութիւններու տակ: Հիները դեւերու, կամ  
չար ուղիներու կը վերադրէին կիրքերու զոյութիւնը, Հեռե-  
ւորար իբր այն՝ կիրքերը արձատարել ընելու Համար ամեն երե-  
ւակալելի ու աներեւակալելի միջոցներ ի գործ կը դնէին: Միջին  
դարերու վերլուծողներ, ինչպէս նաեւ տասնեւկէցերորդ կամ տաս-  
նեւեօթերորդ դարերու մէջ ապրող բարոյախօսներ ու ուսուցիչներ  
կը Հաւատաւին, թէ մանկան բնութիւնը ի ծնէ չար է, եւ այս ըմ-  
բօնումին իբր փաստ մէջ կը բերէին սա իրողութիւնը, թէ մանուկը



զուրկ է չարն ու բարին զանազանելու կարողութենէն, մեծերու նը-  
ման կաշուն եւ հանդարտ բնաւորութիւն մը չունի, նոյն իսկ իր ա-  
ռողջութեան վնասակար առարկաները բերանը կը տանի, մատը  
կրակի մէջ կ'աչրէ, ցուրտին ու փութին մէջ անխոհեմաբար կը խա-  
ղաց, կը կաշտոնէ են, ևն. Ըստ այս ըմբռնումին, մանուկը կ'իրօքերու  
անմիջական ազդեցութեան ենթակայ է, ուստի դաստիարակութեան  
գլխաւոր նպատակն է մանուկը ձերբազատել այս ստորին կիր-  
քերէն ու երեւան բերել վարդազեզ, անբիծ, հրեշտականման էակ  
մը, որու սրտէն բոլոր կ'իրօքերը արմատախիլ եղած են:

Անդլիացի Լաքի եւ ուրիշ խորհողներու դէմ ընդդիմեցաւ  
Ռուսոյի հանձարը, եւ իր նկարուն գրիչին հզօր մոգականութեամբը,  
Փրանսացի խորհողը սարփողեց կիրքը, որ մարդկային հոգիին ան-  
բաժան մասն է, ու էմիլի առաջին էջերուն մէջ հռչակեց իր վար-  
դապետութիւնը, որ ծալրակեղ բողոք մըն է հիներու ըմբռնումին:  
Ամեն ինչ որ բնութեան ձեռքէն կ'ելնէ լաւ է. ահա Ռուսոյի այս դա-  
սական բողոքը, որ նոյնչափ ծալրակեղ վարկած մըն է, եկաւ հիմ-  
նաքարը դնելու այն շէնքին, որու սիւներն են արդի մանկավարժու-  
թիւնը, հոգեբանութիւնն ու ընկերարանութիւնը:

Ռուսոյի օրերէն սկսեալ՝ այս մասին ըմբռնումները աստի-  
ճանական լեզուաբանութիւններու ենթարկուեցան, և այսօր հոգեբանութիւնն  
ու կենսաբանութիւնը հաշտեցուցած են վերոյիշեալ երկու ներհակ ըմ-  
բռնումները: Հոգեբանութեան արդի լուսով կիրքը — զխտական չոր-  
ջորջումով — բնազդը՝ մարդուս բոլոր հոգեկան կարողութիւննե-  
րուն ազդելուն է: Չոր օրինակ, դործ մը արտադրելու տենչը՝ որոշ  
բնազդի մը տարբեր մէկ արտապայտութիւնն է, նոր գիտար ընելու  
բաղձանքը՝ որսորդական ու բախտախնդրական բնազդին եղանակա-  
ւորուած ու ընկերականացած (socialized) մէկ ձեւն է: Մանուկը  
խնամելու ձգտումը՝ մայրական բնազդին մէկ պտուղն է, հիւան-  
դանոցներ ու անկերանոցներ հաստատելու փափաքը՝ զթութեան  
բնազդին եւ ուրիշ բնազդներու միացումին մէկ արդիւնքն է:

Պէտք է ի մտի ունենալ սա հիմնական սկզբունքը, թէ բնազդ-  
ները (perse) ըստ ինքեան ոչ բարի են, ոչ ալ չար. ատոնք ոչփի  
ազդելներ են, անսանձ, վաչրի եւ հզօր: Պէտք է ուղղել, մշակել,  
եւ վնասակար կողմերը ջախջախել ու օգտակար կողմերը զօրացնել:  
Ուրիշ մէկ ուսումնասիրութեանս մէջ զանոնք նմանցուցած էի Նիա-  
կարաչի ջրվէժին, որ իր մէջ անսպառ զօրութիւն ունի՝ եթէ անկէ  
օգտուել գիտցողներ ըլլան, իսկ եթէ այդ զօրութիւնը անսանձ թող-  
ուի՝ կործանարար ու աւերիչ ոչ մը կը դառնայ:

Կուսելու միտումն ալ մարդկային բնազդներուն ամենէն գըլ-  
խաւորներէն ու կարեւորներէն մէկն է: Երբ վերլուծենք մարդկային

բոլոր մեծագործութիւնները, հոն կը տեսնենք կուսելու բնազդին  
հզօր օժանդակութիւնը եւ անհրաժեշտ ներկայութիւնը: Եթէ մարդ  
օժտուած չըլլար կուսելու բնազդով, ո՞վ պիտի փոխէր լերկ ու մերկ  
լեռները՝ մշակուած արտերու, չոր ու ցամաք դաշտերը՝ մարդա-  
շատ քաղաքներու, վաչրի անտառները՝ ծառաստաններու: Եթէ  
կուսելու տենչը չեռեռեփէր մարդուս սրտին մէջ, ո՞վ պիտի չաղթէր  
նիւթական ոչտերու, ո՞վ պիտի սանձէր ելեքտրականութեան ահաբ-  
նիւթական ոչտերու, ո՞վ պիտի փոքէր լեռները, ու անոնց ծոցէն ո՞վ պիտի  
կու ոչփը, ո՞վ պիտի փոքէր լեռները, ու անոնց քաղաքակրթու-  
հանէր ոսկիի, պղինձի, երկաթի հանքերը, որոնք քաղաքակրթու-  
թեան պատմութեան մէջ այնքան կարեւոր դեր են խաղցեր: Տա-  
թեան պատմութեան մէջ այնքան կարեւոր դեր են խաղցեր: Տա-  
րակոյս չկայ թէ կուսելու բնազդէն զուրկ մէկը՝ պիտի չլանդդէր  
արհամարհել ուղիէնստին վիթխարի ու համայնակուլ ալիքները,  
ու պիտի չհամարձակէր նաւակի մը մէջ նոր աշխարհ մը գտնելու  
համար ճամբայ ելնել: Կուսելու բնազդին մղումովն է որ երկրա-  
խոյզներ, իրենց կեանքին գնով, անկոխ աշխարհամասեր գտան, ու  
մարդկութեան հօրիզոնը ընդլայնեցին: Կուսելու բնազդը ուրիշ բը-  
նազդներու հետ միացած՝ դրդեց Բասթիօրը որպէսզի մաքառի մեր  
անտեսանելի թշնամիներուն, միջբողոքներուն դէմ, ու անոր նման  
հազարաւորներ նուիրեցին իրենց կեանքը՝ չաղթահարելու համար  
տարափոխիկ ախտերն ու համաճարակներու մանրէները: Կուսելու  
բնազդը չէ՞ որ սիրտ տուաւ Սոկրատին՝ ի սիրուս աշխարհի հըռ-  
բնազդը չէ՞ որ սիրտ տուաւ ճշմարտութիւնները՝ թոյնի բաժակն ի ձեռին,  
չակելու իր ըմբռնած ճշմարտութիւնները՝ թոյնի բաժակն ի ձեռին,  
հազար՝ Կալիլէյն, որ անդունց նոյնիսկ Պապական եկեղեցիին հա-  
հապա՞ Կալիլէյն, որ անդունց նոյնիսկ Պապական եկեղեցիին հա-  
լածանքները, և հազարաւոր հաւատա՞ ցեալները՝ որոնք հաւատաբըն  
նութեան խարոզիներու վրայ փչեցին իրենց վերջին շունչը:

Կուսելու բնազդն է սկզբնապատճառը՝ այն անհամա՞ զիւ-  
ցազնութիւններու, որոնց շնորհիւ մարդկութիւնը բարձրացեր է քա-  
ղաքակրթութեան սանդխամատերուն վրայէն: Վերջապէս, կուսե-  
լու բնազդն՝ իր անմիջական օգուտն ունեցած է քաղաքակրթու-  
լու բնազդն՝ իր անմիջական օգուտն ունեցած է քաղաքակրթու-  
թեան բոլոր մարդերուն մէջ, զիտութեան, գեղարուեստի, կրօնքի,  
կուսակարութեան, ու ընկերային զանազան հաստատութիւններու  
բնազդուն մէջ:

Հարեւանցի ախնարի մը ցոյց կուտայ, թէ ինչպէս ամեն բան,  
նոյնպէս այս բնազդն ալ կ'անցնի բնազդութեան փուլերէն: Վաչրենի  
մարդուն մօտ ատիկա երեւան կուզայ որսորդի, բախտախնդրութեան  
(instinct of adventure) բիրտ կռիւի, արխնահեղ մարտի ձեւին  
տակ: Քաղաքակրթ մարդուն մօտ, ատիկա ինքիւնը կ'արտապայտէ  
աւելի նուրբ, բարդ, ու կիրթ ձեւերու միջոցաւ: Այս իսկ կ'ապա-  
ցուցանէ, թէ այս բնազդն ալ, ինչպէս միւս բոլոր բնազդները, թէ՛  
վնասակար է թէ՛ օգտակար, թէ՛ չար է թէ՛ բարի:







լուծին տակ կը տուայախն, ու զոհուածներու դիակները բարձրացած էին մինչեւ վրէժխնդիր աստուծոյն դահը՝ բողբելու, ու զեռունացող քամին կուգար ամենամեծ կաղնիներն ալ տապալելու: Միթէ այսպէ՞ս կ'երագէր տեսնել խեղճ գեղջկուհին, երբեմնի աշխարհի գլուխական գրախար, չքնադագեղ Հայաստանը: Անոնք թանկ սուկորներու ածխներով ծածկուած, զետեր արեամբ կաղնուած, որոնց ալեակները կ'անցնէին լուռ ու տխուր լոյզներով:

Կանգ առաւ բաղդի արիւնաքամ հովի ալիքներուն շանճնուած հէք գեղջկուհին, պահ մը լուսահասութեան ցուրտ քամին եկաւ օրորել իր միտքն ու երեւակալութիւնը: Ոստիկը կ'ընտել սկսաւ, վազեց շնչասպառ Մխացոյ Թումրիին առջև, երկրպագուի մը երկիրգածութեամբ ծնրաղբեց, տառապանքի այն տատասկոտ ճանապարհին մէջ, մարող ազատութեան վառ աստղի հողաթումրիին առջև, հո'ն իր սրտի գովարանական օրհներգին հետ իր հողիին էն նուիրական ուխտը իրագործելու երդումը՝ վրէժխնդրութեան սրբազան ուխտը մրմնջեց: Արցունքի լճին մէջ, հառաչանքը կուրորդին մէջ խեղզուող բոլոր բռնաբարուած քոչրերուն վրէժքը լուծել ուխտեց:

Հո'ն է Հայ գեղջկուհին, հո'ն, այն վշտացան դաշտին մէջ, վրէժխնդրութեան կրակովը միացող հերոսուհիներու սուրբ շիրիմներուն առջև: Իր կուրծքն կախուած մանուկը վրէժի կաթով կը սնուցանէ, իր կտորտած քնարին արիւնոտ լարերուն վրայ վաղուան մարդկութեան ապագայ երազը՝ Ազատութեան ներքոյը կը հիւսէ:

Հոգ չէ, թո՛ղ փչէ արիւնի ու արցունքի կատաղի քամին ու այն հսկայ անդունդին մէջ թող կուլ երթայ միլիոնաւոր կեանքերու հետ և Արդարութիւն և Օրէնք, պէ՛տք է խամրին հաղարաւոր ծաղիկ կեանքեր Ազատութեան փշոտ ճամբուն վրայ ու վաղը անոնց արեամբ սաղմնաւորուած կարմիր Արեւը պիտի ծաղի անտարակոյս, ու աչսօրուայ դառն արցունքին վաղուան բերկրալի ժպիտը պիտի չաջորդէ: Ու զեռ հոն է Հայ գեղջկուհին, ցեղին պատիւը մարմնացնող թումրերուն առջև հերոսներու ուղղի երգը շրթներուն, կ'սպասէ, դարերով երազուած տառապանքի ցաւոտ արիւնովը շախաղուած, Հայուն կարմիր դարունին: Ու այն դաշտերը որ անհամար մաշկերու անմեղունակ արցունքներովը ուռուցուած են, վաղուան դարման պիտի ծլին ու բացունին Հայ աշխարհի իրական վարդերը, որոնց ըզզըլխիչ բուրուծին մէջ ապրող մարդկութիւնը, պիտի ձուռնայ պահ մը անցեալի սև տառները որ պիտի քողարկուին հերոսներու շիրիմներուն տակ:

Ֆէմպրին

ՕՐ . Ա . Յ . ՊՐԱԶԻԼԵԱՆ



Ս Է Ր Ը





ՍԱՐԳԻՍ ՄԱՆԵՄԷՋԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՆԵՄԷՋԵԱՆ. — Բնիկ հարբերդցի: Իր կրթութիւնը ստացած տեղւոյն ազգային կեդրոնական վարժարանին մէջ, ու 1890ին եղած է առաջին ընթացաւորտներէն մին: Երեւ տարիի չափ գրագրութեան ու վերսկիչի պատուով կը վարէ քաղաքին մետաք-

անդէնի գործարանին մէջ, յետոյ կ'անցնի Պօլիս: Աշխատակցած Պօլսոյ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ Մ. և Հրատ ծածկանուններով: Աւելցեան Պատրիարքի ազգային ներքին խռովայոյց օրերուն՝ քանիցս իբր Հընչակեան՝ Նազրմի լրտեսներէն կը կասկածուի ու խոհեմութիւն կը սեպէ անցնիլ Ամերիկա: Հոս առաջին օրէն ազգային կրթական գործերու մէջ աչքառու բաժին մը ստանձնած ու ինքզինքը առաւելապէս նուիրած կուսակցական կեանքին: Ս. Գ. Հնչակեան ու վերակազմեալ Հնչակեանութեան մէջ երկար տարիներ գործօն դեր ունեցած իբր պատասխանատու վարչային անդամ և թէ ատենախօս: Չայն Հայրենեացի հրատարակութեան վարիչը եղած 1901էն 1906: Ամերիկայի Ռամկավարութեան ու ԱԶԳԻ հրատարակութեան հիմնադիրներէն ու աշխատարկներէն մէկը եղած է: Անցեալ 9 տարիներէն իվեր՝ քէլի իր անձնական գործովը կ'ըզբաղի սակայն ազգ-քաղաքական կեանքէն բաշուած չէ և իր պատասխանատու դիրքը կը պահէ Ռամկավար կուսակցութեան մէջ:

## ՆՈՐ ՍԵՐՈՒՆՆԴԻՆ

Հայ Բնաջնջումի զօղանչն է որ կը լսուի:  
Սմէն սիրտ աչս պահուս Համազրուսելու է Հայ մեծ Աղէտին մտալ պատկերովը, անոր սուգովն ու անոր վրէժովը: Մեր մթամած միտքերը կը շտին կոխի վայրերն ու մանաւանդ մեր Հայրենի Հորիզոնները որ աւերակներու ծուխէն խաւարած ու հոսող արիւններու կարմիրէն շտաղուեալ է: Հայ ճգնաժամի աչս ահեղ վայրկեաններուն՝ մեր հողիներէն, մեր լուզումներէն, մեր իղձերէն դուրս օտար և ո՛չ մէկ բանի կրնան սեւեռիլ մեր միտքերը, մեր խորհուրդները, ուստի, մեզի հետ նոր սերունդն ալ իր մտքին վրայ դրոշմելու է ցեղին խաչելութիւնն ու անոր փրկութեան ուխտը իր սրտի խորքերուն մէջ:  
Հալը՝ մարտիրոսացած ժողովուրդը կը ճանչցուի, սէտք է ընդունիլ թէ՛ անդադրում ու դարաւոր մարտիրոսացումը անարդանք մըն է մեր պատմութեան ու մեզի, բայց ինչո՞ւ ազատագրուած ցեղի մը ազատ սերունդը չըլլայ սա մերը: Տխուր իրողութիւն, շատ ար-









ՀՄՅԿ. ՔՀՆՅ. Ն. ՊԱԽԹԻԱՐԵԱՆ

ՍԻՀԱՆԷՆ ԽԱՊՐԻԿ ՄԸ

Գրեց՝ ՀՄՅԿ. ՔՀՆՅ. Ն. ՊԱԽԹԻԱՐԵԱՆ

Հեռուն արվույն ցովքերէն շէկ կ'օսկեգօծուի դաւտ ու մարգ  
լեռ ու ծըմակ բուրաստան մ'է, լոյս, երգ, երանգ, բոյր համակ,  
Առտուան մը այս հեւտ պահուն կուտար տուած ժայռին ցից  
Հայ հովիւ մը ձայնեց գետին որ կը հոսէր նողբալից...:

«Մաքուր Սիւսան, ինչո՞ւ այդպէս բուստագոյն կը հոսիս,  
Արդեօք բօւնած վարդի բերքեր նուէր դրկեց քեզ մայր Մասիս,  
Եւ կամ աստղե՞ր լոյս կամարէն քափեցան լոյծ գոգիդ մէջ,  
Ըսէ Սիւսան, ով պարգեւեց հոսանքիդ այդ քոյրն անշէջ:

Մ'հ, մի հարցնէր, հայ քաջորդի, ճի մերձենար հոսանքիս,  
կարմիր կարմիր քաւալունս հակառակ է իմ կամքիս,  
Վարդի քոյրը փառքն է իսպառ լոյսին կոյսին սիրավառ  
Սակայն ափսոս իմ կարմիրէս կը բուրեն մահ ու խաւար...:

Յուսամ արդեօք խորխոր Սիւսան, քու ջինջ ու պերն ակունքէն  
Դուրս կը ցայտէ մշտածորան տպագրան ապագէն,  
Թոյլ տուր առնեմ ափ մը գոհար, չէ նուաղէր քո նոյս գանձ  
Ատով զսպեմ դահիճներու պիղծ մոլորքիւնը անասնա...:

Եւ ալքիս մէջ սկանակիտ հունիմ գոհար քանկագին  
Որոնց յանախ ագահ մարդիկ անդադար կը փափաքին,  
Հեռո՛ւ... հեռո՛ւ... հայ պատանի Սին յոյսիդ մէջ մոլորուն  
Պիտի քափես վառ աչքերէդ արտասուքներ ոլորուն:

Ահա դու զիս կը վնտես, սակայն տեւեղ ո՛վ Սիւսան  
Կ'առնիմք է զիս ու ծոցիդ մէջ կը նսնարեմ կարկեհան,  
Հոսանքներուդ հրայրքին դէմ, չէ՛, համբերել չեմ կրնար,  
Գոհարդ քեզի, գոնէ տուր ինձ կիւրծիւնս մի խաւար:

Կուրծքս լի չէ, ո՛վ քաջորդի, ո՛չ գոհարով ոսկիով  
Եւ կը տանիմ նենգ մարդկութեան շէկն ամօքի դէպի ծով  
Այ չեմ կրնար ծանրաբեռնիլ հոսանքներս գրքա՛ ինձ,  
Պուտ մը արցունքդ պիտի յարդէ էութիւնս քախծալից:

— «Քեզի կ'ըսեմ կայմիր Սիւսան, կը սոսկամ այդ բառերէն,  
Դո՞ւն այ արիւնարցունք ու մահ պիտի գուժես ինձ նորէն,  
Թո՛ղ այլ քիչ ինչան, բայց դու կ'ողբաս հայուն ցար լուռ, բայց պիլն  
Ըսէ՛, պիտ' գայ օր մը ուր Հայուն նահաւակումն գտնայ վե՛րջ:

Հեւեով մը անհուն լոյց գետը ոլոր մոլոր լահեցաւ,  
Իր լալիւնը արձագանգեց կիլիկիայի լեռն անցաւ,  
Թնդաց աշխարհի բայց մէկ վայրկեան ի մոլեգին հեշտութեան  
Հոնդիւնին արձագանգը խեղդուեցաւ անկեղան...:









Հալրենիքը, երիտասարդութեան ասպարէզը, ծերութեան Հանգստարանը:

Սիրենք զայն, տեսէք, որքա՞ն դեղեցիկ ու մեծ է Հայաստանը իր գոհերուն ու նահատակներուն, իր ափ մը հերոսներուն պաշտամունքին մէջ...:

Անոր գրականութիւնը, մեծ բան մը չէ ան, բայց ժողովուրդի մը հոգին է, երբեմն ըմբոստ, երբեմն հպարտ, միշտ լալկան ցեղի մը սիրտը: Բայց մերն է ան, ինչո՞ւ կը մոռնանք այս բանը, ուրեմն զգացում չունինք, ուրեմն չենք կրնար սիրել վիշտը, մեծ թշուառութիւնը, մեծ դաղափարը՝ որ մեր Հալրենիքն է...:

Անոր եկեղեցին, չարհամարհենք զայն, շատերը մեր գոլութեան պահպանումը անոր կը պարտին, ես չեմ կրնար բացարձակ հաւատք ընծայել ասոր, բայց դաղափար մըն է՝ որուն մէջ չի պակսիր ճշմարտութեան լոյսը: Անոր լեզուն, ոսկերարբառ ու քաղցրիկ մեղեդի, գեղեցկութեան ամեն տեսակ ձեւերու, ամեն տեսակ զգացումներու ճարտար եւ հզօր արտայայտութիւնն է: Սիրենք զայն, հաւատանք անոր, հաւատանք անոնց՝ որ անոր համար կը մեռնին, Հայ կամաւորները...:

Անոնք մեր ցեղին փառքն են՝ որոնց համար բոլոր ուժովս, իմ հոգիիս բոլոր հաւատքովը, գրիչիս վրայ չօքելով հետեւեալ խօսքը կը գրեմ, կեցցէ՛ Հայաստան...:

10 Սեպտ. 1915, Գահիրէ

ԱՐՄԷՆ-ՇԱՄԼԵԱՆ

### ՄՏԱԾՈՒՄԻ ՇԻԹԵՐ

Երջանկութեան նշանակութիւնը գիտնալը շատ աւելի կարեւոր է մարդու հոգիին՝ քան զայն վայելելը:

Այստաւոր առաքինութիւնը յաճախ շատ աւելի վնասակար է քան առողջ մտութիւնը:

Պատմութեան մէջ մղուած բոլոր կռիւները ծագում առած են իշխողներու ու գորաւորներու մահաճոյժէն ու անոնց աշխարհական լիակամ ձգտումներէն: Հետեւաբար տիրողներ արիւն կ'ուզեն քող իրենք մի միայն կոկորդ նեղիւն, ինչո՞ւ հասարակ մահկանացուն կը քաջալերէ գանձնէ:



ԱՐՅՈՒՆԻ ԵՐԳԵՐ

ԼԱՅ ՈՐԲՈՒԿ

Փոքրիկ եղբորս՝ Ե.ին

Լաց Հայ որբուկ... տառապանքի ու սարսափի օրերը բու ցեղիդ, լա՛ց, դառնօրէն լաց հայրենիքի քնարը ձեռքդ, արցունքի տամկութիւնը աչքերուդ մէջ եւ կարմիր խորհուրդներու հուրը մակտիդ վրայ...:

Լա՛ց, որբուկ... ծնրադիր՝ ջերմ պատուովդ նւիրական առարկային՝ անմահներու հոգակոյտին առջեւ:

Լա՛ց, որբուկ... լա՛ց, վիրաւոր հայրենիքիդ խոստանաւած սէրը՝ քանի արցունք ունիս բիբերուդ ծայրը...:

Լա՛ց, ա՛յս որբուկ... յառաջանալով հերարձակ դէպի լալկան ու սգաստեր աւերակները հայրենիքիս, ու ողբա՛, տխուր մակատագիրդ աղիտարօրէն, գի քուտուրքիւնդ խոցուցեց մեր սրտերը ու սեւցուց մեր երագները:

Լա՛ց... ու հառաջանքիդ սարսուռն քիւտով անցիր հոգիին յոյգերուն վերնագաւառները՝ եւ նման որդեկորոյս մօր մը աղիտանքին, խորհրդաւոր ու խորունկ ներքնումը պարզեւէ քարացած սրտերուն...:

Լա՛ց, գարմիկ տղայ, հիմա լացի, մրմունջի մը ու ծուէն մը խունկի պէտք ունի քոյ՛ջքս:

Լա՛ց, Հայ տղայ, արիւնալի աչքերովդ, քալէ՛ մոխիր աւերակներուն վերայէն, մինչեւ որ արցունքներդ ապագայ մարտնչողի մը սաղմը նիւթն մէջդ երկունքով մը հսկայ...:

Լա՛ց... լա՛ց...:







Եակաճեւ սպաւորութենէն, երբ Հոգմէն տարուերը՝ երբեմն կը նը-  
մանի հսկայ հարսանեկան քօղի մը, մինչ ուրիշ առթիւ ետ ու առաջ  
տատանուելով կը նմանի փափկահիւս շալի մը: Արեւամուտի ժա-  
մանակ ջրվէժը կարծես ականակիտ գոհարներու հաւաքածոյ մը կը  
դառնայ բերաւոր ծիածաններու շնորհիւ:

Այս ջրվէժներուն ճիշդ ետեւէն կը բարձրանան Կաթուղիկէի  
ժառանգը. Իտալիոյ Ֆլորենցիայի Մաչր Եկեղեցոյ աշտարակներուն  
չատ նմանելուն համար այսպէս կոչուած են: Այս Կաթուղիկէ ժայ-  
ռերը քանի մը հարիւր ոտք բարձրութենէ կը հսկեն Հովտին վրայ:

Էլ Քափիթանը, այն մեծազանգուած արտամոլթի սպառաժը,  
որ չաճախ բաղդատութեան դրուած է ձիարալթարին՝ ասոր մօտն  
է: Այնչափ շնորհքով լեռ մը չէ թէ եւ, սակայն իր վիթխարութիւնը  
լոյժ տպաւորիչ է իր ուղղահայեաց գորշ սպառաժի ճակատովը որ  
3300 ոտք ամպածրար բարձրութիւն մը ունի: Նօսը ջրաուռակ մը  
այս կատարին կողմ լուանալով կը հոսի 800 ոտք վարը նուրբ ժա-  
պաւէնի մը նման: Ասիկա կը ճանչցուի որպէ՛ս Որբեւայրիին Ար-  
տասուքը. եւ եթէ կառապանին հարցնես թէ ինչո՞ւ այս անունով  
կը կանչեն զայն, քեզ կը պատասխանէ ըսելով, «որովհետեւ եր-  
կու ամիս միայն կը վազէ:» Երեք Եղբայրները, Արծիւներու Գա-  
զաթը և Պաշնորդ Ապառաժը կ'անցնինք, մինչև որ կուգանք Պան-  
դօկը որ հսկայ սպառաժի մը ստուերին տակ անդորը կը հանդէս:

Ամիսներ կարելի է անցունել Եօսէմիթի մէջ: Սակայն դժ-  
բախտաբար, դործի եւ զբաղումի աշխարհը չի թույլատրեր միջակ  
կարողութեան տէր անձը այգեքան երկար ատեն դեգերիլ բնութեան  
այս դրախտին մէջ: Բայց սպիկա պատճառ մը ըլլալու չէ որ ճամ-  
բորդներ կամ զբօսաշրջիկներ այս վայրը այցելելէ հրաժարին. քանզի  
անոր գեղեցկութեան վրայ կարելի է դադափար մը կազմել մէկ քանի  
օր մնալով: Անոնց համար՝ որ կը սիրեն քաղի ու կատարներ մագըլ-  
ցիլ, շահագրգռական կէտերու առաջնորդող բազմաթիւ արահետներ  
կան: Ասոնցմէ մէկը կ'առաջնորդէ Եօսէմիթէ Զրվէժին, այն ջուրի  
աշաղիին զանգուածին, որ երեք ոստուծով կը թափի 26000 ոտք  
վար, այնպիսի մոնչիւնով մը որ կ'արձագանգէ սպառաժէ սպառաժ  
եւ մղոն մը անդին գտնուած խրճիթներու լուսամուտերը կը ցնցէ:  
Ջուրը սպառաժներու վրայէն կը սուրայ ա'յնպիսի արագութեամբ  
մը եւ այնքան չորդ՝ որ Գիսաւոր Աստղի մը կը նմանի իր ետեւէն  
թողլով սանտրուած մետաքսի երկար ու վէտովէտող հեռք մը: Ջու-  
րի գունդերը սուլուծով մը կը գլորին եւ կէս ճամբան կը պայթին  
փետրանման փրփուրներու եւ ջրափոշիի վերածուելով եւ կորսուե-  
լով ամպամածի մէջ:

Հսկայական Մառերու բաժինը որ ծանօթ է որպէս Մարիփօ-

ղայի Պուրակը՝ Եօսէմիթէ Հովտին հրաշալի վայրերէն մին է: Հոս  
մարդ հիացմամբ կը նայի «Միբուօլա» կոչուած հսկայ ծառերուն  
վրայ՝ որ իրենց հնութեամբ կը մըցին մարդկային հնագոյն պատ-  
մութեան հետ: Այս ծառերէն մէկուն բունը ծակելով ճամբայ շինած  
են ուսկից հանրակառք մը դիւրաւ կ'անցնի: Յիշեալ ծառին շըր-  
ջապատը 96 ոտք է: Ուրիշ մըն ալ կայ որ «Գորշ Հսկայ» անունը  
կը կրէ եւ 94 ոտք շըջապատ մը ունի — 22 չափահաս անձինք անոր  
բոլորտիքը շարուելով եւ թեւատարած ձեռաց մատներու ծայրերը  
երար դպցնելով հաղիւ կրնան զայն շըջափակել: Գիտնականները  
կ'ըսեն մեզի թէ այս ծառերը 5000 տարուան հնութիւն մը ունին:

Եօսէմիթէ Հովտին ամենէն թովիչ այցավայրը ստուցալիճն  
է: Առաւօտ կանուխ ձիով ճամբայ կ'ելլենք ուղեցոյցի մը առաջնոր-  
դութեամբ եւ կը բարձրանանք լեռն ի վեր: Գալարագեղ ու ծաղ-  
կաբոցը մարմանդներէ և պուրակներու մէջէն անցնելով կը հաս-  
նինք Ակնվանի (Հայելի) Լճին — փոքրիկ ջրէղջ մը որ բարձր լե-  
ռան մը ստորտը ինքնամիտի կը կենայ, որուն հայելիին մէջ լեռը  
կը պատկերանայ ա'յնպիսի կատարելութեամբ մը որ խիստ դժուար  
պիտի ըլլար լուսանկարի միջոցաւ ըսել թէ ո'րն է իրականը եւ ո'րը  
անոր արտացոլումը: Հոս դարձեալ ձիերը հեծնելով կը սկսինք մեր  
վերելքը եւ կ'անցնինք ա'յնպիսի վեհ տեսարաններէ որոնք ո'եւէ  
երկրի մը մէջ չեն կրնար գերազանցուիլ: Ճամբան կ'երկարի անհան-  
դաժ Մըրսէս գետին քովէն, Երջանիկ կողմներու մօտէն եւ Արծաթ  
Գոգնոցին քովի կամըջէն կ'անցնինք — գետին այն մասը՝ որ ըստ  
ինքեան մանրանկար Նիակարա Զրվէժ մըն է:

Քիչ չետոյ կը նշմարենք Գուրնայնի Զրվէժը որ իր ստիպակ  
փրփուրը կը հեղու մութ քարանձառներէն վար այնպիսի միօրինակ  
եւ շնորհալի եղանակով մը որ իր ջուրերու անդադար մկրտութենէն  
եւ քերկու եզերաց վրայ թարմ կանաչութիւն մը կը տիրէ: Գետը այս կէ-  
տին վրայ 80 ոտք լայն է եւ 300 ոտքէն աւելի բարձրութենէ մը կը  
դահալիթի: Լեռնային անցք մը կ'առաջնորդէ քեզ մինչև զագաթը  
ուր տափարակ լեռնադաշտ մը կայ որուն մէջ կրնաս սպառնով ձեմել  
գետին ուղղութեամբ, մինչ գետը Զմրուխտի Աւազանէն դուրս կ'ել-  
նէ. կ'արժէ արդարեւ դիտել այն գունափոխութիւնը զոր ջուրը կ'ըս-  
տանայ երբ կը ցատկէ դահաւանդէն վար:

Մղոնի մը չափ անդին կուգանք Նէվատա Զրվէժին: Միեւնոյն  
գետը այս կէտին մէջ 600 ոտք շեղանկիւն գառիթափէ մը վար կը  
հոսի եւ գեղեցկութեամբ կը մըցի Եօսէմիթէ ու Հարսանեկան Զըր-  
վէժներուն հետ, թէպէտեւ բոլորովին տարբեր տիպով մը: Այս ջըր-  
վէժներուն հետ, թէպէտեւ անհնէն զարմանալին կը նկատուի:  
վէժը աշխարհի ջրվէժներուն ամենէն զարմանալին կը նկատուի:  
Անոր ոստուծները ոլորապտոցա ու դարձգարձիկ են եւ անհամար



ապագա օրի ծակերուն մէջ Քրչարով կը վազէ, աչնայէս որ ջուրը ձձմուկով ամբողջապէս սպիտակ փրփուր մը կը դառնայ: Արդարեւ, Հեռուէն, կիսանկար տեսարանը կը ցուցնէ որպէս թէ ձիւնապարտ մըն է:

Աւելորդները Հոս ձիւնըն վար իջնելով մի քիչ դադար կ'առնեն եւ Հանդիստ կուտան շորքատանիներուն: Ասկէ շատը կը սկսի զիկ-զակ լեռնային ճամբան որ լեռան կողմն ի վեր կը բարձրանայ: Կէս ժամ շատը սառնալիւսը կը Հասնինք: Հոս, չուրսած ճամբորդները անյաղ աչքերով կը բախեն ձիւնապարտ լեռներու սիրալի փառքը:


Առկախ ժայռին վրայ կանգնելով, Հովիտէն 7032 սար բարձրութեան մը վրայ, մարդ ահնադիչ կը նայի դէպի բարձր Սիբերանները եւ կը տեսնէ Համաշխարհայեան անդերադանցելի բնական գեղեցկութեանց, վասն զի իւրաքանչիւր լեռնադաղաթ, կամ շարք մը սարերու, մէկը միւսէն աստիճանաբար կը բարձրանան մինչև որ աս տարտափը կը կորսուի կապուտ երկնապարտին մէջ: Մըրսէտ գետին կը Հետեւինք մղձմններով, մինչև կը Հասնինք անոր աղը՝ ուսկից բարակ արծաթ թելի մը նման անիկա կ'երկարի մերթ դուրը ու լեռի ժայռերու վրայէն, մերթ դալարադուարձ լեռանց կողերուն վրայէն ու մերթ կորսուելով կը միանայ մշանջնաւոր ձիւնապարտ լեռանց դաղաթներուն՝ օձադտոյտ ճամբաներով, այս փտակը կ'ստատանք ժայռի ի ժայռ, սկսելով իր խաչտաճամուկ ընթացքը անմեքձ կատարներէն մինչև կը Հասնի վարի Հովիտը, որ կատաղի, փրփրայտը ու արագալիսը գեանահոսանք մը կը դառնայ:

Իրիկնամուտին, երբ արեղակը լեռանց սղոցածեւ ծայրերուն վրայէն ի մուտս կը խոնարհի, անոր վերջին նուաղիտ ճառագայթները ի չափ կը բերեն արեւելեան տեսարանին գեղեցկութիւնը ու վսեմութիւնը: Նախ՝ ամբողջ արեւելեան տեսարանը սղոցուած է կակուղ, միօրինակ լուսովը վախճանելու մօտ եզոյ տարնջեան՝ որ կը փայլիլի բլուրներու, լեռներու, կարկաջահոս վտակներու եւ սառույցներու վրայ — տեսարան մը աննկարագրելի գեղեցկութեան: Եւ ահա՛ ստուերները կ'երկարին եւ միտմի իրարու կը չաջորդեն, կատարները տակաւ կը կորսնցնեն արեղակեան շողջողիւնը, մինչև որ աղօտ Հեռաւորութեան մէջ երկնաբերձ աշտարակ մը իր վերջին հրածեղաի Համբոյքը կուտայ ուրիշ անհետացող մէկ օրուան եւ խորհրդաւոր մթութիւնը ու թանձր խաւարը կը ծածկեն երկիրը:

Իսկ գիշերը, — օ՛հ, գիշերը անբաժան հրապուրներէն մէկն է այդ հրաշագեղ եւ անզուգական վայրին որ «Եօսէմիթէ Հովիտ»ը կը կոչուի:

Ֆրէզնօ, Քալ. Օգոստ. 29, 1915

## Ս Ի Ր Ո Յ Մ Ա Յ Ը



Գրեց՝ ԺԱՆ-ՎԱԼԺԱՆ

Ծովափին եզրը նստած գերդ տասրակ  
Սիրով արբեցած,  
Կ'ընդդիմէ նեկտար, սիրարորը համակ  
Հոգւով վերացած:

Ալիքներուն սակ թաղած վիշտ, սանջակ,  
Չագիր բունութիւն,  
Յեղիս դարաւոր հաշածակ, գրկակ  
Եւ մահ, գերութիւն:

Սեր երգեր սոխակ, լեռ, ձոր, ծառ, ծաղիկ  
Գրկախառնըւած,  
Մեղմ գեղիւնիկն հեռ եւ երկնի աստղիկ  
Սեր-հուրով վառուած:

Երկուքիս սերը հոս-հուն թրփուր  
Վաղ առաւօտեակ  
Երբ մեկ սիրէիք ակվորով զիրար  
Անվերջ, յարիտեակ:

Բայց առա՛դ, եղն'ւկ, միթեցակ սուրբ,  
Կայծեր շանթեցիկ,  
Խուժեցիկն ծովափ կատարած աղիքներ  
Նեւ անդունդ տարիկ:









մէկը դիւալին ժպտաւ մը կը դիտէր իր տէրը՝ որ Հայ Ազգիկը սրտին սեղմած, անկուշտ ու անվերջ համբուրներ կը քաղէր կսկիծի արցունքներով ողողուած աչտերէն: Աշտ լուրջ հայեցողութեամբ մը կընէր վախուկ պարագան, ... նպատակը այդ դժոխատիւ Մեծաւորին խաբել էր, սակայն Հայուն Հայուն վտանգելու երկիւղը կար իր մէջ: Վրէժի գեպուծը կը հրահրէր Աշտին դէպի վճռական քայլ, եւ նա ընտրեց նախ սպաննել ստրուկ ծառային, ու չանկարձ հրացանը ուղիղ՝ շիւ շիտակ դիրքի մը մէջ պահելով, խլացուցիչ մտախնդր գոռաց եւ արնաքամ գագանը դիտապատ շրջեցաւ գետին: Չարկը երկրորդելու առիթ չտուաւ Մեծաւորը, ու արագընթաց նժուղի մը նման խոչացաւ ազատարարին վրայ, երկուքը իրար վաթթուեցան... բաց, չանկարձ գօտեմարտի պարագային Հայորդուն պաշտպան դեռնիւր ինկաւ, եւ վար թափուող ծամերը Գիւրտին ձեռքը մնաց, դազանը ճիւղաղալին վայրագութեամբ մը խուրձը ձեռքը վաթթեց ու ցնցեց ուժգին, աչքին լոյսը դուրս բերելու աստիճան: «Կեալուրի աղջիկ ես դու, ըս...», այսպէս կը դռար հրէշը եւ կնկան մը դէմ ինքզինքը դանակը ամօթ ու հեղանք կը համարէր, ու հողիւ թէ կը պատրաստուէր մահացու հարուածը տալ Աշտին: Երբ արդէն սրտին խորէն դուրս ժայթքող սաստիկ ցաւ մը թուլացուց իր բոլոր էութիւնը եւ ձեռքերը սկսան ինքնաբերաբար պրկուիլ, ու զգաց թէ Հնչակեան դաշունն էր, որ մխուժած էր իր սրտին ներսը...:

Երեք հոգիներու շանթալից ակնարկները իրար հանդիպեցան ու խոր լուռութիւն մը տիրեց... վասնզի դէպքը խիստ դիւցազնական էր...:

Աշտ կամաց մը վեր առաւ բզբտուած ու վար կախուած բաճկոնին կտորը, եւ ծածկեց անոր վիրարայ կուրծքը, եւ ապա արծիւի մը պէս թռաւ ու գնաց գրկել շուարած հէ՛գ սրբուհին...: Քրոջական քաղցր համբուր մը դրոշմեց անոր անբիծ ճակտին... եւ ահա շնչասպառ ու մարմրուն շեշտով մը՝ կորագլուխ ու արևաբազմ գեղուհին, սիրտ առած՝ մատը հեռաւոր ու ընդարձակ դաշտին մէկ կողմը ուղղելով՝ «Հոն լեցուած են Հայ աղջիկները» ըսաւ ու հեկեկաց...:

Մինչ այդ, արձանացած խմբապետ Հայկ Բժշկեանց ցնցուեցաւ, սարսռաց ուժգին եւ վեր վազեց խուճրին խնայ տալ անակնկալ չարձակուծի մը կարիքը:

Կռիւի ընթացքին, հոգեկան չուզումներու մէջ երկու հայուն հիններու կրճերը փակուած մնացին, եւ իրար խառնուած տառապանքի աղի արցունքը, ստիպեց մէկին խանձուած հոգով ցանցել

ամենէն մեծ անունը՝ «Հայաստան, Հայաստան» ու թողուց որ այդ անունը ջնջել ջանացող կրակն ու կսկիծը անթեղուած մնալ իր փախուկ սրտին մէջ, վրէժի կայծը վառ պահելու համար:

Անգամ մ'ալ համբուրուեցան երկուքը, եւ Աշտ վերէն իջնող քաջերուն հեա խառնուելով՝ կռիւի ճամբան շարունակեց քալել: Նոր դժբաղքներ փրկելու համար:

## ԲԱՆՏԱՐԿԵԱԼԻՆ

Քովիդ էի... մահասարսուտ բանտիդ մէջ Ասպնջական խոկումներու վա՛յր լսին Ո՛ւր փողփողուն լո՛յս եղիներ վառ անե՛ջ Հիւժած հալած են կարօտով տենդագին Քովիդ էի... դուն տխրագին դարկահար կը հեալիր ցաւերուդ մէջ անդալար:

Ասպնջական խոկումներու վա՛յր լսին, Շուրջդ ունէիր քեզ լոկ մտերիմ շրքան Դասն ցաւեր լիկեր էին սիրուդ արի՛ Ու մահաստուեր, մոայլ կեանքդ բանտական երակներուդ մէջ ներմուծեր էր վայրի Ըղձամբներու բոլոր կեանքդ անհնարին:

Ուր փողփողուն լոյս եղիներ վա՛ռ, անե՛ջ Յար կ'արտասուեն իրենց սրտին ցաւն անհուն Համապարփակ լուրեան մը գոգին մէջ Պաշտամունքի գգացումովն իմ հոգւոյն Քեզի եկայ ես ալ անոնց հետ բարբ Որբնք մակտիդ կուլան սեւ գիրն ա՛հ այսօր...:

Հիւժած՝ հալած են կարօտով տենդագին Ամենուն հետ քու սիրուդ ալ է ցաւածին Հեռագրգիւ տագնապիդ մէջ քախտագին Յաւերթօրէն՝ սուգը պատած քու մակտին Կ'սպասե՞ս դեռ... սեւ ֆողերով ցրտագին Մինչ հոգւոյդ մէջ վատի հերձեր կը բացուին...:

Քովիդ էի... դուն տխրագին դարկահար Կաղօրէիդ աչքդ անհունին սեւեռած, Յոյս, կար, եւ լո՛յս բիրբերուդ ծայրն անձկալի կը ճնշէր մէջդ լուռ բողբօքի մէկ Աստուած Ու կ'արձակէր իզձն իր ծիւր բերկրալի Առատութեան մտազայրող լոյսէն յար...:



Կը հեւայիր ցաւերուդ մէջ անդադար  
Ասպնջական խոկումներով մը լռին,  
Ու փողփողուն՝ եւ լոյս, հոգիէդ վառ անեւջ  
Հիւժած՝ հալած կարօտի տեղ տեղագին,  
Ձայն մը միայն կ'արձագանգէր սիրավառ  
«Կեանքս հո՛ն, Սէրս հո՛ն է... ցեղիս մէջ...»

ՅՐԹ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

## ՍՆԱՐԻՍ ՄՕՏ

Գրեց՝ ՀՐԱՅՐ

Մով մը կիկար, շոյսի տժգոյն  
Կուշայ արցունք,  
Սրտիս պէս որ յոյզով մ'անկուռն  
Հիւժէ խորունկ:

Կաթիլ կաթիլ, ինքնաշփուած  
Նաւեւ անծիլ  
Կեանքս արուստեւ, տրմոյն՝ անկաշծ  
Արուստը իր բիլ:

Աւաղ, հոգւոյս ցաւը կապոյտ  
Հոկ մարմարի.  
Յուրտ շիրմիկ տակ՝ ծաղիկ մ'անկոյժ  
Պիտի մարի:

Ուռքքառն



## ՀԱՅՈՒՆԻՒՆ ԱՂՕԹՔԸ . . .

(Սարսափներէն վերջ)

Գրեց՝ ԱՐԱՄ Յ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Վըշտի խոր կոտորանով մը՝ դաժանօրէն՝  
Ու ըմբոստացողի հոգիով մը առնական,  
Արցունքի քնարը ձեռքս . . .  
Դարձեալ քեզի կուգամ, Տէ՛ր,  
Տաղելու համար արիւնոտ սրտիս երգերն ողբանքազ . . .  
Թըշուտ մանկութեանքս օրերը տըխուր,  
Ու վայրկեանները արիւնով յըզի,  
Որպէս գի այն կեանքը, որ սիրեցի ապրիլ,  
Կեանքն ըլլայ նաև ամէն հայուհիի,  
Ու խունկը՝ իմ հայրենիքիս անտէրունջ սեղանին . . . :  
Ինքնամոռնով մը և հալածական,  
Դարձեալ քեզի կուգամ Տէ՛ր.  
Եղբերգելու համար այն ամէնն, որ ես տեսայ  
Եւ պատմելու՝ այն բոլորն՝ որոնք ըստապօրէն,  
Իմ դըժբախտ հայրենիքիս մըխացող աւերակներուն վրայ կատարուե-  
ցան:

Լըքուած և յուսահատ . . .  
Դարձեալ քեզի կուգամ, Տէ՛ր,  
Ողբերգելու համար հայուհիին կեանքը,  
Որ պըղծուած տեսայ,  
Եւ հայրդին՝  
Որ ըստըրկութեան ցամբուն մէջ կիյնար . . . :  
Ահաւոր վայրկեաններ տեսայ ես, այո՛ւ,  
Արիւնով ու սուգով յըզի . . .  
Ես տեսայ անգըքաբար մանուկներու խըլուիլն իրենց մօր գըրկէն,  
Ու անոնց խողխողուիլը խըժղըժաբար . . .  
Ես տեսայ հայուհիներու առեւանգըւիլը, իրենց հայրերուն քով,  
Ու անոնց պըղծըւիլը իրենց եղբայրներուն մօտ . . .  
Ես տեսայ պատանիներու մորքըւիլը, իրենց մօր ոտներուն առջեւ,  
Ու անոնց յուսահատ շարժումները գալարաւող . . .  
Անմեղ հոգիներու այրըւիլը տեսայ ես,  
Ու անոնց անիրենքը մոխրացած . . .



Ես տեսայ ծերերու ըսպիտակաւեր գուլսներ  
Մէկդի՛, ցեխերու մէջ գրլորուած ...  
Ես տեսայ իմ եղբայրներուս դաժան մահը,  
Ու անոնց կըտըրարւիլը մաս առ մաս ...  
Ես որբեր տեսայ, որոնք հայրենիքի աւերակներուն մէջէն  
կը քալէին ճօթի, մերկ ու միայնակ ...  
Քայրեր տեսայ ես, որոնք հաց—հա՛ց կ'աղաղակէին  
հեղդուկ ձայնով մ'օրհասականի ...  
Մայրեր տեսայ ես, որոնք դառնակակիծ մահը կ'երգէին,  
Ու արհնոտ մտտերով իրենց մագերը կը փետտէին խօլաբար ...  
Հայրենիքիս նամբուն վրայ, վիրաւոր հայրերս տեսայ ես,  
Որոնք ինկած էին արիւնի այդ նամբուն վրայ վատաբար ...  
Ծեր մայրեր տեսայ,  
Որոնք իրենց գրուլսները կը ծեծէին մուկեցած,  
Անիծելով չարաւուր բախտը իրենց վերջին օրերուն ...  
Արիւնի մէջ խեղդուած անմեղ հոգիներ տեսայ ես,  
Արցունք տեսայ մանկութեանքս մէջ,  
Ես տեսայ այս բոլորը, այո,  
Ո՛վ իմ հայրենիքիս ոխերիմ Աստուածը ...  
Որ չուզեցիր լըսել իմ քայրերուս մարող հառաչները,  
Ու անոնց վերջին բառերը կըցկըտուր ...  
Դու՛ որ չուզեցիր լըսել իմ ապարախտ հայրերուս սրտանմլիկ լացը ...  
Ու անոնց երգերը լալահառաչ ...  
Դու՛ որ չուզեցիր լըսել իմ յուսահատ քայրերուս աղօթքը դառնա-  
կըսկիծ ...:  
Ու անոնց հեծեծող հառաչները սրբամաւուր ...  
Մինչ ես մտիկ ըրի դառնօրէն,  
Իմ հայրենիքիս աւերակներուն վըրայ քառող լալկան բուռի եղերեր-  
գակ վայերգներուն ...  
Մինչ ես մըտիկ ըրի քրոջուններու երգերուն տրամաբախիծ,  
Ու հայրենիքիս կուրծքէն վեր բարձրացող եղերական նիջերուն ...  
Ես այս բոլորէն վերջն էր որ,  
Վըստի խոր կոտորանքով մը՝ դաժանօրէն՝  
Եւ ըմբոստացողի հոգիով մը առնական ...  
Արցունքի քընարը ձեռքս,  
Դարձեալ քեզի եկայ, Տէ՛ր,  
Տաղելու համար արիւնոտ սրբախ երգերն ողբանըւագ ...  
Թըռուտ մանկութեանքս օրերը տըխուր,  
Ու վայրկեանները արիւնով յըղի,  
Որպէս զի այն կեանքը, որ սիրեցի ապրիլ

Կեանքն ըլլայ նաև ամէն հայուհիի,  
Ու խունկը՝ իմ հայրենիքիս անտէրունջ սեղանին ...:  
Ասկէ վերջ քըծնող հայուհին չըլլամ, Տէ՛ր,  
Խըրոխտ հայրենիքի ազատ լեռներուն ...  
Զըլլամ ըստուկ ու անպատուրուած հայ աղջիկը,  
Գերութեան և ըստըրկութեան անարգ շղթաներուն տակ՝  
Վատօրէն հեծող հայուհին չըլլամ ես .  
Զըլլամ իր քըլեամիներուն պիղծ սուրբուն առջեւ  
Ըստըրկօրէն գուլս խոնարհող ու բըռնաբարուող հայուհին ...:  
Զըլլամ, Տէ՛ր, հայրենի ուղիղ նամբաներէն վատաբար քալող ապա-  
գայ հայ կիներ չըլլամ ես,  
Այլ կամք մ'ըլլամ, ու այդ կամքիս մէկ համակ արիւն,  
Սէր ըլլամ, ու այդ սիրոյս մէջ գերազանցօրէն յաղթութեան և պայ-  
քարի ոգին ...  
Թո՛ղ ծովի ալիքներուն խըրովքն ըլլամ ես,  
Ու փոքորիկը տաժանօրէն անհի ովկիաններուն .  
Թո՛ղ անպերուդ մէջէն սուրացող շանթն ըլլամ, Տէ՛ր,  
Թո՛ղ հայրենիքիս ազատ հայուհին ըլլամ ես,  
Ու փէտայիի հրացանն ուսիս,  
Եղբայրներուս հետ,  
Մեր քըլեամոյն դէմ կըռուիմ վայրագօրէն ու նակատաբաց,  
Ու այսպէս ցոյց տամ իմ երկչտ ու անպատուրուած քայրերուս,  
Թէ տըկար աղջիկ մ'ալ կըրնայ կըռուիլ հերոսաբար,  
Թէ նա էլ կարող է սուր և գէնք գործածել,  
Թէ նա էլ կըրնայ կըռուիլ դիւցազնաբար,  
Ու փըրկել իր տարիներու անպատուրուած պատիւը ...:  
Թո՛ղ որոտումն ըլլամ անպերուդ,  
Ու փրկութեան նոր պատգամներ տամ,  
Ազատ Թուրքիոյ բարձունքներէն յաղթական ...:  
Զօրութիւնով ու յաղթութիւնով յըղի, իմ հայրենիքիս հերոսուհին  
ըլլամ ես ...  
Ու եռագոյն դրօշը ձեռքս ...  
Կանգնած անհամար աւերակներուն վըրայ,  
Կամէկս կամք բաշխեմ իմ քըլուտ քայրերուս,  
Եւ անոնց մեղկացած երակներուն մէջ կըտոր մը երկար դընեմ,  
Ու նոր ոյժ մը առնական,  
Բոց տամ մարած հայրենիքիս,  
Ու այդ բոցերուն հետ ես ալ բըռնկիմ ...:









Գ. Յովհաննէսեանը կարուծատէր մըն է, վախճանի մօտ, միջահասակէ վերջերս լուրերը մօտեցած են մինչեւ իր տան դուռը, Գաշիքէի աղտոտ, անշանփողոցներէն մէկուն մէջ: Արիւնտ, սրտածմլիկ լուրերն են անոնք՝ որ Հայաստանէն կուգան, կը զարնուին անք ահանջին տխուր, սուսկալի արձագանգով: Անտարրեր կեանք մը կը վարէ ան: Արդէն աղբալին խոզիքներէ հեռու մնալու համար քաշուած է այն անշուք փողոցին մէջ, ուր մէկը չի համարձակիր մօտեցալ անոր: Հալ հարուստն է ան՝ որ կ'ուզէ աղքատ երեւիլ: Կարուծատէրը ընդունած է այցելութիւնը երեսասորդի մը՝ զոր կը հանչնայ: Պարոն Հրաչեան լայնած է անոր իր այցելութեան նպատակը: Հարուստը իր ճաշատ դուռը բերելով՝

— Գրեմ ինչ որ կ'ուզէք բռնել, առէ՛ք: (Սեղանին վրայ կը նետէ հինգ անդլիսական սակի): Ո՛չ, Պարոն Հրաչեայ, առելի տալ չեմ կրնար, պարտալ տեղը կը փորձէք համոզել, դուրսը, Հասարակութեան մէջ հարուստ կը կարծեն զիս, բայց բոլորովին հակառակն է ճշմարտութիւնը, առէք այս հինգ սակին, կը բաւէ, ուրիշ չունիմ, եթէ ամեն մտքդ այսքան տալ...:

Հրաչեայ — Պէտք է գիտնաք որ Հարեմիքը կը դրկէ զիս ձեր մօտ, ձեր խիղճը շարժելու...:

Յովհաննէսեան — Խիղճը շարժելու... չեմ հասկնար, բայց ուրիշ խօսք չունիմ բնելիք, ինչո՞ւ կը պնդէք որ առելի տամ... (Իր երկու ձեռքերը դրսմաններուն մէջ դրած) դուք, օրինակի համար...:

Հրաչեայ — (բարկութեամբ) Ի՞նչ բռնել կ'ուզէք, մի՛ վերադարձէք զիս, որովհետեւ Հարեմիքն է որ կը խօսի ձեզ, Պարոն Յովհաննէսեան...:

Յովհ. — Ոչինչ, բռն՞՞մ ձեզի, Պարոն Հրաչեայ, լայնած՞՞ կարծիքս:

Հրաչ. — Ի՞նչ բանի վրայ:

Յովհ. — Անոնց, կամուսններուն՝ որոնց ի նպատակ հանդանակութեան ելեր էք դուք, բանի մը երազողներ, կարծելով թէ Հայաստանի փրկութիւնն ձեզմէ կախուած ունէր, մեր հարուստներէն... այսքան ծիծաղելի բան չըլլար: Յետոյ, սխալ դուս կը դարնէք, ո՞վ ըսաւ ձեզի որ ես հարուստ եմ, քաւ լիցի, նայեցէ՛ք, տեսնելու համար աչքեր ունիք, նայեցէ՛ք, կը խնդրեմ, մեր հիւրատեսնակն է առիւտ, տեսէք, պատերէն կախուած պատկերները, չըմանակները սակեզօ՞մ են, սիւն, տեսէք, պատերէն կախուած պատկերները, չըմանակները սակեզօ՞մ են, Պարոն Հրաչեայ, դասեցէ՛ք, դուք՝ որ ամենախելացին էք անոնց մէջ, դուք որ համարաբար տեսած մտքդ էք: Հարուստի մը տունը այսպէ՞ս կ'ըլլայ: Աթոռները մաշած են, տեսէք ի՞նչպէս կը շարժին (տաքի ելնելով իր աթոռը կը շարժէ), և դուք, այս նեղ պարագային, եկեր էք ինձմէ խոշոր դուժար մը կորզելու: Գիտաւորութեամբ, չէ՛, զիս չէք կրնար խարել, այս աղբը մեռնելու է, ուրիշ չար չի կայ...:

Հրաչ. — Ի՞նչ բռնել կ'ուզէք, բան մը չեն նշանակեր ձեր խօսքերը, կը խնդրեմ, խորհեցէք վաշիկեան մը, դանձեր կան ստուերին մէջ պահուած, անդործութեան, աղաղակին շուշլ վատնուծի դատապարտուած հարիւրաւոր հազար սակիներ...: Այս մտաղին հարու՞մը...:

Յովհ. — (Աչքերը կատաղութեամբ լեցուն) Ի՞նչ մետաղ...:

Հրաչ. — Ոսկին, Պարոն Յովհաննէսեան, ձեր սիրածը, ձեր պաշտածը... Անոր հպուծին, սիւտի բռնի, ձեր աղահններուն ձեռքերը կը դողան փոխանցելով անոնց հողիներուն երեքարական հոսանքի մը պէս, տարօրինակ, մեղի համար ան-



Հասկնալի երջանկութիւնն ձր...: Շատերը կ'ըսեն որ դուք անոնցմէ մէկն էք...:

Յովի.— Ե՞ս, Լ՞ս... բայց... բայց իրաւունք չունիք այդպէս խօսելու:

Հրաչ.— Լաւ: Հայրենիքը ողորմութիւնն չի խնդրեր ձեզմէ, Պարոն, ան կը պահանջէ որ կատարէք ձեր պարտականութիւնը...:

Յովի.— Ի՞նչ պարտականութիւն...:

Հրաչ.— Նուիրակներ, ամենազեղեցիկը՝ որ դուրսիւնն ունենայ երբեք մարդկութեան մէջ...:

Յովի.— Ձե՞մ հասկնար...:

Հրաչ.— Ձոհողութեան, նուիրադորձումի սրբազան պարտականութիւնը...:

Յովի.— Հա՛, կը հասկնամ, ըսել կ'ուզէք որ ասմ ձեր ինձի վերադարձ երեւակալական հարստութիւնը, հարիւր հազարներու թաղասոցը:

Հրաչ.— Բոլոր հասարակութիւնը դիտէ...:

Յովի.— Հասարակութիւնը... խաբէութիւնն մ'է ան:

Հրաչ.— Բոլոր ժողովուրդը դիտէ, բոլոր հայրենիքը, բոլոր մարդկութիւնը... (չեշտելով)

Յովի.— (ծիծաղելով) Հայրենիք, ժողովուրդ, մարդկութիւն, ո՞ր մէկը միտքս պահեմ, բայց ի՞նչ ասեմ, անոնք չէ՞, Պարոն Հրաչեայ...: Առէ՛ք աս հինդ ոսկին, եթէ չէք ուզէք, ալ կը բաւէ, շատ խօսեցանք...:

Հրաչ.— Ո՛չ, Պարոն:

Յովի.— Ինչո՞ւ:

Հրաչ.— Ողորմութիւնն մ'է ան, ամէն մարդ կը ճանչնայ ձեզի, դուք աւելի կրնաք տալ մեռնող Հայրենիքին...:

Յովի.— Ան ի՞նչ տուաւ ձեզի:

Հրաչ.— Տուէ՛ք եւ ապագային հազարապատիկով պիտի ստանաք...:

Յովի.— Ի՞նչպէս, ի՞նչ կերպով...:

Հրաչ.— Ձեր դասակները փրկուած հայրենիք մ'ունենալու հպարտութեամբ պիտի ապրին: Տուէ՛ք, մի՛ վարանիք, ձեր կալուածները անձեռնմխելի պահելու համար մի՛ մոռնաք հայրենիքը՝ որ լայնատարած, խորունկ, արիւնոտ դերեզմանի մը կը փոխուի...:

Յովի.— Մեռած է արդէն, Պարոն Հրաչ, հայրենիքը դիտել մըն է, մի՛ խոսովէք խեղճ մեռելին չարտեսական հանդիսաբ, ինչո՞ւ դերեզմանը կը բերէք...:

Հրաչ.— Հանելու համար անոր կուրծքէն դափնիները՝ զորս ունէք տանաք...:

Յովի.— Երազողներ, ոչինչ կայ հոն, միայն աճիւն...:

Հրաչ.— Լուսեղէն աճիւն մը՝ զոր պէտք է գուրդուրանքով պահել հոս, մեր կուրծքերուն տակ, իրրեւ նուիրական մասունք մը:

Յովի.— Ուրեմն առէ՛ք սա հինդ ոսկին...:

Հրաչ.— Տուէ՛ք ձեր գանձը:

Յովի.— Դու՛րս, Պարոն Հրաչ, դո՛ւրս... (դուռը բանալով)

Հրաչ.— Ծնորհակալ եմ, (դուռը կ'երկնէ, լետոյ երեւնալով դրան մէջ) կը մաղթեմ, Պարոն Յովհաննէսեան, որ այն արիւնոտ դիտելը՝ որ հայրենիքն է ձեզի համար, ճնշէ ծանրօրէն ձեր գրուելի խղճին վրայ: Անխճուի՛ք, դուք՝ որ դոհել չէք դիտեր, դուք՝ որուն սիրտը չի կրնար թափուել մեծ թշուառութեան մէջ՝ մեծ դաղափարին համար...:

Յովի.— Կը տատանի ինչալու մօտ, մէկ ձեւքով կը կոթնի դրասեղանին միւսը ճակատին վրայ՝ զոր պող քրտինք մը կը թրջէ) Պարոն Հրաչեայ, Պարոն Հրաչ... (լայն չունչ մ'առնելով) դնաց, փնտք աստուծոյ... (կը մտանայ դրան

կը դոցէ, կը կողմէ դաչն երկու անգամ, լետոյ դրասեղանին վրայ կը պարպէ եր դրամապանակը սակեղրամներով լեցուն: Ոսկիին փայլը անոր մարած աչքերը կը շլացնէ) Ձեզի կ'ուզէին առնել, չէ՛, պիտի չի տամ, հայրենիքը երազ մըն է, մինչ դեռ ձեզի կը դնեմ իմ ձեռքերուս մէջ... (կը լեցնէ իր ձեռքերը, լետոյ իր ճաղատ դուրսը ձգելով անոնց վրայ) Որքա՞ն իրաւունք ունէք Պարոն Հրաչեան, ձեր հղուած անհասկնալի, տարօրինակ երջանկութիւնն մը կը փոխանցէ իմ հոգիսս... եթէ ինքն ալ հասկնար, եթէ ինքն ալ զգար այդ երջանկութիւնը... «Երազ ու վիտ»:

ԱՐՄԵՆ-ԵՐԿԱԹ

# Մ Ա Յ Ի Ս 1

Համալեւոսարհային բանուրական տօն

«Պրօլետարներ բոլոր երկիրների միացե՛ք»

ԿԱՐԼ ՄԱՐԿՍ

Առաւօտը՝ բնութեան զարթօնքի եւ ծաղկումի, կեանքի նորածագ արշալույսի եւ վերապրումի, Կապիտալիստ Դասակարգի հիմնաքարի փլուզումին եւ քանդումին, Ընչազուրկ Մասսայի ձերբազատման եւ լուսատու ջաշի, առաւօտը՝ Համամարդկային Եղբայրութեան եւ Համաշխարհային խաղաղութեան Մեծ Տօնին:

Ողջո՛ւն քեզ Մեծ Օրը:

Այս այն Մայիս Մէկը, Մեծ Օրը չէ, որ շատ հին ատենները թէ՛ Եւրոպայի եւ թէ՛ Ասիոյ մէջ կը տօնէր Հարուստէն եւ բանւորէն, կղերէն եւ աշխարհականէն փառայեղ եւ պերճափայլ՝ որպէս կեանքի նորածագ դարձնի, ապրուստի եւ առատութեան խորհրդանշանը: Այո՛, այս այն Մայիս Մէկը, Պաշտօնական Տօնը չէ, որ կառավարութիւններն անդամ կը մասնակցէին դիւնորական թափոքներով, աշխարհի ցոյցերով բնութեան վերադարձնումին փառատօնը ցնձերգելու:

Այսօրուան Մայիս Մէկը, սակայն, քաղաքական եւ տնտեսական Հանգամանք ունի եւ միայն չատուկ է բանւորներու, տնտեսական դերութեան ժանգոտ շղթաներու տակ Հեծեճող մասսային, նա տօնն է Համաշխարհային բանւորութեան եւ օրը անոր ձերբազատման, իսկ օրը՝ պուրժուազիայի մահուան ահաբանողի:

Այսօրուան Մայիս Մէկը կը նշանակէ՝ միջազգային շահագոր-



ծուծի դէմ միջազգային կռիւ, միջազգային դրամատիրութեան դէմ միջազգային գործաւորական եղբայրութիւն, եւ վերջապէս՝ միջազգային դրամական Համերաշխութեան դէմ՝ միջազգային կազմակերպուած բանւորական Համերաշխութիւն:

Ողջո՛ւն միջազգային բանւորական Համերաշխութեան:

Աշտուրեան Մալխ Մէկը արհաւիրացի օքն է կապիտալիստ դասակարգին, փորձանքի օր մը, աշխարհը իրենց զլխին փլշելու օր մը համարեա: Ազգային վալերբը կը գրաւուին ոտտիկաններէ, պուր-թուա-կառավարութեանց գործակալները կազմ ու պատրաստ հրամանի կ'սպասեն կրակելու անցնող լուս եւ սակաչն այդ լուսութեան մէջ իր ստեղծագործութիւնը տեսնող եւ կապիտալիստ դասակարգին գերեզմանը պատրաստող բանւորական հսկայ բանակը.— օրական ուք ժամ աշխատանքի պահանջը իբր շրթներուն վրայ դամած: Կը քալեն նորագոյն այս գերիները, արդի անտեսական անհաւասար կարգերու գոհերը, անօթութեան ուրուականէն եւ շահագործուածի սխտէմէն ցնցուած՝ ստեղծագործող եւ սակաչն ընչազուրկ հողի-ները, կը տօնեն գաչն չաճախ իրենց արիւնով, որպէս իրենց աղա-տութիւնը երկնող եւ եղբայրութեան կապերը զարբնող միակ տօնը, տօնը՝ աշխատանքի եւ համաչն մարդկութեան:

Ողջո՛ւն քեզ Աշխատանքի եւ համաչն Մարդկութեան Տօնը:

Տնտեսական եւ քաղաքական հանդամանք ունեցող այս տօնը, ծնունդն ըլլալով ընչազուրկ մասնային՝ 1888 թւականին Ամերիկայի Աշխատանքի Դաշնակցութիւնը Ս. Լուիզի մէջ դումարած ժողովին մէջ որոշեց այդ օրը նշանակել համաշխարհային բանւորութեան տօ-նի, ցոյցի օրը, եւ ահա՛ այդ թւականէն սկսած է սարսափի օր մը դառնալ գործարանատէրերու համար Մալխ Մէկը: Սարսափելի է այն պատճառաւ, որ օրական ուք ժամայ աշխատանքի պահանջը ձեռնտու չէ իրենց եւ տարւէ տարի այդ պահանջը սպառնական կը դառնայ բանւոր դասակարգի գիտակցութիւնով, վերադարձնուով:

Աշխատուոր մասնայի բողոքի այդ լուս ցոյցերը մէկ-մէկ պլաքներ են որ կ'ուղղուին շահագործող դասակարգի կուրծքին, իւրաքանչիւր Մալխ Մէկ անոր գոյութեան հիմնաքարին ուժգին հար-ւած մ'է որ կ'իջեցնէ անողոք, անխնայ փշրելու, խորտակելու սըր-բազան ուխտով համակուած: Այս՛, լուս են աշտուրեան բողոքի այս թափոտները, սակաչն գիտակից բանւորութիւնը երկունքի այս ժու-մանակաւոր լուսութեան բովին մէջ, իր վրկութեան, ազատագրման ստեղծագործութիւնը կը նշմարէ շատ լստակօրէն եւ, անկասկած, այս, պատմական արիւնաներկ օրու ժամանակամիջոցին սալին ի-ջեցուցած անոր իւրաքանչիւր հարւածը անտեսական եւ քաղաքա-

կան ազատութեան հիմերը կը զարբնէ:

Ողջո՛ւն այդ ժեսաին:

Մալխ Մէկը՝ Միջազգային բանւորական Համերաշխութեան խորհրդանշանն է, իսկ Միջազգային բանւորական Համերաշխու-թիւնը՝ աշխարհի խաղաղութիւնը երկնող եւ մարդկութիւնը ներկայ գերութեան պրկող շղթաներէն ազատող ուժը. դրամատիրութիւնը աշխարհի խաղաղութիւնը եղծանող եւ գերութեան անուրը կոող ուժն է: Մալխ Մէկը այդ Խաղաղութեան Տօնն է:

Ողջո՛ւն Խաղաղութեան մեծ Տօնին:

Այս՛, արտագրող, ստեղծագործող եւ սակաչն միշտ ընչա-զուրկ բանւորութիւնը աշտուր թէկ կապիտալիստ դասակարգի հիւ-սած ցանցին մէջ կը պրկի անողոք, անխնայ, եւ սակաչն տարւէ տարի նորանոր բնութիւնները կուգան հրահրելու դարերով կու-տակած արգար զայրույթը, որը պիտի ժայթքի մօտ ապագայի մէջ իր ահարկու եւ հրավառ լուսային սակ թաղելու ստրկութեան եւ շա-հագործուածի խարխուղ չնքը, անոր աւերակներուն վրայ հաստա-տելու ազատութեան այն ձողը, որուն վրայ պիտի ծածանի համա-մարդկային սրբազան գրօշը որմէ կը դողայ, կը սարսափի կապի-տալիստ դասակարգը, — այն նւիրական գրօշը՝ որու ծալքերուն տակ համաշխարհային ընչազուրկ բանւորութիւնը համախմբուած իր աղա-տագրութեան, կեանքի վերածնութեան Մեծ Առաւօտը պիտի ող-ջունէ:

Ողջո՛ւն Մեծ Առաւօտին:

Ողջո՛ւն այդ սրբազան Դրօշին:

Անկցի՛ կապիտալիզմը:

Կեցցէ՛ Միջազգային բանւորութեան մեծ Տօնը, — ՄԱՅԻՍ

Մէկը:

ԵՂԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

### ՄՏԱԾՈՒՄԻ ՇԻԹԵՐ

Երբոր մէկը պարսաւելու խնդիր մը ըլլայ, ամենէն աւելի ա-պուսենք՝ իմաստուն կը դառնան:

ԻՄԱՍՏԱՍԷՐ ՄԸ

Դանդաղ եղիք որոշմանդ մէջ, բայց արագ որոշելէ՛ք վերջը:

ԿԷՕԹԷ

Ուէ մէկը կրնայ սխալ գործել, բայց միայն յիմարը կը շարունա-կէ անոր մէջ:



# ԾԱՌԱՆԵՐԸ ՏԵՐ



Կառուցե՛ք, ըսին գործաւորներուն,  
ձոխ եկեղեցի մ'ուր պաշտեմք գԱստուած  
Կտրուկ մերժեցին սեւ մարդիկն անտուն  
Եւ հարուստն առանց Աստուծոյ մնաց:

Դարբնեցե՛ք, ըսին գործաւորներուն,  
Մեր սուրբերն եւ մեր զէնքերը մարտի.  
Կտրուկ մերժեցին Եւ մարդիկն անտուն  
Եւ հայրենիքն ա՛լ բառ մ'եղաւ սնոտի:

Շինեցե՛ք, ըսին, մեծ դուռներ ամուր  
Եօթն անգամ դարձող փականքներ հարապ  
Մերժեցին այն սեւ մարդիկն, անսարաւո  
Եւ դրամն եղաւ ա՛լ անխմաստ բառ:

Ձուլեցե՛ք, ըսին գործաւորներուն,  
Մեր կուրծքին համար բիւր շփանշան,  
Կտրուկ մերժեցին սեւ մարդիկն անտուն  
Եւ Արեւն ու խիղն մէկտեղ ժպտեցան:

Կազմեցե՛ք, ըսին գործաւորներուն,  
Ահեղ ծովառիւծ՝ մարտանաւեր լաւ.  
Կտրուկ մերժեցին սեւ մարդիկն անտուն  
Եւ մօր աչաց մէջ ծովն ա՛լ չ'լացաւ...:

Շարեցե՛ք, ըսին գործաւորներուն,  
Գլխահատ պողպատ, հանգոյց, տանջարան.  
Կտրուկ մերժեցին սեւ մարդիկն անտուն  
Եւ ռիթմերն ալ խիղնէն խաչուեցան...:

\* \* \*

Եւ եկեղեցի, զէնքեր ու փականք,  
Ջրահապատ նաւեր եւ շփանշան,  
Ինչպէս քաղաքեան գործիքներ դաժան  
Անցան իբրեւ հին աշխարհին մէկ վանկ:

Ա՛լ չունեցան նոր մ'իրենց ետեւէն,  
Եւ մզլոտ, զազիր, անգործ ու դժգոյն,  
Ինկան լուրջեան անդունդն իմաստուն,  
Իրենք որ լռե՛լ միայն տուած են:

Եւ գործաւորներն այն սեւ եղկելի,  
Խլած առարկաներն իրենց գերութեան  
Իրենց տէրերուն տէրերն ալ եղան,  
Սուրբ Աշխատութեան ազատ խիղնով լի:

ԵՂՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ



Խ. ԿԱՋԻԿԵԱՆ. — Ծնած է 1884  
Սեպտեմբերին, հարբերդի Յացե-  
լու գիւղը, 1897ին իր ծնողքին հետ  
կը գաղթէ Հիւսէյնիկ: Նախնա-  
կան կրթութիւնը ստացած անտ.  
ագգային վարժարանին մէջ: Քիչ  
վերջ կը դրկուի հարբերդ (Քա-  
ղաք) բողոքականաց վարժարանը՝  
ուր իր աստիճանական ուսումը  
կատարելագործելով կը մտնէ Եփ-  
րատ Գօլէն: 1909 թիւ ուսումնա-  
ւարտ կ'ընդգրկէ ուսուցչական  
ասպարէզը: Պաշտօնավարած  
հարբերդ, Բալու և Քղի: Աւելի  
բարձր կրթութիւն ստանալու հա-  
մար՝ 1913ին գաղթած է Ամերիկա:

Խ. ԿԱՋԻԿԵԱՆ



# ԱԶԳԵՐՆ ՈՒ ԱՆՈՆՑ ՅԻՄ ՆԱԲԱՐԵՐԸ

Տիեզերքի մէջ ամեն դէպք եւ երեւոյթ իր հիմք ունենալու է, չկայ խօսք մը, շարժում մը կամ կեանք մը, որ չունենայ իր լեռնակէտն ու հիմք: Ծարժող հովերը, փշող քամիները եւ ծփացող ալիքներն իսկ ունին իրենց հիմք եւ սկզբնապատճառը: Լեռան կուրծքէն արմատը եւ գեանին վրայ հոգարտորէն կանդնող շէնքն իր հիմք, հիմնաքարերը ունի: Տարիներու եւ դարերու ցաւերուն ու աստապանքին զիմազբաւող եւ կեանքի ժամանակաւոր ուրախութիւններն ու ժպիտները վաչկող ազգերն ալ իբր շէնք մը — զիտակից եւ դարգացման ընդունակ — ունին իրենց հիմնաքարերը, աստնք փայտեր, հողեր կամ իրական քարեր չեն, այլ մարդերն են — մանուկներն են — Ազգերը որչափ որ ասողջ հիմ ունենան, աչնչափ ասողջ դուրս կուզան:

Ծուռ եւ խախուռ հիման վրայ շինուած շէնքը չի կրնար ուղիղ կ'անդնիլ, չի կրնար երկար ապրիլ: Փտտած, քայքայուած եւ վատասողջ արմատներով տունկերը չեն կրնար պաշտպիլ, տօկալ իրենց արմատներուն կենսունակութենէն: Անհատներու եւ ազգերու գործերն ու կեանքը հաստատուած է մասնաւոր հիմունքներու վրայ: Տիեզերքի մէջ նոյն լեզուն, բարբը, սովորութիւնները, կրօնը, զբոսականութիւնը եւ նոյն նկարագիրը ունեցող ու նոյն իշխանութեան թեւին տակ ապրող, եւ միեւնոյն երկրին օդովը, ջրովն ու հացովը սնանող անհատներու հաւաքական ուժերէն զոչացող — ազգ — կոչուած հսկայ շէնքը հիմնարկուած է իր ցեղին եւ սոցձին անհատներու՝ եւ մանաւանդ մանուկ — անհատներու ֆիզիքական, մտաւոր եւ բարոյական ուժերու ու անոնց հոգեբանական խոտնուածներուն վրայ: Ազգերու հիմնաքարերը անոնց մանուկներն են — այս օրուան կանչուած են: Ազգի մը հիմք հոն, ասունքու անկիւնը գրուած անըրշան օրրաններն են: Մանուկներու նկարագրերը ազգերու նկարագրին հիմքն են այնպէս որ անոնց մտաւոր եւ բարոյական թափը, որակն ու քանակը ազգերու մտաւոր ու բարոյական կեանքին չափանիշներն են, ըսէ ինձի ազգի մը մանուկներուն ֆիզիքական կարողութիւնը, հասակն ու անոր գեղեցկութիւնը, ըսէ ազգի մը մանուկներուն մտալին ոյժն ու կորովը, մկանախան ճարտիկութիւնը,

ձեռներէցութեան ոյժն, ըսէ նաեւ ազգի մը մանուկներուն բնազդներուն աստիճանական զարգացումը, փափաքը, անոնց զգացումները, եւ ես քեզի պիտի ըսեմ այն ազգին ֆիզիքականը, անոր մտաւոր կարողութիւնը, ձեռներէցութեան ոյժն եւ անոր փափաքը, ունակութիւնները, գործը, կեանքը եւ նկարագիրը: Մանուկութիւնը մարդկութեան նախադուր նկատուած է, մանուկութեան շրջանը ազգերու եւ մարդկութեան նախապատրաստութեան շրջանն է, մատաղ սերունդին քալած շաւիղը այն շաւիղն է, որմէ ամեն անհատ ստիպուած է ընթանալ, երիտասարդը, շափահասը, ծերը, աղքատը, հարուստը, տկարը, զօրաւորը հպատակը եւ թաղաւորը անցած են այս նախադանէն եւ պիտի անցնին:

Ազգերու ազգայն աչնչափ պայծառ եւ խոտմնալից կ'ըլլայ, որչափ որ պայծառ եւ լուսալից մանուկութեան շրջան մը բուրբեն աննը, ազգապալի ասողջ դատողը լաւ զգացող, արամաբանող եւ երգական ազգ մը ունենալու համար, պէտք է ներկայիս ասողջ կազմով եւ ողջ ուղեղով, ջտակ զգացումներով տողորուած մանուկներ ունենալ: Գեղեցիկ եւ փառաւոր շէնքեր կառուցանելու համար, պէտք է չարմար եւ փառաւոր, տաշուած, լցկուած եւ ձեւաւորուած քարեր ու աստղձներ ունենալ: Ազգ մը կ'իժէ կ'ուզէ որ ազգերուն էն փառաւորը, շրջը, տօկունը եւ նախանձելին ըլլայ, պէտք է ամենէն լաւ աստղձները, (մանուկները) ամենէն փառաւոր, տօկուն եւ հաստատուն հիմնաքարերը ունենայ: Յղկէ, փայլեցուր, ձեւաւորէ, տաշէ եւ կռիւ՝ մանուկները ու ահաւասիկ պիտի ունենաս լցկուած եւ կսկուած ազգը:

Այսօր զիտնականներ, մանկավարժներ, հոգեբաններ ու փիլիսոփաներ իրաւունք ունին, եբբ մտնալով երկիւնքը, աստղերը, երկիրը, հանքերը եւ նոյն իսկ թագն ու փառքը եւ գարձած են զէպի մանուկը, կեղբոնացուցած են իրենց բոլոր ուշը մատաղ սերունդին մտքին, ու սրտին վրայ: Ինչու որ, անոնք հոն տեսած են փայտան քաղաքակրթութիւնը, զարգացումը, մշակույթը, եւ հոն նշմարած են ազգապալի նկարագրերը — մարդը — աիեղբրը:

Կար ատեն մը, որ փիլիսոփայութիւնը երկիւնքի կապուտին մէջ կը միքձուէր, կար ատեն մը, որ իմաստասիրութիւնը գետնին եւ ջուրերուն վրայ կը թափատէր: Մակաչն այսօր 'մաստասէրներ թողելով երկիւնքը, գետնը եւ ջուրը սեւեռած են իրենց սուր եւ խաւարալու աչքերը գէպի մանուկը, անոնք իրենց ամբողջ եռանդովն ու ուժովը, եւ կորովովը կը գնեն մանկան միտքը, ուղեղը, սիրտն ու զգացումները, դուրս կը հանեն հոն անթեկուած լաւ ու գէշ փափաքները, զգացումները, խորհուրդները եւ ունակութիւն-



ները, տեսներու, զտտելու եւ թափ տալու լաւ ունակութեանց եւ բնազդներուն, իսկ ջնջելու եւ մարելու դէշ զգացումներն ու բնազդները:

Հոգերաններ, մանկավարժներ եւ մանկավարժուհիներ ինկած մանկապարտէզ կոչուած բուրաստաններու մէջ, կ'ուզեն կրտսերել, անհետացնել եւ մեռցնել մանկան մէջ ծնող վատաստեալ եւ աշխատեալ խորհուրդները, տխրած զգացումները, ինչպէս պարտիզպանը մկրատը առած պարտէզին մէջ կը կտրատէ այն ճիւղերը, որոնք հիւանդոտ եւ տկարակազմ են, միւս առողջ եւ կայտառ ճիւղերուն աւելի ուժ տալու եւ աւելի արագ աճելու աստարտէզը բանալու համար: Առողջ տեսութիւններ, մաքուր խառնուածք եւ իրական ու լատակ նկարագիր ունենալու համար, պէտք է չի ինչպէլ, պէտք է կտրել վատ տեսութիւնները, անմաքուր խառնուածքները, եւ աղտոտ նկարագիրը: Մանուկները խիստ նշանակալից են այս տեսակէտով, անոնց այս ու այն ձեւ դործածուած մտիկ ապագայի մէջ իր որոշ հետեւանքը կ'ունենայ: Պէտք է անոնք շրջապատելու թեման ու գուրգուրանքի առարկայ ըլլան, մայրերուն, հայրերուն, ուսուցիչներուն, գրքերուն եւ մամուլներուն կողմէ: Հայ ժողովուրդ, որոշ ըմբռնելու ենք այս կէտը, մեր ազգը մեծ եւ խոստանալից ճակատագրի մը կոչուած է, այդ ճակատագրին հասնելու համար ներքին ուժի, կորովի եւ կենսունակութեան պէտքը կ'զգանք, այդ ուժին, կորովին եւ կենսունակութեանը տիրանալու համար, մենք պէտք է նկարագրի ընտիր լատկութիւններով դուրս գանք, մեր թերութիւնները իրենց նուազագոյն աստիճանին իջեցնենք ու միանգամընդմիջալ ջնջենք գանոնք, մեր վատ ունակութեանց աւերակներուն վրայ պէտք է լաւ ունակութեան պալատներ կառուցանել: Պէտք է մեր մատաղ սերունդը օժտել լաւ կողմերով ու գորացնել անոնց մէջ չարգանքի, գոհողութեան, խոհեմութեան եւ պատկառանքի զգացումները: Պէտք է ցանկ առնոց մէջ իրական եւ անկեղծ հայրենասիրութեան ու ազգասիրութեան գաղափարի սերմերը: Վաղուան աղտոտ եւ ինքնափար Հայաստանի կուրծքին վրայ տիպար, համերաշխ, գործունեաց եւ դէպի հանգստութիւն, դէպի ազգային իտէալն ու գաղափարական բարձրացնող ազգային հուժկու եւ անխորտակելի շէնքը կառուցանելու համար այսօրու ընդ այդ շէնքին հիմնաքարեր պատրաստելու է: Հայ տուներ, բեմը եւ գրիչը պարտաւոր են կռիւ ու կռիւի այս հիմնաքարերը: Հայ մանուկներն պէտք է Հայ ազգին կուրծքին գոհարները ըլլան, անոնք Հայաստանի մաքուր հորիզոնին վրայ փալտող լուսատու աստղերը ըլլալու են, ազատ, քաղաքակրթուած եւ գիտակից ազգ մը ըլլալու համար, պէտքը ունինք աշատարաղծ գա-

ղափարներով անաւուած Հայ մանուկներու: Մենք պէտք է կրթական արդիւնաւոր գործունէութիւն ցուցնենք, մեր մանուկներուն մէջ գորացնենք հանրային չարարութեանց եւ պարտականութեանց գաղափարները, մեր դպրոցները պէտք է մեր մանուկներուն ներքին լաւ ընդունակութիւնները իրենց մանկավարժական արդի մեթոտներովը կարողութեան եւ արդիւնքի վերածեն:

Նոր Հայաստանին հետ Հայ Նոր Սերունդը պէտք է ծնի, այդ Նոր Սերունդը Հայ մանուկը պիտի ըլլայ, ունենանք մանուկներ, կրթենք ու մեծցնենք գանոնք, տաշենք եւ լղկենք մեր բազմաշարժար ազգին հիմնաքարերը:

Դո՛ւք, ո՛վ Հայ մանուկներ, ծնած էք իբր Հայ, իրաւունք ունիք ապրելու իբր Հայ, գործելու եւ մեռնելու իբր Հայ: Ծնելէ չետոյ եւ մեռնելէ առաջ գիտցէք թէ դուք էք Ազգին հիմնաքարերը, դո՛ւք, ով Հայ ծնողներ, ուսուցիչներ, քահանաներ եւ Հայ գործիչներ գիտցէք թէ շատ մեծ է Ձեր կոչումը, շատ ծանր է Ձեր գործը, դո՛ւք պիտի դաէք եւ կազմապարէք Հայ Ազգին սիւները: Ամեն մէկ ծնողը եւ ազգային կեանքովը զբաղող ու ազգին ճակատագիրը վարող անհատ լուրջ մտածելու է, լաւ դատելու է, պատասխանատու դործ մըն է իրենց լանձնուածը, ամուր եւ շիտակ կաղապարելու է մեր ազգին հիմնաքարերը — մանուկները: Ինչպէս պարելու է մեր ազգին հիմնաքարերը — մանուկները: Ինչպէս ուրիշ ազգերու, անանկ ալ Հայ ազգին ապագան Հայ մանուկն է, տիպար ազգի մը ապագան տիպար մանուկներով կ'ապահովուի, տուէք ինծի դուս եւ տիպար Նոր Սերունդ մը եւ ես Ձեզի պիտի տուէք ինծի դուս եւ տիպար ազգ մը, տուէք ինծի ձեւաւորուած եւ գիտամ առողջ ու տիպար ազգ մը, տուէք ինծի ձեւաւորուած եւ գիտամ ազգուն հիմնաքարերը եւ ես Ձեզի պիտի տամ հաստատ ու տոկուն ազգային կազմը-չէնքը: Եթէ կ'ուզէք ունենալ քաղաքակիրթ, կրթութուած, զարգացած եւ լատաջացող ազգ մը, հարկ է պատրաստել նոյն բարեմասնութիւններով լատաջացած մանուկներ:

Հայուն ապագան Հայ մանուկն է, Հայ Նոր Սերունդն է, ինչպէլ, դատախարակել եւ մեծցնել պէտք է այս սերունդը: Լաւ ընտրելու է անոնց միջավայրը, մաքի եւ սրտի պաշարը, անոնք հեռի, շատ հեռի պահելու է, դձուճ եւ ստորին զգացումներէ, գաղափարներէ, անոնք մօտեցնելու չէ զեզիս ու մեղկ կեանքերու, այլ խոհեմ եւ լուրջ կեանքին ծանօթացնելով վարժեցնելու է շարքաշտութեան եւ անձնութիւնութեան, անոնց առջեւ պատկերացնելու է, քարիին, գեղեցիկին եւ արդարութեան գաղափարականը: Անոնց սրբտին եւ ուղեղին մէջ լեցնելու է ազգասիրութեան մաքուր հունտերը: Անոնց կուրծքին վրայ անկելու է եզրալստիութեան, արժանաւորը եւ մեծը պատուելու եւ հայրենասիրութեան անբիծ ու անարտաբուրը: Բարձր ազգ մը երաշխաւորելու համար բարձր սերունդ մը







## ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ԱՐՏԱՆՇԷՍ

Ոյոր մոյոր կուրն է գալիս կովկաս սարերէն,  
Մի անըման ձայն էր տալիս էն միւս ափերէն:  
— Փախէ՛ք, աստղեր, արեւ ծագեց կովկաս սարերէն,  
Սարեհիկն եմ, սիրուն եմ ես երկնից յունեակէն:

Հայո՛ց քաջեր, քաջ դրէ՛ք զէնքեր շուտ ձեր ձեռներէն,  
Սարեհիկն եմ, կ'յաղբուիք իմ սրոյ սրէն:  
Քե՛զ եմ ասում, քաջ Արտաշէս, դո՛ւրս եկ վըրանէն,  
Սարեհիկն եմ, կ'յաղբուիս իմ սեւ սեւ աչքերէն:

Տա՛ք տա՛ք արիւն գուր մի՛ քափեր անմեղ սրտերէն,  
Սարեհիկն եմ կ'յաղբուիս իմ կարմիր քրտերէն:  
Մի՛ պարծենար քո գորքերի պէս պէս գունդերէն,  
Սարեհիկն եմ, կ'յաղբուիս իմ սիրուն ունեքերէն:

Մի՛ խըրոյտար քո յաղթական սէզ սէզ քայլերէն,  
Սարեհիկն եմ, կ'յաղբուիս դու իմ փունջ փունջ մագերէն:  
Բա՛ց շուտ շղթայն գերի բռնած եղբորս ոտերէն,  
Սարեհիկն եմ, կ'յաղբուիս դու իմ բլրուլ լեզուէն:

Քէն մի՛ պահեր, վրէժ մի՛ ուզեր իմ Ալաններէն,  
Բարձր է կովկաս, քաջ են Ալանք Մասեաց քաջերէն:  
Ձայն եմ տալիս, ձայն տուր ձայնիս քո խոր բանակէն,  
Գուրս եկ մէյտան, քէ չես վախում սիրոյս նետերէն:

— Ալա՛ն, Ալա՛ն, յաղբուիւնս առիք իմ ձեռքէն,  
Ո՞նց դիմանամ, հալվում է իմ սուրս քո կրակէն:  
Ալա՛ն, Ալա՛ն, փառք ու պատկառիք իմ գլխէն,  
Ո՞նց դիմանամ, սիրուն ես դու մեր սիրուններէն:

Ա՛յ դու անգուր, այրվում է սիրտս քո ծարաւէն,  
Ո՞նց դիմանամ, չեմ հովանում կուրի ջրերէն:  
Տո՛ւր ինձ քեներ, քո մօտ բռնիմ կուրի վըրայէն,  
Մի՛ բիթեռնիկ դարձայ ես քո նըրագի յուսէն:

Հագար կըտամ, տասն հագար իմ անքիւ գանձերէն,  
Քե՛զ ինձ կ'առնեմ հարս-բազուկի քաջ Ալաններէն:  
Ոսկւոյ անձրեւ շաղ կըտամ քո գլխի վըրայէն,  
Ո՞ր կը գնայ մարգարտէ քո ոտի տակերէն:

Կ'բափեմ կուրը յայնա ոսկի կարմիր մորթերէն,  
Ծածկուի գետը ընծայարեր բարձած ուղտերէն:  
Ասաց, հեծաւ արի արքայն սեւն իւր ձիերէն,  
Արծւի նման ննեց, անցաւ կուր գետի մէջէն:

Հասաւ, հանեց իւր կարմիր քոկոզն ոսկեղէն,  
Ջգեց, ընկաւ Սարեհիկի մէջքի մէջտեղէն:  
Թո՛ւր, փախի՛ր, իմ գեղեցիկ սեւ ձիս հըրեղէն,  
Մէջքիդ մարալն որս եմ բռնել կովկաս Սարերէն:  
Թո՛ւր, փախի՛ր, մեծն է սա իմ բոյոր որսերէն,  
Թեւիդ վըրի կոյսն եմ խել քաջ Ալաններէն:—

ՍԱՄՈՒԷԼ ԳՒՌԷԱՏԵԱՆ

Կոնակ

Գիրքը՝ միշտ կենդանի ձայն մ'է, իմաստուն մը՝ որուն անդա-  
դար մտիկ կ'ընենք, այնպէս որ անցեալ մեծամեծ մարդկանց իշխա-  
նութեան տակ եմք միշտ:

Անպէտ մարդիկ կը նախանձին իրարու, քայց հումարտապէս մեծ  
մարդիկ կը փնտռեն զիրար և կը սիրեն:



Յ. ԲԱՐԵՉԱՆԵԱՆ



Յ. ԲԱՐԵՉԱՆԵԱՆ.— Ծնած  
1874 ին հարբերդ Մէրքէի մէջ, 1892  
Քաղաքի կեդրոնական վարժարանէն  
ըջանաւարտ եղած եւ քանի տարի  
ուսուցչութիւն ընելէ յետոյ Ամերի-  
կա փոխադրուած:





# ՅԱՆՁԱԽՈՐԸ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Անցեալները Պէջըր՝ Նիւ Եորքի ստտիկանապետը կատարնա-  
տի ելեքորական աթոռին վրայ նստեցուցին եւ անոր կեանքի թեւը  
կտրեցին: Ներկայ ընկերութիւնը չանուն «օրէնքի» իր խզճի պարտքը  
կատարած հոշակեց իր չանցադորձ մէկ անդամին ոչնչացումովը,  
որովհետեւ անիկա փոխանակ հանրային խաղաղութեան հոկելու  
անբարոյական որջերու եւ խաղարաններու մէջ շահակից եղած էր  
անտեսական չաջողութիւն, դբամ ստանալու համար: Օր մը կախով  
կը բաժնուէր իր շահակիցէն՝ Ռեզիմոնտէն, ե որպէսզի արդարու-  
թեան ձեռքը շինուայ զաղանաբար զաչն սպաննել տուած էր:

Երկու տարի առաջ Քէյմպրիճը մէջ Մկրտչական երկց մը՝  
Ռիչարըն՝ նոյնպէս կախազանի ելեքորական հոսանքին տակ, ներկայ  
ընկերութեան «արդարութեան» վճռով իր վերջին հրաժեշտը կուտար  
աչս աշխարհին, որովհետեւ պատուած օբիորդի մը միլիոններու  
վալելը ունենալու համար, իր նախկին գեղանի նշանածէն աղատել  
փորձած էր, ափ մը թոյնով անոր կանաչ արեւը խախտելով:

Մօրս՝ դրամատան մը նախադաշն, խեղճ ժողովրդին արեան  
եւ քրտինքին կաթիլները մարտելու համար երբ կը փախչէր, «ար-  
դարութեան ձեռքը» կը բռնէ անոր օձիքէն եւ կը նետէ չանցադորձ-  
ներու վայրը՝ բանա:

Շատ հետո չէ, երբ Անգլիոյ մէջ բարձ աղան դատաւ անի մը  
դատաւորը անբարոյական նկուզի մը մէջ խզղուած գանուեցաւ:  
Անթիւ, անհամար են ներկայ ընկերութեան ծոցին մէջ վխտացող  
ոճրաչորձները, զեղծաբարները, զողերը եւ մարդասպանները: Ամեն  
օր մամուլը եւ զրականութիւնը՝ բնկերութեան աչս ախատախարակ  
կեանքի պատկերները կը նկարեն բազմաթիւ եւ բազմազան օբիտակ-  
ներով, առանց դասակարգի, աղչի, կրօնի եւ սեռի խտրութեան,  
ընկերութեան բոլոր խաւերն ալ իրենց հաշիւը կուտան աչգ անկեալ-  
ներու բանակին: Անգարձութեան մէջ գողութեան եւ սպաննութեան  
փորձուող բանուորը չէ միայն, ափ մը ամուռն գողցող որբը չէ, եւ  
ո՛չ ալ գաւաթ մը կաթ իր անտուաղ մեռնող գաւկին հայթայթելու  
համար անբարոյութեան գիմեղ աչրին:

Բարձրագոյն խաւերէն մինչև ստորոտները աչլասեռուծի աչս  
աստիճանները կարելի է համրել որոշակի, քաղաքական ընկերական  
չբջանակներու, ինչպէս նաեւ կրօնական, կրթական հաստատու-  
թիւններու մէջ, ընկերական շարիքները իրենց առատ սնունդը կրս-

տանան անարդել:

Սակաչն ինչո՞ւ աչսպէս, որչափ քաղաքականութիւնը կը  
լայննայ եւ կը խորանայ, մարդիկ աւելի կը վատթարանա՞ն, աւելի  
սնանկութեան վիճը՞ կը գլորին: Անհատները երեւոյթնե՞ր են թէ՞  
պատճառ, ո՞ւր պէտք է փնտուել շարիքին արմատները, անհատին  
թէ՞ ընկերութեան մէջ, ո՞վ է իսկական չանցադորձը, անհատը՞ թէ՞  
ընկերական կարգ ու սարքը:

Ֆրանսական չեղափոխութեան ամենէն կարկառուն գէմբըրէն  
մին Մառա՝ չեղափոխութենէն առաջ, իբրեւ փաստարան պաշա-  
պանութիւնը կ'ստանձնէ մարդու մը, որ անօթութեան պատճառաւ  
զողութեան փորձութեան ենթարկուած էր:

— «Տէր դատաւորս» ըսաւ, «եթէ ընկերութիւնը իրատուք  
կը սեպէ դատապարտել մարդ մը, ուրեմն պարտաւոր է երոյշխա-  
ւորել անոր մարդկային դոյութիւնը: Ինքը, որ զաչն կը կ-չիանդէ  
եւ կը ձգէ թշուառութեան մէջ, ինքը պատասխանատու է անոր ս-  
րարքին»:

— «Քաղաքացի Մառա՝» ընդմիջեց դատաւորը բարկու-  
թեամբ, «զուք կը փորձէք գողութիւնը եւ ոճիրը արդարացնել»:

— «Ես ոչինչ կ'արդարացնեմ, աչ կը հաստատեմ թէ ձեք  
աչս անարդար ընկերութիւնը ոճիր մը դատապարտելու սեւէ հիմ-  
նական սկզբունք չունի, երբ ընկերութիւնը ի նպատակ բռն իսկ իր  
նախնայ իշխանութիւն կ'ստանայ կարգը հաստատելու, պարտա-  
դոյութեան իշխանութիւն պահանջները գոհացնել: Թույլ տուէ՛ք, չա-  
ւոր է իր անդամներուն պահանջները թէ մեղաւոր եմ, չեմ գիտեր, բաց սս  
նուն պաշտպանեալիս ըսելու թէ մեղաւոր եմ, չեմ գիտեր, բաց սս  
գիտեմ որ ես ըրած եմ, ինչ որ, պէտք էր ընէի, ինքնապահպանման  
ընազը մարդուն առաջին պարտականութիւնն է, զուք ալ աչգիկեց  
աւելի մեծ պարտականութիւն չէք ճանչնար: Ով որ կը գողնայ սպ-  
աւելի մեծ պարտականութիւն կ'արդիւրի իր աղբիւր իրաւունքը  
ընելու համար, երբ աչլապէս կ'արդիւրի իր բնական իրաւունքը...»

Անհատը՝ ընկերութեան մանրանկարն է անոր ծոցին մէջ,  
որ կ'ստանայ իր բոլոր առաքինութիւններն ու մոլութիւնները, ժա-  
ռանգական շարիքներն ալ ընկերական շարիքին մէկ հեռաւոր արձա-  
գանքն է, որ երեսան կուգայ անհատին վրայ: Երբ ընկերութիւնը  
կրտնայ որձ մէկ անգամին օձիքէն բռնելով կ'ուզէ պատժել, ըն-  
իր չանցադորձ մէկ անգամին օձիքէն բռնելով կ'ուզէ պատժել, ըն-  
կերութեան բարեխառութեան համար ներքին աղբիւրը, պատճառը  
անտեսած արդիւնքով է որ կ'ըբաղի, վէրքը արտաքին սպեղանիով  
զարմանել մ'է:

Ոճանք կը կարծեն թէ մարդիկ ի բնէ չար կամ բարի կրնան  
ըլլալ, հետեւաբար ընկերական շարիքը բնական է եւ մարդկային



ընկերութեան հետ պիտի ապրի անշարիր եւ անբաժան:

Տիեզերքին մէջ բարի եւ չար բան չի կայ, չառաջ կամ ետ կայ միայն, կեանքը միշտ չառաջ կը ձգտի, դէպի բարեշրջում, դէպի ազնուացում, եթէ արգելք մը զայն չի ջանայ կասեցնել, ետ մղել ժամանակաւորապէս: Այն որ դէպի չառաջ կը մղուի, օգտակար է ճշմարիտ եւ հետեւորար բարի, այն որ ետ կը նայի, ետ կը գտնուի անտեսական եւ ընկերական արգելքին, դեանաքարչ եւ սպաննիչ պաշտաններու, հազար ու մէկ հակարնական փիճակներու մարդկային կեանքը միշտ ձգտած է դէպի վեր, դէպի բարեշրջում եւ բարձրաբան մտաւոր թէ հոգեկան բոլոր ախտեր եւ մոլութիւններ կը գտուին եւ կը մաքրուին, եթէ նորանոր խոչընդոտներ երեւան չի նալից մթնոլորտը բնական կեանքի արդիւնք չեն, այլ ընկերական, տնտեսական վատթար դրութեան մը: Այն բոլոր շարիքները եւ ուղիակ գիտութեան եւ քաղաքակրթութեան արդիւնքներուն իրենց արժանաբար կ'աճեցնեն տնտեսական այն պայմաններու տակ, որ աւիճումի հոգին վրայ իրենց գոյութիւնը չաւերժացնել:

Տօբաս Թրօպէլ Ամերիկացի այդ սրամտ, եւ ընկերարան ընկերվարականը կ'ըսէ, «Ես չեմ ուրանար ընկերութեան իրաւունքը, որ զսպէ իր անդամը, որ հակաընկերական է: Աւելի առաջ կ'երթինք, որ մենք իրաւունք ունինք նաեւ զսպել ընկերութիւնը, որ հակաընկերական է: Դուք արդիւնքը կը տեսնէք, ես իրաւունքը չեմ, որ կուտամ, այլ արդիւնքը: Ո՛չ մէկ ընկերական կազմակերպութիւն պատժելու իրաւունք ունի: Ո՛չ մէկ ընկերական իրաւակարգ վրէժխնդիր ըլլալու վստահութիւնը կրնայ վաշելի:»

Ընկերութիւնը որ իր անդամներէն մին կը կախէ, մին կ'աքսորէ միւսը կը բանտարկէ իրենց չանցանքներուն համար բուն իսկ ընկերութեան ցաւերը են, որ կ'արտացոլանան անհասանելի վրայ:

Ընկերութիւնը ո՛չ պատժելու եւ ո՛չ ալ վրէժխնդիր ըլլալու իրաւունքը ունի, ի բնէ որ այդ շարիքներուն կաթը իր ստինքներէն վազցուցած եւ դիեցուցած է զանոնք, եթէ պատժել պէտք է, նոյն ինքն ընկերութեան վզին կ'իջնայ չանցանքին երկաթէ անուրը, իրաւակարգը պէտք է կործանել, որ ինքն է ծնողը եւ վազրի պէս կը լափէ իր գաւակները:

Ընկերութեան չանցադործները ընկերութեան գոհերն են, անոնք ո՛չ թէ պատժել եւ վրէժխնդիր ըլլալ, այլ հոգալ, խնամել, ինչպէս տկարները եւ հիւանդները խնամել ընկերական սարտականութիւն է: Գողերը, ոճրագործները պէտք է զսպել, պէտք է դարձանել որպէս ընկերական խելագարներ, մտաւոր հիւանդներ եւ աչսպէս անվնաս դարձնել տալով անոնց լաւագոյն պայմանները:

Ընկերութիւնը բարձրացնելու, ընկերական կազմը ազնուացնելու, եւ անոր անհատ-անդամը իր կոչումին եւ բարձրութեան հասցնելու համար անհրաժեշտ է ընկերութիւնը վերակազմել անոր ախտաժէտ եւ փտտած մարմինը հիմնովին բուժել: Անհրաժեշտ է, որ անհատը ընկերութեան մէջ ազատ եւ անկաշկանդ ըլլալ, իր ապրելու, իր ինքնապաշտպանման բնական, տարրական իրաւունքը չի կոխտուի, պատեհութեանց դոները բաց ըլլալու են, կրթութեան եւ զարգացման հորիզոնները անսահմանափակ:


Անհատը ազատ ըլլալու է իր սարտքը ընկերութեան մատուցանելու եւ ընկերութեան իր բաժինը ստանալու: Մէկ խօսքով, իր աշխատանքի եւ գործունէութեան վրայ գրուած շահագործման եւ սարկութեան կապանքները պէտք է քանդուին, եւ իր կատարելաւ եւ սարկութեան կապանքները պէտք է քանդուին: Այն ատեն է որ ո՛չ անհատը մեղի բաւուրներն տէրը հանդիսանայ: Այն ատեն է որ ո՛չ անհատը մեղի գոհերը պատժելու կարիք պիտի ունենայ, ոչ ընկերութիւնը պիտի աչսպետի եւ ո՛չ ալ անհատներ ընկերութեան մարմնոյն վրայ վէրքեր եւ տղրուկներ պիտի ըլլան:

Քաղաքական ազատ մարդը՝ ընկերական ՏՆՏԵՍԱԿԱՆ, ազատ մարդ պէտք է դարձնել եւ աչսպելին ընկերութիւն մը միայն կրնայ մարմնանալ ընկերական իրաւակարգի մը տակ:

ՅԱԿՈՒ ԲԱՐԵՋԱՆԵԱՆ







ՍՍ.ՂՄՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ



ՏԲՓ. Ա. ՏԵՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ

կուրսեան: Yale համալսարանի բժշկական ֆիլաժեֆիակի Jefferson Medical Collegeին մէջ, ուրկէ իր քրջանը կուարտէ 1901ին, մեծ ու գնահատելի յաջողութիւններով: Նոյն տարին հաստատուած է Փրովետէնսի մէջ:

Կարն ժամանակէն կսկսի մեծ յաջողութիւն գտնել և հսկայ ժողովրդականութիւն վաստկել շնորհիւ բժշկական նուրբ արուեստին մէջ ունեցած իր հմտութեան և իր առատաձեռն, գոնող և ժողովրդանուէր յատկութիւններուն:

Այս բուականէն է որ ՏԲՓ. Ա. ՏԵՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ կսկսի իր հանրային կեանքը: Անկիս հայ քաղաքական ու ընկերային կեանքի բոլոր շարժումներուն մէջ քէ նկատուած է: Յեղափոխական և ազգային գանգաւ արեւմտեան համար ծայրահեղ գոնողութիւններ բնիկ վերջ, անկիս ներքապէս օգնած է շատ մը հայ ուսանողներու ալ, որովհետեւ անկիս հասկցած էր ուսանողական կեանքի ստժանկները, ամբողջ չորս տարի իր ուսերուն վրայ կրելով քէ իր եւ քէ երկրի իր բոյրերուն ուսանողութեան ծայրերուն ծանր բեռը: Ասանցմէ գառ նաև անկիս ճիւղ խնամած է ու դեռ կը խնամէ անքիս հայ հիւանդներ որոնք անկարող են վճարելու:

ՏԲՓ. Ա. ՏԵՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ իր հրապարակախօս և հրապարակագիր իր որոշ բաժինը ունեցած է Ամերիկահայ քեմիկ և մամուլին մէջ: Անկիս տարիներէ ի վեր եղած է սիրուած ու յարգուած ատենախօս մը: Անկիս աշխատակցած է նախկին «Չայն Հայրենաց»ին և «Ընկալ»ին կեղծ անուններու տակ, կանոնաւորապէս աշխատակցած է «Պահակ»ին և այժմ նոյն քերթին խմբագիրն է:

ՏԲՓ. ԱՐՇԱԿ ՏԵՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ.—  
Ծնած է Խարբերդի Աղնիկ գիւղը, 1875 Նոյեմբեր 22ին: Իր նախնական կրթութիւնը առած է Իջմէ գիւղի նախակրթարանին մէջ ու ապա Եփրատ Գօլէն յաժախած ու անկից իր ընթացքը աւարտած 1894ին: Եփրատի իր ուսանողական տարիներու ընթացքին նաև ուսուցիչ եղած է Իջմէ գիւղի դպրոցին մէջ:

Մտադրած ըլլալով բժշկութեան հետեւի, Եփրատ աւարտելէն անմիջապէս յետոյ կը մեկնի Պէյրութ Ամերիկեան բժշկական վարժարանը մտնելու: Հազիւ քանի մը ամիս կը մնայ և Թուրք կառավարութեան հետապնդումներէն ըստիպուած կիսատ կը բողբ իր դասընթացքը ու կանցնի արտասահման: 1895 ին Ամերիկա կուգայ և նորէն կսկսի հետեւի իր նախասիրած ֆիզիկն, բժշկութեան:

Ամերիկահայ կեանքի մէջ շատ սովորական դարձած էրեւոյթ մ'է վիժեցուցը, որ տեղի կ'ունենայ կամաւոր կամ ակամայ պատճառներով: Շատ քիչ են այն կիները որ այսօր արժանաւոր մաշերը ըլլան: Շատ քիչ են այն կիները որ սպոր արժանաւոր մաշերը ըլլան: Ոմանք մաշակաւ սարտալալու բարձր կոչումը ստանձնել ուզեն: Ոմանք մաշակաւ նկատելով կանոնախնդրութիւններու ի կատար կանան միջոցներէն զրկուած նկատելով ինքզինքնին կորոչեն տեղ շտալ պղտիկի մը սննդաւորմանը իրենց նախաձեռնող հարեւնիքին մօր արզանդին— մէջ, ու հետեւաբար զայն վարող հակարեակաւ միջոցներու անկարգ ու անմաքուր կերակուցումով մը վերջ կուտան կեանքի մը սկզբնաւորումին, կամաւորապէս: Ամերիկահայ կիներէ ուրիշ շատեր ալ, կեանքը վաչկելու, օրուան ընթացիկ հաճուցներու ըմբոջանումէն ընդմիջա չի զրկուելու համար իրենց խղճուի հողիները, կ'ատեն, ու ի սրտէ կ'ատեն, զուկի մը ընկերակցութիւնը իրենց, որ պիտի դար սահմանաւորելու մօր մը — մանաւանդ ՍՓ.Ա.ՅԼ.ԻՇ մօր մը երթեւեկումը:

Ասանք կը սիրեն, զ'«movie»ները երթալ նստիլ ժամանակ անջընելու համար: Դժուար է անոնց համար տուն մնալ, տան կարգին ու կանոնին հետեւիլ: Ի՞նչ կըսեն, անոնք մաքուր օդի պէտք ունին, պէտք է որ հետեւաբար դէժ քիչ մը ատենի համար դուրս երթան: Ու կերթան անոնք ժամերով թափաւելու տաքին ալ, ցուրտին ալ, առանց վաչրեկան մը խի մտահոգուելու այն պարագաներովն ու տունովը, զորս թողուցին իրենց հետեւ առաւօտուն...:

Եւ անդին տակաւին կը մնայ ուրիշ աչքառու մէկ մասը ամերիկահայ կիներու, որ ընկերակաւ և հասարակական գործերու մէջ մասնակցութիւն բերելու դիտումներու մէջ անհոգի ըլլան: Հակ'արհամարհէ մաշակաւ հողը ու պատասխանատուութիւնը: Հասարակական հարցերով ինքզինքը զբաղեցնել ուղող հայ կիներ սաստաւակաւ հարցերով ինքզինքը զբաղեցնելու համար ֆիզիքական ախտաւոր վիճակ մը՝ որ վաղը իր ախտաւոր հանգամանքովը պիտի մահացնէ զինքը:

Մինչդեռ կին մը որ իր ջանքերը կը նուիրէ զուկի մը ապագայ պարտականութեան համար, շատ աւելի բարձր կը մնայ առողջապէս, հոգեկանապէս, քան այն կինը՝ որ կեանքի հաճուցները ըմբոջանելու ունայն ու զաղափարազուրկ հակումներով՝ «եանքիացում»ի ճամբաւորուն մէջ կը վտանդէ իր ապագայ երջանկութիւնը ու կը խանգարէ:











ծծուին արեան երակներէ եւ աւազին գեղձերէ: Այս միքրոսպերու արեան վրայ բրած ազդեցութիւնը մասնանշող օրինակ ձը բաւ է: Հիւանդ կնոջ մը արեան քննութիւնը սա արդիւնքը տուաւ, Հարլերին 46 (Hemoglobin) — արեան երկաթ պարունակող մասը — եւ 2,900,000 կարմիր գնդիկներ: Քանի մը փտտած ախտալի արմատներ հանուելէ վերջ (Hemoglobin) ի համեմատութիւնը 64 առ հարլեր էր եւ կարմիր գնդիկներու թիւը 4,350,000: Նոյն ատեն ճերմակ գնդիկներու (Leucocytes) թիւը նուազած էր քանի որ կռիւի եւ նորոգումի շատ պէտք չէր մնացած:

Շատ սովորական հիւանդութիւն մըն է Բալարիա (Phyorrhea Alveolaris) որմէ վարակուած են շափահասներու 100ին 90ը նուազ կամ առաւել չափով: Այս հիւանդութեան անմիջական արդիւնքն է թարախի մշտակայ ներկայութիւնը լինտերու եւ ախտալին մէջ տեղ: Խնամքի եւ մաքրութեան զանցատուութենէն կը սկսի լինտերու եզերքէն ու կը վարակէ ախտան պատող հիւսկէնները (peridental membrane) եւ չտաճանալով կը վարակէ ամբողջ (alveolar process)ը: Այս հիւանդութեան եւ թագուն պալարներու (blind abscess) կոտրած արմատներու արտադրած թարախը կ'ազդէն ամբողջ մարմնոյ եւ կենսական գործարաններու գործունէութեանց վրայ: Մասնագէտներ հազիւ կրցած են ասոնց պատճառած ցաւը զանազանել ջլացաութենէ (neuralgia): Ոմանք շուարելով գործողութեան ենթարկած են հիւանդը gassarian ganglion ը անդամատելով: Ասանկ պարագային Ք. ճտտաքայթով առնուած պատկեր մը ամենաչանձնարարելի բայն է որ ատամնարոյժը կրնայ առնել:

Գիտական այս իրողութիւնները աշալուրջ ծնողքին պարտականութիւնը աւելի կը շատցնեն, բայց երբ անոնց արդիւնքը եւ իրենց զաւակներուն բարձրագոյն բարին նկատի առնուի դժուարութիւններ ինքնին կը լուծուին: Բնութեան օգնելով եւ մանկան բընազդները իմաստութեամբ վարելով ծնողաց դործը մեծ մասամբ կը թեթեւնայ: Կարգ մը վատ սովորութիւններ պէտք է մոռցուին: Մանուկը միայն պտուղի հիւթով, կաթ եւ անոր նման հեղուկ սընունդով զիւնցնել նոյնքան պախարակելի է որքան երկրի ծամած կերակուր տալու սովորութիւնը: Ասոնք կ'աբգիլեն ծնոտի եւ գլխուսկորներուն եւ ախտաներու բնականոն աճումին:

Ախտները իրենց պաշտօնը լման կատարելու են, իբր կենսական մէկ մասը մարտոզական գործարանի, եւ միջոց գեղեցկութեան եւ ձաչնի պահպանումին: Մանուկը իր առաջին ախտները լմնցուցած ատեն իսկ նայելու է անոնց առողջութեան: Ասոնք կըսկըսին 6-8 ամսու եւ մէկէն մինչեւ 2 տարեկանին 20 ախտներ կը

լրանան իսկ վեց տարեկանին մնացուն ախտներ կը սկսին երեւիլ: Ժամանակաւոր կամ առաջին ախտներու խնամքը եւ պահպանումը կարեւոր է սա քանի մը պատճառներով: Անոնց ամբողջութիւնը կը նպաստէ ծնոտի եւ գլխու սկորներու աճումին, կ'արգիլեն մնացուն ախտներու ծուռ եւ անկանոն կարգը, եւ կ'օգնեն մարտոզական գործարանին: Անկանոն ախտներու ուրիշ մէկ պատճառն ալ բերանէն չնջելու սովորութիւնն է որը չաճախ մասնաւոր գեղձերու (adenoid) ներկայութենէն չտաճ կուգայ:

Երբ ախտները նկատուին իբր կենդանութիւն ունեցող մասեր որոնք պաշտօն ունին պահպանելու մարդուս կեանքը եւ նպատակ ցեղին առողջութեան, ոչժին եւ գեղեցկութեան, աչն ատեն անոնք իրենց արժանի հոգատարութիւնը պիտի ստանան սեւէ բանիմաց անձէ:

Տըթ. Լ. Պ. ՄՈՒՂԱԼԵԱՆ

Շիֆալօ





# ԱՊԱԳԱՅ ՉԱՅ ՍԵՐՈՒՆԴԸ ԵՒ ՆԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ



Եթէ կալ ներկայ ճշմարտամային օրերու անմիջական պահանջներէն վերջ կենսական խնդիր մը՝ ան ալ մեր նոր Սերունդն է, որով ցաւալիօրէն նոյն իսկ Ամերիկայի մէջ հետաքրքրուողներ հազուադիւրս են: Ազգասիրական ամենամեծ շարժքը այսօր երեսի վրայ թողուած է ու մեր դաղթական երիտասարդները մութի մէջէն խարեւարելով, տարուրերուելով ամեն անսակ շոր ու վնասակար հովերէ կը տարուին աչնպիսի ճամբէ մը, զոր կ'անաջնորդէ ցեղային վա-



ՏԲՔ. ՄԻՆՐԱՆ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

տասերում: Այսօրուան Հայ երիտասարդը տգէտ է առողջապահական նիւթերու շուրջ, ան չի գիտեր հիւանդութեանց ծագումը, չի կրնար գիտնալ ու իր անձը առողջ պահել, քանի կը մնայ այդ տգէտ վիճակին մէջ:

Մեր ազգային, կրթական ու քաղաքական կազմակերպութիւններու ամենամեծ սխալը, եւ որը կրնայ ոճիրը անուանուիլ, եղած է իրենց գործունէութեանց դաշտին անկախ ու բացարձակ միակողմանի ըլլալը: Երկրի հողին ու ջուրին հաւատարիմ մնացող եւ բազդատարար մարուք սերունդը այսօր բնաջնջուածի ենթարկուած է եւ մեր բոլորին փափաքելի ազատագրումէն վերջ՝ այդ միացող ու կործանուած օճախները վերաշինելու, դիւզերը շնցնելու եւ մեզի նոր սերունդը տալու համար մայրենի հողը իր դաղթական զուակներուն պիտի բանայ իր արիւնտ գիրկը եւ այս պարագային ես կը հաւատամ թէ չի պիտի կրնան այսօրուան մեր Հայ երիտասարդներ՝ տալ երկրին ինչ որ կեանքի պաշարին պսակը շահելու համար պէտք է: Առողջութիւն: Այսօրուան դաղթականը իր խնայած մի քանի տոլարէն զատ ոչինչ ունի նոր սերունդին համար: Ազատագրուած նոր երկիր մը վայելելու եւ շահագործելու համար աշխարհի ամեն մէկ կողմերէն դաղթականներու շարքեր պիտի երկարին դէպի երկրագունդին այդ մասը, ու այն ատեն կը վախնամ թէ կեանքի կրօնին դիմադրելու համար կազմ ու պատրաստ չի պիտի կրնանք ըլլալ, եւ թերեւս — վստահօրէն եթէ օր առաջ չի սթափինք ու փոխենք մեր ուղղութիւնը — օտարներ զարձակ պիտի ըլլան երկրին իրական տէրերը:

Հիւանդութեանց շարքին՝ մասնաւորապէս նկատի առնելով վեներական ախտեր, որոնք սերնդագործութեան հետ ամենէն մօտ եւ աւելի կապակցութիւն կ'ունենան, կ'ուզեմ կոչ ընել մեր բոլոր կազմակերպեալ մարմիններու որպէսզի իրենց ներկայ գործունէութեանց սահմանէն անդին անցնելով, գէթ անգամ մը հոգատար ըլլան իրենց հեռուորդներու առողջութեան, լուսաւորեն անոնց միտքերը գիտական պարզ ճշմարտութիւններով, եւ սորվեցնեն անոնց թէ ե՞նչպէս կրնան ազգային սուրբ պարտքը կատարել իրենց առողջութիւնը հաստատ պահելով: Երիտասարդ դասակարգը իր դիտակցութեան սահմանափակ շրջանակէն ներս մնալով կը հետեւի մոլութեանց եւ վաւաչոտ կիրքերու ճամբուն եւ արգիւնքը...: Բարոյապէս մեռեալ ու վատասերումի շառաւիղին վրայ դանուող Հայ երիտասարդութիւն մը, որուն միայն պիտի կրնանք նայիլ մեր պազայ սերունդը արտագրելու համար:

Ամերիկահայ բժիշկ դասակարգը որ դեռ անկազմ ու անկերպարան վիճակի մը մէջ է եւ գէթ երեւութապէս անտարբեր՝ չի պիտի կրնայ թօթափել այն ծանր պատասխանատուութիւնը, զոր ստանձնած է իր ուսերուն վրայ, որպէս Հայ բժիշկ: Հոս ու հոն նոր սերունդին միտքը առողջապահական նիւթերով զարգացընելու



Համար եղած ջանքեր խիստ տկար ու աննպաստ ըլլալով, չեն կրցած փափաքելի արդիւնքը չառաջ բերել: Իրր արդիւնք ծիակողմանի եւ անջատ գործունէութեանց, մեր կրօնաւորները եկեղեցիէն դուրս ժամանցներ մեղք նկատելով, կրթասէրներ օրն ի բուն գրքեր սերտելով, կուսակցականներ իրենց ժողովներէն դուրս ժամանակ չի տալով հետեւորդներու, Հայութիւնը տարած են աջնայիսի առողջական վիճակի մը մէջ, որ բացարձակապէս անկարելի է անոնց դէմ պաշտարիլ եւ կարենալ ապրիլ օտար եւ աւելի գօրաւոր ոչութեաւ հետ:

Միջին դասակարգի Ամերիկահայ գործաւորին կեանքը շատ պարզ է, օրն ի բուն գործարանի կեանքէն վերջ խաճուէներու կեդտոտ շրջանակը եւ գիշերներն ալ նեղ, փոքր ու աղտոտ սենեակներու մէջ: Այս բոլորը միացնելով անհող եւ անկանոն կերակուրներու, մարմնի եւ հազուադէպ աղտելութիւններուն՝ բնական է որ կատարեալ առողջութիւն մը գոյութիւն չունենար: Աւելցուր անոնց վրայ թոքախտի եւ մասնաւորապէս Փրանկախտի եւ ջերմամիզութեան ախտերը ու հոն միայն մեր ապագայ սերունդին գերեզմանը կրնանք տեսնել:

Համերոպական պատերազմը չի կրնար երկար տեսն տեւել եւ երբ անգամ մըն ալ զաղթական Հայերու կարաւաններ երկարին ճամբորդութեան ցուպը ձեռքին, ու այս անգամ դէպի Հայրենի օճախը, հո՛ն, ճիշդ հո՛ն է մեր նոր սերունդին սպառնացող վտանգը: Երկրի Հայ մտաւորականութիւնը թերեւ մարտիրոսուած ըլլալ ազատագրումի ճամբուն վրայ, ո՞վ է որ այն ժամանակ նոր սերունդին բարեբաւան Համար պիտի աշխատի, ովք՞եր են որ պիտի կըրնան հերոսաբար մասնանշել այն բոլոր ճամբորդները՝ որոնք իրենց հետ կը տանին ախտերու հաւաքածոներ, թունաւորելու Համար նոր սերունդը: Կարծես ժամանակն է այլեւս որ մեր բժիշկները ըսթափին իրենց անտարբերութենէն ու միացած սոյն լուծումը ներկայացրնեն ազգային պատասխանատու մարմիններու: Նոր երկրի մը նոր սերունդը պէտք չէ՛ ըլլալ փառասերներու փոհմակ մը, եթէ կուզենք շարունակել մեր գոյութիւնը: Մենք փափաքողներ չենք որ Ամերիկայի, ինչպէս նաեւ ուրիշ զաղթականութիւններու մէջ զանուած ախտաւորներ վերադառնալով Հայրենիք, իրենց զանազան ախտերովը վարակեն լաջորդական սերունդները: Երկիրը արդէն ունի բաւականաչափ տառապանք, եւ չարժեք անոնց վրայ աւելի մեծ ցաւեր աւելցնել: Ահաւասիկ գործ մը, սուրբ ու նուիրական, կրօնաւոր, կրթասէր, կուսակցական, հարուստ ու աղքատ մեծ ու պղտիկ եւ մասնաւորապէս բժիշկ դասակարգին Համար, պէտք է գործել եթէ կուզենք փափաքելի արդիւնքը ձեռք բերել ու տեսնել:

Վաղուան ազատ Հայրենիքին մէջ, բոլորովին առողջ ու ճաքուր նոր սերունդ մը, եւ թող ասիկա ըլլալ միակ ու կենդանի ապացուցը, մեր իրական ու անկեղծ ազգասիրութեան:

Տ. Ք. Մ. Ի. Հ. Ր. Ա. Ս. Վ. Ա. Ր. Ժ. Ա. Պ. Ե. Տ. Ե. Ա. Ն.



Վ. Ա. Հ. Ա. Ն. Յ. Մ. Օ. Ր. Լ. Ե. Ա. Ն.











քան գրաւեցին Քանառական շուկան մէկ կողմ քշելով Մեծն Բրիտանիային, և Նորվեգիան բաղադատմամբ իր ազգաբնակչութեան թիւին Մեծն Բրիտանիային աւելի վաճառականական նաւեր ունի: Այսպէսով միջազգային քաղաքականութիւնը, արդիական պայմաններու, ամբողջութեամբ կը տարբերուի Հինէն:

Միլիթարիզական երկիրներու մէջ սկսած է տարածուիլ սոսկալի նոր վարդապետութիւն մը որը միանգամ ընդ միշտ կը քաջքայէ միջազգային օրէնքի և բարոյականութեան Հիմքերը և կ'ըստպառնայ առաջնորդել ամբողջ աշխարհը իր նախապատմական բարբարոսային վիճակին, երբ ժամանակ ամէն ցեղ կաշխատէր իր հարեւան ցեղը փճացնել: Այդ վարդապետութեան Հեղինակն է բարոյապէս ու մտաւորապէս փճացած Գերման չաչունի ղինուորականին, Զօրավար Վօն Պէրնհարտի որը Հեղինակած է գերբ մը «Գերմանիան և յաջորդ պատերազմը» անունով, ինք կը խոստովանի թէ իր նոր վարդապետութիւնը Հիմնուած է Գերման Համայնարանի Հանրաժանութ պատմութեան փրօֆէսօր Heinrich von Treitsehkeի ուսուցած սկզբունքներուն վրայ: Աւելորդ չլինի թերեւս չիմարացած միտքի ու գինովացած ուղեղի արդիւնքը եղող վարդապետութեան մի քանի կարեւոր մասերը մէջ բերել, ընթերցողին աւելի որոշ ծանօթութիւն մը տալու Համար:

Վօն Պէրնհարտի կը գրէ. —

«Պատերազմը բարիքներու էն մեծն է և միակ անխուսափելի պայմանը քաղաքակրթութեան չտաճացումին: Նա կենսարանական մեծ անհրաժեշտութիւն մըն է:

«Պատերազմը իսպառ ջնջելու Համար եղած ջանքերը ոչ թէ միայն չիմարական են այլ մեծագոյն անբարոյութիւնը, խաղաղութիւնը կառաջնորդէ ժողովուրդ մը դէպի վատասեռում, ինչպէս բնութեան մէջ նոյնն է նաև մարդկային ցեղի մէջ, դոյութեան կոխը պէտք է մղուի որքան որ մարդ արարածը կապրի:

«Կառավարութեան բարոյական մեծագոյն պարտականութիւնն է աւելցնել իր ոչժը և ի պահանջել Հարկին նախաւունք ունի չաղթելով իրեն կցել սեէ երկրամաս:

«Կառավարութիւնը միակ դատաւորն է իր առած քայլերուն, ընդունուած իրաւունքներ օրինակի Համար դաշնագրութիւններ և այլն երբէք բացարձակ իրաւունքներ չեն կարող ըլլալ, անոնց ծագումը մարդկային է ուրեմն անկատար և փոփոխելի:

«Տկար ազգեր ապրելու միեւնոյն իրաւունքը չունին ինչպէս մեծ ազգեր:»

Ահա ասոնք են Գերմանական այդ սոսկալի դաւանանքին մէ քա-

նի նմոյշները որը կը ժխտէ պետութեան ունեցած պարտականութիւնը Հանդէպ մարդկութեան: Այս վարդապետութեան Համաձայն փոքր ազգեր միշտ ենթակայ են մեծ ազգերու քննաճանջին և ընդունուած միջազգային օրէնքներ ու դաշնագրութիւններ Հաւատար են գէրիջօի, չէ՞ որ անոնց ծագումը մարդկային է և ուրեմն անկատար և փոփոխելի: Այսպէս երկու ազգերու միջև եղած օրէնքները կը վերնան իսպառ և մերկ սուրը կը դառնայ աստուածը Զինուորական երկիրներու մէջ:

Պատմութիւնը կը չաչտարարէ թէ ոչ մէկ ազգ իրաւունք չպէտք է ունենայ աշխատելու իր քաղաքակրթութեան որոշ դրոշմը տարածել ուրիշ երկիրներու մէջ: Ամէն ազգ պէտք է ունենայ իր քաղաքակրթութեան ու դատախարակութեան որոշ սխթմը: Վատասեռում միտքերն են որ միայն կը շփոթեն խոչորութիւնը մեծութեան հետ, խոչորութիւնը կը պատկանի մարմինին իսկ մեծութիւնը հոգիին: Փոքր ազգեր խեղապէս «Մեծ» են և ուրեմն ապրելու աւելի իրաւունք ունին քան խոչոր ազգեր: Ոչ ազգաբնակչութիւնը, ոչ երկրամասի ծաւալը, ոչ Հարստութիւնը և ոչ ալ ղինուորական ոչժը, չափանիշը չեն ազդի մը մեծութեան այլ Հապա բարձրագոյն նրկարագիրը, ու նախորդը բարիին, գեղեցիկին ու վեհին: Այս կարագիրը, ու նախորդը բարիին, գեղեցիկին ու վեհին: Այս անհեղինակէն փոքր ազգեր կը գերազանցեն մեծ կոչուած ազգերը: Երկրային աշխարհ երբէք չի չտաճցի իմեր պատերազմով, այլ Հապա, Ներկային աշխարհ երբէք չի չտաճցի իմեր պատերազմով, այլ Հապա, խորհուրդով, ուսմամբ ու շարունակական Համադորձակցութեամբ:

Ընդհանուր Համաշխարհային միութեան մը պէտքը չէ եղած այնքան Հրամայողական որքան ներկային, որովհետև ամբողջ աշխարհը կը լողայ արեան մէջ, քաջբացում է Միջազգային վաճառականութեան Հիմքերը: Ծառեր սկսած են Համոզուիլ թէ պէտք է միանգամ ընդ միշտ մարբել պատերազմներ չտաճ ըրեող ամէն պատճառ:

Պատերազմը կը դադրի դոյութիւն ունենալէ միայն այն ատեն երբ ղինուորը, ճնշուած դատախարկը ամէն երկրի մէջ գիտակցելով իր դատախարկի շահերուն վար կը դնէ իր դէմքերը ու կը Համախրմի ընկերվարական միջազգային կարմիր դրօշի տակ: Քափիթիարութիւնը շահագործելով ճնշուած ու գործաւոր դատախարկի աշխատանքը աւելի սպրանք է արտադրել և այդ սպառելու Համար նոր տանքը աւելի սպրանք է արտադրել և այդ կարելի է ձեռք բերել պատաղատ շուկաներու կը կարօտի և այդ կարելի է ձեռք բերել պատաղատ շուկաներով: Նա կը գորացնէ բանակն ու նաւային ոչժը նոյն այդ ճնշուած ժողովուրդի խնայած լուծանքով, անտեսելով Հայրենիքի Հարազատ դաւակներուն դատախարակութեան դորձը: Հետեւեալ ցանկը ցոյց կուտայ սրտշակի իւրաքանչիւր ազգի ծախսած ղրաման-



բուն քանակը բանակին ու ժողովուրդի կրթական գործին համար :

Կրթական նպատակի համար	Չինւորականութեան համար	
Անդլիա	\$1.00	\$4.25
Ճրանատ	1.00	4.80
Գերմանիա	1.00	2.57
Աւստրիա	1.00	4.80
Միացեալ Նահանգներ	1.00	1.25
Իտալիա	1.00	9.00
Յունաստան	1.00	5.00
Ռուսիա	1.00	12.00
Տանիմարքա	1.00	3.66
Շուէտիա	1.00	2.25
Պէլճիբա	1.00	2.00

